

Ռ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՍՈՎԵՏԱ-ՇՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԴԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԼՈՒՍԱԲԱԼՈՒՄԸ  
ՀԱՐԱԿԱԿԻՑ ՇՈՒՐՔ ԴԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵջ





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

СЕКТОР ВОСТОКОВЕДЕНИЯ

Р. Г. СААКЯН

АНТИНАУЧНОЕ ОСВЕЩЕНИЕ ИСТОРИИ СОВЕТСКО-  
ТУРЕЦКИХ ОТНОШЕНИЙ В СОВРЕМЕННОЙ  
ТУРЕЦКОЙ ИСТОРИОГРАФИИ

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

ЕРЕВАН

1964

9(47)

Ռ. Գ. ՍՍՀԱԿՅԱՆ

ԽՈՎԵՏԱ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՀԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՂՔ  
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵջ

1=/  
34816

H



Աշխատությունը նվիրված է հետպատերազմյան տարիներին Թուրքիայում, ինչպես և ԱՄՆ-ում լույս տեսած թուրք հեղինակների՝ պատմաբանների, քաղաքական, պետական ու ռազմական գործիչների այն աշխատությունների վերլուծությանը, որոնցում զգալի տեղ է հատկացված սովետա-թուրքական հարաբերությունների պատմության հարցերին:

Հրապարակված դիվանագիտական փաստաթղթերի, արխիվային և այլ նյութերի հիման վրա ցույց է տրվում, որ ժամանակակից թուրք պատմագրության մեջ սովետա-թուրքական հարաբերությունների պատմության հիմնական հարցերը լուսաբանվում են միտումնավոր ձևով, հակագիտական դրոֆերից, խեղաթյուրվում է Թուրքիայի նկատմամբ Սովետական Միության վարած քաղաքականությունը:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից Թուրքիայում պատմագրությունը, ինչպես և նախկինում, փաստորեն ամբողջովին պաշտոնական է։ Կապիտալիստական և ոչ մի երկրում պատմագրությունը չի կրում այնպիսի մինչև վերջը պաշտոնական բնույթ, ինչպես Թուրքիայում, որտեղ լույս տեսնող պատմագիտական ողջ գրականությունը սերտորեն առնչվում է կառավարող շրջանների վարած քաղաքականության հետ։ Հայտնի է, որ թուրքական պետության ղեկավար Քեմալ Աթաթյուրքի նախաձեռնությամբ և նրա անմիջական հսկողության տակ 1930-ական թվականներին ստեղծված «Թուրքիայի պատմությունը»՝ «Թարիհը»<sup>1</sup> հիմնականում կրկնում է Թուրքիայի ժողովրդականարապետական կուսակցության երկրորդ համագումարում (1927 թ. հոկտեմբերին) Քեմալի արտասանած ճառը<sup>2</sup>, որտեղ միտումնավոր կերպով անտեսված են բազմաթիվ պատմական փաստեր, իսկ բերված նյութը որոշակիորեն նպատակ է հետապնդում «Հիմնավորել» ու արդարացնել Թուրքական կառավարող շրջանների ներքին ու արտաքին քաղաքականությունը։ Քեմալական Թուրքիայի պաշտոնական այս առաջին հրատարակություններում անցկացվող ռասայական, մոլի շո-

<sup>1</sup> Տե՛ս՝ Տարի, IV. Türkiye Cumhuriyeti, İstanbul, 1934.

<sup>2</sup> Nutuk. Gazi Mustafa Kemal tarafından Gümhuriyet Halk Fırkasının 15—20 Teşrinievvel 1927 tarihleri arasında toplanan İkinci Büyük Kongresinde söylenmiştir. Cilt I, 1919. Cilt II, 1920—1927. Cilt III, Vestikalar. Հ-րդ հրատ. Kemal Atatürk. Nutuk. Cilt. I, 1919—1920. Cilt II, 1920—1927. Cilt III, Vesikalar. İstanbul, 1961. Դոււս. հրատ. Мустафа Кемаль, Путь новой Турции, 1919—1927, тт. I—IV. Соцэгиз, М., 1929—1934.

վինիստական գաղափարները՝ թուրք ազգի «առանձնահատուկ» դերի ընդգծումը, Թուրքիային հարևան մի շարք ժողովուրդների բազմադարյան պատմության նենգափոխումը, Թուրքերին որպես համաշխարհային քաղաքակրթության նախահայրերի ներկայացնելու տենդենցը, այս բոլորը իրենց արտահայտությունն են գտել նաև հետպատերազմյան տարիներին Թուրքիայում լույս տեսած պատմական ու քաղաքական գրականության մեջ: «Թարիհի» ողով գրված Թուրքական հանրապետության պատմության բազմաթիվ դասագրքերը, որոնք լույս են տեսել զերազանցապես 1948—1960 թվականներին, նույնպես կոչված են գունազարդելու, իդեալականացնելու Թուրքիայի պատմությունը, մինչև վերջը արդարացնելու երկրի ղեկավար շրջանների հետադիմական քաղաքականությունը:

Ժամանակակից թուրք պատմագրության հատկանշական կողմերից մեկը նրա բացահայտ նացիոնալիստական ուղղությունն է, նրա շովինիստական, պանթուրքական ոգին: Թուրքիայի հանրապետական շրջանի պատմությունը լուսաբանող գրեթե բոլոր աշխատություններում (հատկապես «Թուրքիայի պատմության ընկերության» հրատարակություններում) հարյուրավոր էջեր, հատուկ գլուխներ են նվիրված պանթուրքիզմի գովքին, նրա «կենսունակությանն» ու «պատմական դիրին»:

Թուրքիայի պատմությամբ գրաղվող արևմուտքի և, հատկապես, ԱՄՆ-ի բուրժուական հեղինակները ևս հատուկ ուշադրություն են դարձնում պանթուրքիզմի գաղափարախոսությանը և Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ նրա խաղացած դերին: Եվ դա պատճական չէ: Հիմնականում հակասովետական բովանդակություն պարունակող պանթուրքիզմը ԱՄՆ-ի ղեկավար շրջանների կողմից դիտվում է, որպես հակասովետական ազրեսիայի հրահրման կարևորագույն միջոցներից մեկը: Տակավին վերջերս, ԱՄՆ-ի արտաքին ագրեսիվ քաղաքականության ամենահետևողական պաշտպաններից մեկի՝ Մենդերեսի կառավարության թույլտվությամբ,

ՍՍՌՄ-ից տերիտորիաներ հավշտակելու նշանաբանով պանթուրքական համաժողովներ էին գումարվում:

Պանթուրքիզմը լայն տարածում ունի նաև ներկայիս Թուրքիայում, Բայար-Մենդերեսի խմբի քաղաքական կրախից հետո: Այսպես, հզմիրում լույս տեսնող «Աղալեթ» («Արդարություն») թերթը 1964 թվականի փետրվարի համարներից մեկում կոչ էր անում «ազատազրել» Ղրիմը, Թուրքմենիան, Աղբքաջանը և մի քանի այլ սովետական հանրապետություններ: Իսկ Անկարայում հրատարակված «Իթիլ-Օրալի պրոբլեմը և սովետական իմպերիալիզմը» խորագիրը կրող գրքում, որը պատկանում է թուրք ժուռնալիստ Ալի Աքըշի գրքին, հեղինակը հարց է բարձրացնում, թե արդյո՞ք Իթիլից (այսինքն Վոլգայից—Ռ. Ս.) այն կողմն ընկած հողերը պետք է պատկանեն Սովետական Միությանը և գալիս այն եղակացության, որ ժամանակն է «ազատազրել» այդ տերիտորիաները և դրանք վերադարձնել երբեմնի Օսմանյան կայսրությանը<sup>3</sup>:

Ահա, օրինակ, ինչպես է զնահատում պանթուրքիզմի դերն անցյալում և ապագայի նրա հեռանկարները ամերիկյան գնդապետ Հոստլերը՝ իր ամբողջովին թուրքասիրական ոգով գրված «Թուրքիզմը և Սովետները» վերնագիրը կրող գրքի առաջանում:

«Թուրքական հանրապետության մեջ,—գրում է նա, — նացիոնալիզմը կազմում է նրա ստրուկտուրայի, կառուցվածքի և ընթացիկ քաղաքականության հատկանշական դիմք: Պատերազմի և հեղափոխական վերափոխումների ժամանակ, 20-րդ դարում, թուրքական քաղաքականությունը պատմականորեն ընթացել է պանթուրքիզմի ուղղությամբ: Այն երիտթուրքերի քաղաքականությունն էր առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ և 1917 թվականի ոռոսական հեղափոխությունից հետո, ենվեր փաշայի քաղաքականությունը՝ 1921—22 թվականներին թուրքեստանում նրա ձեռնարկած

<sup>3</sup> Տե՛ս „Литературная газета“, 13.II. 1964.

ավանտյուրայի շրջանում: Նույն տեսնգները նկատելի դարձան Թուրքիայում 1941—43 թթ.<sup>4</sup> Սովետական Միության վրա գերմանացիների հարձակման ժամանակ:

«Վերը բերված փաստերը,—շարունակում է Հեղինակը,— հաստատում են այն պնդումը, որ երրորդ համաշխարհային պատերազմի ծագման, կամ սառը պատերազմի ինտենսիվացման, կամ էլ ՍՍՌՄ-ում ներքին խռովությունների դեպքում, որոնք կարող են առաջ բերել սովետական պօտության մասնատում, թուրքական նացիոնալիզմը (հատկապես թուրքական նացիոնալիզմի պանթուրքական տարատեսակը) կունենա իր ազգեցությունը Թուրքական հանրապետության քաղաքականության և Սովետական Միությունում բնակվող քաղաքականապես զարգացած թուրքալեզու ժողովուրդների գործողությունների վրա»<sup>4</sup>:

Թուրք պատմագրության մեջ աշքի է զարնում նրա հակասովետական, թշնամական ոգին և սրա հետ կապված պատմական այն փաստերի նենգափոխումը, որոնք թեկուզ ամենանվազ չափով կարող են վեր հանել Սովետական Միության իրական, ճշմարտացի քաղաքականությունը արևելքի երկրուների, մասնավորապես Թուրքիայի նկատմամբ:

Թուրք հեղինակները՝ պատմաբանները, պետական ու ուղղմական գործիչները, մամուլի տեսաբանները իրենց գըրքերում թաքցնում են ընթերցողներից բոլոր այն փաստերը, որոնք վերաբերում են Թուրքիայի ազգային-ազատագրական պատերազմի տարիներին Սովետական Ռուսաստանի կողմից թուրք ժողովրդին ցույց տրված նյութական ու բարոյական մեծ օգնությանը, որը կարևորագույն գործոն հանդիսացավ թուրք ժողովրդի հակաիմպերիալիստական պայքարի հաղթանակի համար: Իսկ այդ օգնության մասին հիշատակող հեղինակները հալածվում են թուրքական կառավարության կողմից: Այսպես, 1952 թվականին Անկարայի համալսարանի մի խումբ առաջադեմ պրոֆեսորներ դատի տրվեցին լոկ այն բա-

<sup>4</sup> Charles Warren Hostler, *The Turkism and the Soviets*. London, 1957, p. 3,

նի համար, որ նրանք իրենց դասախոսություններում հիշատակել էին ազգային-ազատազրական պայքարի տարիներին Սովետական Ռուսաստանի կողմից Թուրքիային ցուց տրված օգնության մասին<sup>5</sup>:

Վերջին ժամանակներս թուրքական մամուլի էջերում հանդես եկած առանձին ժուռնալիստներ բավականին համարձակ ձեռվ քննադատում են կառավարող շրջանների կողմից նախկինում ու ներկայումս տարվող այն կուրսը, որը նպատակ ունի հասարակայնությունից թաքցնել ճշմարտությունը սովետական երկրի մասին: Այսպես, թուրք ժուռնալիստ Մհեմադ Քեմալը «Վաթան» թերթում գետեղված «Դժվարություններ՝ արտաքին քաղաքականության զարգացման մեջ» վերնագրով հոդվածում գրում է հետևյալը.

«Պաշտոնական պրոպագանդան, որը մեծ ժախսեր է պահանջում, ավելի քան 30-ամյա մի ժամանակաշրջանի ընթացքում ամեն կերպ ձգտում է թույլ չտալ մեր մամուլում կոնկրետ տեղեկություններ՝ Սովետական Ռուսաստանի մասին: Այդպիսի տեղեկություններ ստանալու ցանկությունը նրանց կողմից դիտվում է գրեթե որպես կոմունիզմի տարածում թուրքիայում»<sup>6</sup>:

Թուրք պատմագրության մեջ վերջին շրջանում նկատելի է մի այլ տեղենց, որը նույնպես ընդգծում է թուրք պատմաբանների աշխատությունների հակասովետական ուղղվածությունը: Դա թուրք հեղինակների գործերի հրատարակումն է Ամերիկայի Միացյալ Նահանգներում, մի երկրում, որը գլխավորում է իմպերիալիստական լագերը և հակասովետական ողջ գաղափարախոսությունը: Այս հանգամանքը ևս իր կնիքն է զնում թուրք հեղինակների աշխատությունների ուղղության վրա:

Այսպիսով, ժամանակակից թուրք պատմագրության մեջ գերիշող ազգատյաց, ուսաւյական ու շուրջինիստական դա-

<sup>5</sup> Տ. Կраткие сообщения Института востоковедения, 1952, IV, стр. 66.

<sup>6</sup> „Vatan“, 4.II. 1963.

Դափարները, որոնք նա ժառանգել է սուլթանական պատմագրությունից, հնարավորություն չեն տալիս զիտական անաշոռությամբ հետազոտելու Թուրքիայի պատմության հետ կապված հարցերը, այդ թվում և սովետա-թուրքական հարաբերությունները, որոնց լուսաբանումը ժամանակակից թուրք հեղինակների կողմից, ինչպես ցուց կտրվի ստորև, ընթանում է միանգամայն սխալ, արատավոր ուղիղով։ Հասկանալի է, որ պանթուրքական ու հակասովետական զաղափարախոսությամբ զինված թուրք պատմագրությունը ամենափին էլ չի ձգտում որևէ կերպ նպաստելու Սովետական Միության ու Թուրքիայի միջև բարիդրացիական հարաբերություններ հաստատելու խնդրին, այլ, ընդհակառակը, խանգարում է այդ նպատակի իրականացմանը։ Թուրք ժողովրդի և, հատկապես, երիտասարդ սերնդի մեջ սերմանելով հակասովետական ազրեսիվ գաղափարներ, փորձելով նրան գալթակղեցնել տերիտորիալ ձեռքբերումների և այդ ճանապարհով մեծ, շատ ընդարձակ «Հայրենիքի» Թուրանի ստեղծման հետանկարներով, թուրք պատմագրությունը միաժամանակ անզնահատելի ծառայություն է մատուցում Ամերիկայի Միացյալ Նահանգների ուազմատենչ ու հետադիմական շրջաններին, որոնք Թուրքիան դիտում են, որպես հակասովետական ազրեսիայի ամենակարեւոր հենակետը՝ ամբողջ Արևելքում։

Ուստի, թուրք պատմագրության սնանկ ու հակագիտական ուղղության վերհանումն ու մերկացումը մեր օրերում հրատապ անհրաժեշտություն է, ունի ակտուալ քաղաքական նշանակություն։

Զեռնարկելով առաջադրված խնդրին, հեղինակը հավակնություն չունի ընդգրկելու սովետա-թուրքական հարաբերությունների շուրջ կեսդարյա պատմության տարբեր ժամանակահատվածների հետ առնչվող բոլոր հարցերը, այլ միայն հույս է տածում, որ սույն աշխատությունը ինչ-որ շափով կարող է նպաստել սովետա-թուրքական հարաբերությունների գիտական, ճշմարտացի պատմության ստեղծմանը, որ տակավին օրակարգի հարց է մնում։

ՍՈՎԵՏԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՍԿՋԲՆԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋՄՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՀԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո ընդունված առաջին իսկ դեկրետներում ամենայն պարզությամբ ու հստակությամբ շարադրված էին սովետական կառավարության արտաքին քաղաքականության վեհ սկզբունքները՝ մեծ ու փոքր բոլոր ժողովուրդների իրավահավասարության ձանաշում միջազգային կյանքում, ազգերի ինքնորոշման իրավունքի հարգում, ուրիշ երկրների ներքին գործերին միջամտելու դատապարտում, տարրեր հասարակական կարգ ունեցող պետությունների միջև խաղաղ գոյակցության ձանաշում և այլն:

Հայտնի է, թե ամբողջ աշխարհում ինչպիսի հզոր արձագանք գտան սովետական արտաքին քաղաքականության՝ պատմությանը մինչ այդ անծանոթ սկզբունքները։ Սովետական կառավարության առաջին արտաքին քաղաքական ելույթները՝ 1917 թվականի նոյեմբերի 8-ին ընդունված Հաշտության մասին դեկրետը, Արևելքի աշխատավոր մուսուլմաններին ուղղված ժողովուրդների 1917 թվականի դեկտեմբերի 3-ի Դիմումը մեծագույն ազգեցություն ունեցան Արևելքի ճնշված ու կեղեքված ժողովուրդների գիտակցության վրա և հզոր խթան հանդիսացան նրանց ազատազրական պայքարի համար։

«Խուսաստանի և Արևելքի բոլոր աշխատավոր մուսուլմաններին» դիմումի մեջ ազգարարվում էր, որ սովետական կառավարությունը վճռականորեն հրաժարվում է Արևելքի

երկրների նկատմամբ ցարիզմի վարած զալթողական քաղաքականությունից և, մասնավորապես, Թուրքիայի բաժանման վերաբերյալ գաղտնի պայմանագրերից:

«Մենք հայտարարում ենք,—ասվում էր Դիմումի մեջ,—որ Կոստանդնուպոլիսը գրավելու մասին տապալված ցարի գաղտնի պայմանագրերը, որոնք հաստատվել էին տապալված կերենսկու կողմից, այժմ պատառությամբ ու ոչնչացված են; Ռուսաստանի հանրապետությունը և նրա կառավարությունը՝ ժողովրդական Կոմիսարների Սրվետը, ուրիշի հողերը զավթելու դեմ են: Կոստանդնուպոլիսը պետք է մնա մուսուլմանների ձեռքում»<sup>1</sup>:

Հոկտեմբերյան հեղափոխության անմիջական ազդեցության ներք Արևելքի երկրներում ծավալված ազգային-ազատագրական շարժումների արտահայտություններից մեկն էլ անգլո-Հունական ինտերվենցիայի դեմ Թուրքիայում ծավալված հակաիմպերիալիստական պայքարն էր, որը, ինչպես հայտնի է, ավարտվեց թուրք ժողովրդի հաղթանակով: Գաղտնիք չէ նաև, թե այդ հաղթանակն ապահովելու գործում ինչպիսի կարևոր դեր խաղաց նորաստեղծ սովորական պետության բարոյական, նյութական ու ռազմական մեծ օգնությունը:

1920 թ. ապրիլին Անկարայում գումարված Թուրքիայի Ազգային մեծ ժողովի առաջին արտաքին քաղաքական ակտը դա ժողովի անունից նրա նախագահ Մուստաֆա Քեմալ-փաշայի ապրիլի 26-ին՝ սովորական կառավարության ղեկավար Վ. Ի. Լենինին ուղարկած նամակն էր: Հիշյալ նամակում քեմալական կառավարությունն առաջարկում էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ, համատեղ հանդես գալ իմպերիալիզմի դեմ և, միաժամանակ, Սովորական Ռուսաստանին խնդրում էր օգնել թուրք ժողովը դին՝ նրա հակաիմպերիալիստական պայքարում:

<sup>1</sup> „Документы внешней политики СССР“, т. I, Госполитиздат, 1957, стр. 35.

Պատասխանելով Քեմալի նամակին, Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Վ. Զիշերինը 1920 թ. հունիսի 3-ի նոտայում հայտնում էր, որ սովետական կառավարությունը գոհունակությամբ ընդունում է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի առաջարկը և պատրաստ է անմիջապես հաստատել դիվանագիտական ու հյուպատուական հարաբերություններ<sup>2</sup>:

Սովետական Ռուսաստանի ու Քեմալական Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ավելի կարևոր նշանակություն ուներ վերջինիս համար, որովհետև Անկարայի կառավարության միջազգային և ներքին գրությունը 1920 թվականի գարնանը և ամռանը շատ ծանր էր: 1920 թվականի ապրիլին կայացած Սան-Ռեմոյի կոնֆերանսում դաշնակից տերությունները մշակեցին Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության պայմանագրի նախագիծը: Ֆրանսիան համաձայնվում էր պաշտպանել Անգլիայի մերձավորարևելյան քաղաքականությունը: Երկրի ներսում տեղի ունեցան մի շարք ապստամբություններ քեմալականների դեմ, հարձակման անցավ այսպես կոչված «խալիֆաթի բանակը»: Միևնույն ժամանակ, հունական զորքերը 1920 թ. հունիսին ձեռնարկելով մեծ առաջխաղացում Անատոլիայում ու Թրակիայում գրավեցին Աղրիանապոլիսը, Բրուսան, Բալքանիաը, Էրեզլին, Թեքիրդաղը, Ուշարը և մի քանի այլ քաղաքները: 1920 թվականի օգոստոսի 10-ին մովլթանական կառավարությունը հարկադրված էր Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և մյուս տերությունների հետ ստորագրել Սկրի դաշնագիրը, որով Արևելյան Թրակիան Աղրիանապոլսի հետ, ինչպես նաև Խզմիրի շրջանը, անցնում էին Հունաստանին, Մոսուլը՝ Անգլիային, սիրիական սահմանին հարող տերիտորիան՝ Ֆրանսիային և այլն: Կապիտուլյացիաների ոեժիմը մնում էր անձեռնմխելի, նեղուցները տրվում էին միջազգային հանձնաժողովի կառավարմանը՝ համարվելով բաց բոլոր երկրների

<sup>2</sup> Մանքամասը տե՛ս նույն տեղում, հ. 3, էջ 555:

առետրական և ուսպմական նավերի համար, ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմի ժամանակ, Թուրքիային արգելվում էր կոնցեսիաներ տալ առանց դաշնակիցների հատուկ ֆինանսական հանձնաժողովի թուլավության և այլն:

Հասկանալի է, որ նման պայմաններում, երբ Թուրքիան լրիվ մեկուսացված էր և պետականությունը կորցնելու վտանգի առջև կանգնած, Սովետական Ռուսաստանի հետ դիվանագիտական կապեր հաստատելու հնարավորությունն իսկ նրա համար բարոյական մեծ աջակցություն էր:

Ինչպես է լուսաբանվում սովետա-թուրքական հարաբերությունների հաստատման ժամանակաշրջանի պատմությունը թուրք հեղինակների կողմից:

Պետք է ասել, որ պատմության կեղծարարությունը ըսկըսվում է հենց այստեղից: Նենգափոխելով փաստերը, պատմական իրականությունը, անտեսելով այն ժամանակ ստեղծված իրադրությունը և վերոհիշյալ դիվանագիտական փաստաթղթերը, թուրք պատմաբանները գործն այնպես են ներկայացնում, թե իրը միայն Սովետական Ռուսաստանն էր ձգտում դիվանագիտական հարաբերություններ և բարեկամական կապեր հաստատել թուրքիայի հետ, իսկ վերջինիս մեծագույն շահագրգովածության մասին ոչ մի խոսք չեն ասում: Այսպես, օրինակ, Քեմալ Քարփաթը Թուրքիայի քաղաքականությանը նվիրված գրքում (որը լույս է տեսել 1959 թվականին Վաշինգտոնում) անդրադառնալով Մուստաֆա Քեմալի վերոհիշյալ նամակին, գրում է.

«Սովետները տեսան, թե ինչպիսի օգուտ կարող են ստանալ Թուրքիայի հետ համագործակցելուց: Հարավում բարեկամական Թուրքիայի առկայությունը կուժեղացներ Սովետների հարավային թեր»<sup>3</sup>: Իսկ թե ի՞նչ նշանակություն ուներ Թուրքիայի համար ազգային-ազատագրական պայքարի դրժամիկին այդ պահին ցարական Ռուսաստանի փոխարեն հյուսում բարեկամական Սովետական Ռուսաստանի առկայությունը, հեղինակը լուսաբան է մատնում:

<sup>3</sup> Kemal H. Karpat, Turkey's politics. Washington, 1959, p. 349.

Պատմական իրականությունը ավելի կոպիտ ձևով է խեղաթյուրում Սովետական Ռուսաստանում քեմալական Թուրքիայի առաջին գեսպան, գեներալ Ալի Ֆուաթ Զեբեսոյը՝ իր «Մուկովյան հուշերում»:

Խոսկով 1920 թվականի օգոստոսի Մոսկվայի բանակցությունների<sup>4</sup> ժամանակ Լենինի կողմից թուրքական պատվիրակության ընդունելության մասին, նա գրում է, որ բոլշևիկյան ղեկավարները ցարական կառավարության քաղաքականությունից շտարբերվող իմալերիալիստական քաղաքականություն էին վարում<sup>5</sup>:

Ցարունակելով կեղծել պատմական իրականությունը, հեղինակը հանգում է այն եղբակացության, որ 1921 թվականի սկզբին ռուսական խիստ կարիք ունեին Թուրքիայի օգնության՝ երկրի ներսում իրենց իշխանությունը ամրապնդելու համար<sup>6</sup>:

Նման միտումնավոր, անհիմն պնդումները նպատակ ունեն ժխտել Թուրքիայի շահագրգովածությունը Սովետական Ռուսաստանի հետ բարեկամական հարաբերություններ հաստատելու գործում, նսեմացնել վերջինիս կողմից թուրք ժողովրդին ցույց տրված օգնության և աշակեցության կարևոր նշանակությունը: Բավական է ամենահամառոտ կերպով վերհիշել պատմական կոնկրետ իրադրությունը, համոզվելու հա-

<sup>4</sup> Թուրք հեղինակները միաբերան գտնում են, որ Սովետական Ռուսաստանի կառավարության գրաված գիրքի պատճառով էր, որ կողմերը համաձայնության չեկան և բանակցությունները ձախողվեցին: Իրականում, սակայն, պայմանագրի ստորագրմանը խոչընդոտեցին քեմալականները, որոնք այդ ժամանակ պատրաստվում էին և շուտով՝ 1920 թ. աշնանը փորձեցին իրականացնել Անդրկովկասի և, գլխավորապես, Հայաստանի նկատմամբ ծրագրած իրենց գավթողական պլանները: Enver Behnan Şapolyo, Türkiye Cumhuriyeti tarihi, İstanbul, 1954, s. 78; Prof. Enver Ziya Karal, Türkiye Cumhuriyeti tarihi, İstanbul, 1958, s. 109; Mükerrrem Kâmil Su ve Kâmil Su, Türkiye Cumhuriyeti tarihi, İstanbul, 1957, s. 78.

<sup>5</sup> General Ali Fuat Cebesoy, Moskova hatıraları (21.XI. 1920—2.VI.1922). İstanbul, 1955, s. 74.

<sup>6</sup> Նույն աեղում, էջ 114—115:

մար այն բանում, որ քեմալական Թուրքիան բոլորովին ի վիճակի չէր օգնել Ռուսաստանին և այն էլ՝ նրա «ներքին դրությունն ամրապնդելու» գործում:

1921 թվականի սկզբներին Սովետական Ռուսաստանը հիմնականում ավարտել էր Հակահեղափոխական ներքին ուժերի ու ինտերվենտների ջախջախումը և հաղթանակած դուրս եկել քաղաքացիական պատերազմից: Սովետական իշխանությունը հաստատվել էր ամբողջ Անդրկովկասում: Միջազգային ասպարեզում Ռուսաստանն արդեն ձեռք էր բերել նկատելի հաջողություններ. դիվանագիտական հարաբերություններ էր հաստատել իրեն հարեան երկրների (այդ թվում հարավային հարեանների՝ Իրանի ու Ավղանստանի) հետ, բանակցությունների մեջ մտել արևմտյան մի շարք տերությունների հետ: Հաշվի նստելով իրականության հետ, կապիտալիստական աշխարհի ամենազորեղ տերությունը՝ Անգլիան ստիպված եղավ փոխել իր քաղաքականությունը Սովետական Ռուսաստանի նկատմամբ. 1921 թվականի մարտի 16-ին Լոնդոնում ստորագրվեց անգլո-սովետական առևտրական պայմանագիրը և այլն:

Ինչ վերաբերում է Թուրքիային, վերջինս իրոք շատ գըժվարին վիճակում էր գտնվում և դեռ պետք է կենաց ու մահվան կոիկ մղեր՝ իր ինքնուրույն գոյության իրավունքը նըվաճելու համար: Այս շրջանում Թուրքիան կատարյալ մեկուսացման մեջ էր, իսկ Անգլիայի կողմից լավ զինված հովական բանակը ընդհուպ մոտեցել էր Անկարային: Կառավարական հիմնարկների մի մասը տեղափոխվել էր Կայսերի: Քեմալականների ներքին վիճակը բավականին խախուտ էր, հատկապես Ազգային մեծ ժողովում, որտեղ հոգեորականությունը հարձակումներ էր սկսել Քեմալի դեմ՝ վերջինիս մեղադրելով «շարիաթի» խախումների մեջ:

Ինչպես տեսնում ենք, փաստերը վկայում են այն մասին, որ այդ շրջանում ինքը Թուրքիան աշակցության կարիք ուներ՝ իր ներքին ու միջազգային դրությունն ամրապնդելու և հակամպերիալիստական պայքարը շարունակելու համար:

Հարկ է նշել, որ Հարցին նման միակողմանի գնահատական է տրվել տակավին 1930-ական թվականների սկզբին լույս տեսած Թուրքիայի առաջին պաշտոնական հրատարակության՝ «Թարթհի» էջերում, որտեղ միանգամայն անտեսվում է Թուրքիայի շահագրգովածությունը սովետական օգնության մեջ. «Հենց Սովետական Հանրապետության ընդհանուր քաղաքականությունը, նրա շահերն էին պահանջում նպաստել և նույնիսկ աշակցություն ցուց տալ ազատության և անկախության համար մղվող թուրքական շարժմանը»<sup>7</sup>:

Քննարկենք այս հարցը հանգամանորեն, քանի որ վերոշիցալ փաստարկը, որ իր միայն Սովետական Ռուսաստանն էր ձգտում մերձենալ Թուրքիայի հետ և «շահագրգոված էր» վերջինիս օգնել, հաճախ է մեջ բերվում 1921 թվականի մարտի 16-ի սովետա-թուրքական պայմանագրի կապակցությամբ:

**D 34816**

Ինչպես հայտնի է, Սովետական Ռուսաստանի և քեմայական Թուրքիայի միջև կնքված առաջին քաղաքական պայմանագրիը 1921 թվականի մարտի 16-ին Սոսկվայում ստուգարված պայմանագրին էր: Անհերքելի է այն վճռական նըշանակությունը, որ հիշյալ պայմանագրին ունեցավ թուրքագործքի ազգային-ազատագրական պայքարի ընթացքի համար, նրա հաղթական վախճանի գործում: Սովետական Ռուսաստանի հետ կնքված այդ պայմանագրիը քեմալական Թուրքիային դուրս բերեց արտաքին քաղաքական լրիվ մեկուսացումից: Այն իսկապես առաջին իրավահավասար պայմանագրին էր, որ երեսից Թուրքիան կնքել էր որևէ մեծ տերության հետ: Մոսկվայի պայմանագրով Սովետական Ռուսաստանի կառավարությունը մեծահոգի կերպով հրաժարվեց բոլոր այն հատուկ արտոնություններից ու կապիտուլյացիաներից, որոնցից օգտվում էր ցարական Ռուսաստանը (Հոդված 7-րդ): Պայմանագրի 6-րդ հոդվածի համաձայն Սովետական Ռուսաստանի կառավարությունը Թուրքիային ազատում էր գրա-

<sup>7</sup> Tarih, cilt IV. Türkiye Cumhuriyeti. İstanbul, 1934, s. 61.

մական և բոլոր այն պարտավորություններից, որոնք բխում էին Թուրքիայի և ցարական կառավարության միջև նախկինում կնքված միջազգային փաստաթղթերից<sup>8</sup>: Բացի այդ, ընդուաշելով քեմալական ղեկավարների խնդրանքներին, սովետական կառավարությունը համաձայնվեց Թուրքիային անվերադարձ կերպով հատկացնել տաս միլիոն ռուփու շափով ֆինանսական օգնություն, ինչպես նաև զենք<sup>9</sup>:

Իր ժամանակին թուրք զեկավար գործիչները, քեմալական մամուլը բարձր գնահատական են տվել 1921 թվականի պայմանագրին, ընդգծել են Թուրքիայի համար նրա ունիցած առաջնակարգ նշանակությունը: Մուստաֆա Քեմալը 1921 թվականի հունիսի 27-ին արտասանած իր հառում հետեւյալ կերպ է գնահատել հիշյալ պայմանագրիը. «1921 թվականի մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրիը զերծ է ինքնակալությանը և արիստոկրատիային հատուկ իմպերիալիստական բոլոր ձգտումներից... Ինչ վերաբերում է մեզ, մենք այդ պայմանագրին մեծ նշանակություն ենք տալիս...»<sup>10</sup>: Պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո թուրքիայից ստացված հաղորդումներից մեկում ասվում էր, որ սովորական պայմանագրիը մեծ խանդավառություն է առաջ բերել ամբողջ երկրում: «Ընդհանուրի ուշագրությունը կենտրոնացված է ուսու-թուրքական պայմանագրի վրա: Պաշտոնական և մասնավոր հրատարակությունները միահամուռ կերպով ողջունում են այդ պայմանագրիը և հավատացնում, որ միայն դրանումն է թուրք ժողովրդի փրկությունը»<sup>11</sup>:

<sup>8</sup> Տե՛ս „Документы внешней политики СССР“, т. III, стр. 599.

<sup>9</sup> 1921 թվականի ընթացքում Սովետական Ռուսաստանի կառավարությունը Թուրքիային տրամադրեց 33.275 հրացան, 57.986.000 ֆարմիլա, 327 զնդացիր, 54 թնդանոթ, 129.479 արկ, 1500 սուր, 20 հազար հակադաղ և մեծ քանակությամբ ռազմական այլ սպառագինություն, այդ թվում ծովային երկու կործանիչ: Տե՛ս „Документы внешней политики СССР“, т. II, стр. 675.

<sup>10</sup> АВП СССР, ф. 132, оп. 4, п. 66, д. 65, лл. 13—15. Տե՛ս „Международная жизнь“, 1963, № 11, стр. 150.

<sup>11</sup> Տե՛ս „Правда“, 29.III. 1921.

Այժմ, մի քանի տասնամյակ անց, թուրք պատմաբանները, անտեսելով փաստերը, ժխտում են պայմանագրի կարելվորությունը Թուրքիայի համար, ուրանում են բարոյական, նյութական ու ռազմական այն մեծ օգնությունը, որ Թուրքիան ստացավ ազգային-ազատագրական պայքարի ամենածանր օրերին:

Սակայն ոչ բոլոր թուրք հեղինակներն են գնում փաստերի բացահայտ նենգափոխման ուղիով։ Կան պատմաբաններ, որոնք «յուրովի» են աղավաղում պատմական իրականությունը, այն է՝ խոստովանելով հանդերձ Սովետական Ռուսաստանի կողմից Թուրքիային ցուց տրված օգնությունը, ժխտում են այդ օգնության անշահախնդիր բնույթը, փորձում են այն կապել Սովետաների «հեռուն գնացող իմպերիալիստական նպատակների», Թուրքիայում «կոմունիզմ հաստատելու» երևակայական պլանների հետ և այլն։ Այսպես, վերջերս լույս տեսած «Թուրքիայի քաղաքական պատմությունը 1700-ից մինչև 1958 թվականը» վերնագրով գրքում, որը, ի դեպ, գրված է հատուկ նպատակով՝ Թուրքիայի գինվորական զրարցներից մեկի ունկնդիրների համար, հեղինակը՝ Թահսին Յունալը գրում է, որ «Երբ ոռւսները Թուրքիայի ազգային շարժմանը օգնություն խոստացան և այդ առաջարկը հետագայում մի քանի անգամ կրկնեցին», Մուստաֆա Քեմալը երկար մտածեց, թե նրանք ի՞նչ նպատակով են օգնություն առաջարկում։ «Նպատակը մեկն էր,—եզրակացնում է հեղինակը, —կրկնել Հունֆիար-Իսքելեսիի պայմանագիրը, այսինքն՝ թուրքերին վերցնել իրենց հովանավորության տակ և կոմունիզմը տարածել Անատոլիայում»<sup>12</sup>:

Նախ, ոչ թե Սովետական Ռուսաստանն է իր օգնությունը Թուրքիայի վզին փաթաթել, ինչպես փորձում է ներկայացնել հեղինակը, այլ ինքը՝ Անկարայի կառավարությունն է Մուստաֆա Քեմալի և մյուս թուրք ղեկավար գործիչների բերանով բազմիցս օգնություն խնդրել Սովետական Ռուսաս-

<sup>12</sup> Tahsin Ünal, 1700 den 1958'e kadar Türk siyasi tarih. Ankara, 1953, s. 260.

տանից: Աշա թե ինչ էր գրում Քեմալը 1920 թվականի ապրիլի 26-ին Վ. Ի. Լենինին ուղարկած նամակում.

«...Մենք Սովետական Ռուսաստանից խնդրում ենք առաջնահերթ օգնության կարգով մեզ տրամադրել հինգ միլիոն թուրքական լիրա ոսկով, զենք ու ռազմամթերք, որոնց շափերը կորոշվեն բանակցությունների ժամանակ և, բացի դրանից, ռազմա-տեխնիկական որոշ միջոցներ ու սանիտարական ապրանքներ, ինչպես նաև պարեն՝ մեր զորքերի համար»<sup>13</sup>: Վ. Ի. Լենինին հասցեագրված Քեմալի մի այլ նամակում (1922 թվականի ապրիլի 10-ին) վերջինս, նշելով այն փաստը, որ «Ռուսաստանը Թուրքիային բազմիցս օգնություն է ցուց տվել», ՌՍՖՍՌ կառավարությունից խնդրում էր աջակցել դժվարին կացության մեջ գտնվող Թուրքիային: «Ես հույս եմ տածում, — գրում էր Քեմալը, — որ այդ օգնությունը մեզ չի մերժվի և ցուց կտրվի՝ հաշվի առնելով այն իրադրությունը, որի մեջ մենք ներկայումս գտնվում ենք»<sup>14</sup>:

Իսկ քանի՛ անգամ է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը իր արտաքին գործերի մինիստրի միջոցով օգնություն խնդրել: Բերենք մի օրինակ: Տակավին Մոսկվայի պայմանագրի ստորագրումից առաջ, 1921 թվականի հունվարի 30-ի նոտայում Անկարայի կառավարությունը, ընդունելով, որ իր միջազգային դրությունը մնում է անփոփոխ, այսինքն առաջիկ պես ծանր, խնդրում էր Սովետական Ռուսաստանից «տրամադրել բոլոր հնարավոր նյութական միջոցները, որպեսզի Թուրքիան կարողանա ետ մղել իր գեմ ձեռնարկվող նոր հարձակումները»<sup>15</sup>:

Սակայն, ինչո՞ւ, այնուամենայնիվ, Թուրքիան ընդունեց Սովետական Ռուսաստանի «օգնությունը, չէ՛ որ, ինչպես փորձում է «հաստատել» հեղինակը, «Մուստաֆա Քեմալը

<sup>13</sup> АВП СССР, ф. 132, оп. 3, п. 2, д. 1, л. 11. Տես „Международная жизнь“, 1963, № 11, стр. 148.

<sup>14</sup> АВП СССР, ф. 04, оп. 39, п. 233, д. 53025, л. 1. Տես „Международная жизнь“, 1963, № 11, стр. 157.

<sup>15</sup> „Документы внешней политики СССР“, т. III, стр. 470.

այն կարծիքին էր, թե իբր «կոմունիստական Ռուսաստանը ցարական Ռուսաստանի նման իմպերիալիստ է»։ Այստեղ արդեն հեղինակը ստիպված է խոստովանել, որ Թուրքիան այդ քայլին դիմեց ազատագրական պայքարը շահելու համար անհրաժեշտ դրամը և սպառազինությունը ապահովելու նպատակով<sup>16</sup>։

Քեմալի կարծիքներին այդքան մոտիկից ծանոթ թուրք հեղինակին պետք է, որ հայտնի լինեին տարրեր ժամանակներում Քեմալի արված հայտարարությունները՝ սովետական օգնության վերաբերյալ։ Այսպես, սովետական դիվանագիտական ներկայացուցիչների հետ 1922 թվականին տեղի ունեցած գրուցի ժամանակ նա հետեւյալ գնահատականն է տվել. «Մենք խորապես երախտապարտ ենք ձեր կառավարությանը և ինքինին նրանց անշահախնդրության համար։ Դուք օգնուեք, չպահանջելով մեր կողմից հնազանդություն, չկապելով այդ օգնությունը որևէ կարգի քաղաքական պարտավորությունների հետ»<sup>17</sup> (ընդգծումը մերն է—Ռ. Ս.):

Սովետական Ռուսաստանի կողմից Թուրքիային ցուց տրված նյութական ու բարոյական անշահախնդիր օգնությունն այնքան ակնհայտ է, անժխտելի, որ այդ մասին չեն կարող շխոստովանել նույնիսկ ՍՍՌՄ-ի նկատմամբ թշնամաբար տրամադրված օտարերկրյա հեղինակները՝ հակասովետական ողով գրված իրենց աշխատություններում։ Այդ մասին կարելի է բազմաթիվ փաստեր բերել, սկսած անգլիական հայտնի պատմաբան Ա. Թոյնբիից, սակայն բավարարվենք միայն երեքով։ Ամերիկյան պրոֆեսոր է. Բիսբին, որը երկար տարիներ գասավանդել է Թուրքիայում և քաջ ծանոթ է այդ երկրի պատմությանը, գրում է. «Սկսած 1920 թվականից, Սովետական Ռուսաստանը Թուրքիայի միակ բարեկամն էր, միակ երկիրը, որը դրամով և սպառազինությամբ օգնեց Թուրքական ազգային-ազատագրական պատերազ-

<sup>16</sup> Tahsin Ünal, s. 261.

<sup>17</sup> Տե՛ս „Международная жизнь“, 1960, № 8, стр. 116.

մին»<sup>18</sup>: Անգլիական Հեղինակներից մեկը Թուրքիային նվիրված իր աշխատության մեջ խռովով ազգային-պատագրական շարժման գծվարին օրերի մասին, նշում է հետեւյալը. «Ամբողջ այս ժամանակամիջոցում... Ռուսաստանը միակ ազգն էր, որն օգնեց ու քաջալերեց Թուրքիային»<sup>19</sup>: Իսկ Զորջ Վաշինգտոնի անվան համալսարանի դասախոս Վիլյամ Սպենսերը, ընդգծելով այն փաստը, որ սովետական պետությունը ռառաջինն էր, որը ճանաչեց Քեմալի կառավարությունը, որպես Թուրքիայի միակ օրինական իշխանություն», ավելացնում է. «Սովետական Ռուսաստանից ստացված նյութերը օգնեցին ազգայնականներին հույների դեմ պայքարելու»<sup>20</sup>:

Ընդհանրապես, պետք է նշել, որ 1921 թվականի պայմանագրի կնքման հարցում Թուրքիայի շահագրգովածությունն անտեսելու և, ընդհակառակը, Սովետական Ռուսաստանի համար նրա ունեցած նշանակությունը գերազնահատելու ձգումն այնքան մեծ է թուրք հեղինակների մոտ, որ նրանք կանգ չեն առնում պատմական փաստերը բացահայտորեն կեղծելու առաջ: Պրոֆեսոր Էնվեր Զիյա Կարալը, օրինակ, պնդում է, որ Սովետական Ռուսաստանի կառավարությունը շեր շտապում 1921 թ. պայմանագիրը կնքել, սպասելով իրադարձությունների զարգացմանը՝ Ազգային մեծ ժողովի ուժերի վերաբերյալ պատկերացում ստանալու համար:

«1921 թվականի Մոսկվայի պայմանագիրը,—գրում է այնուհետև Կարալը,—ստորագրվեց արևելքում հայերի, իսկ արևմուտքում՝ Խոնոյուի առաջին ճակատամարտում հույների դեմ տարած հաղթանակների, ինչպես նաև Անտանտի պետությունների կողմից Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությանը կոնդոնի կոնֆերանս հրավիրելու հետևանքով»<sup>21</sup>:

<sup>18</sup> Bisbee Eleanor, The New Turks, Pioneers of the Republic, 1920—1950. Philadelphia, 1951, p. 158.

<sup>19</sup> Irfan Orga, Phoenix ascendant. The Rise of modern Turkey. London, 1958, p. 98.

<sup>20</sup> William Sreser, Political Evolution in the Middle East. Philadelphia and New York, 1962, p. 62.

<sup>21</sup> Prof. Enver Ziya Karal, Türkiye Cumhuriyeti tarihi (1918—1953). İstanbul, 1958, s. 109.

Այսպես, ուրեմն, հեղինակի կարծիքով, վերոհիշյալ գեպ-քերի ազդեցության տակ էր, որ Սովետական Ռուսաստանի կառավարությունը կնքեց 1921 թվականի մարտի 16-ի պայմանագիրը: Թվում է, թե թուրքական հանրապետության պատմության մասնագետ թուրք պրոֆեսորին պետք է, որ ծանոթ լինելին այդ պատմության սկզբնավորման շրջանի հայտնի փաստերը: Մնում է եղբակացնել միայն, որ նա գիտակցորեն սրբագրում է պատմական փաստերը, աղավաղում դրանք՝ ժառայիցնելով իր նպատակներին: Իսկ նպատակն ավելի քան պարզ է. ամեն կերպ գունազարդել թուրքիայում ստեղծված դրությունը, նույնիսկ այն շրջանում նրան ներկայացնել մեծ ուժի տեր մի պետություն, որի հետ հաշվի էին նստում արևմուտքի հզոր տերությունները և դրանով իսկ ժխտել Մոսկվայի պայմանագրի նշանակությունը թուրքիայի համար, ցույց տալ, որ թուրքիան դրա կարիքը չուներ:

Անդրադառնանը հեղինակի «փաստարկներին» առանձին-առանձին: Մի՞թե Հայաստանի դեմ թուրքիայի տարած հաղթանակը Անկարայի կառավարության ուժի ապացույց էր: Այդպիսի հաղթանակի դժվար չէր հասնել այն բանից հետո, եթե քեմալական կառավարությունը 1920 թ. ամռան սկզբներից իր զորքերի հիմնական մասը կենտրոնացրել էր ոչ թե Արևմտյան ճակատում, ուր հույները խոշոր առաջխաղացում էին սկսել, այլ արևելքում՝ Հայաստանի սահմանի մոտ՝ նրա վրա հարձակվելու նպատակով: Բավական է նշել, որ Արևմտյան ճակատում հույների դեմ քեմալականները դուրս էին բերել ընդամենը 15 հազարանոց զորք, իսկ Արևելյան ճակատում՝ 50 հազարից պես լի: Հայտնի է, որ քեմալականները հենց սկզբից որոշակի պլաններ ունեին ամբողջ Արևելյան Հայաստանը նվաճելու վերաբերյալ և հարմար առիթի էին սպասում՝ դրանք կյանքում իրականացնելու համար<sup>22</sup>: Անկասկած է նաև, որ դաշնակցական թույլ պետությունը, իր

<sup>22</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Ե. Ղ. Սարգսյան, Ռ. Գ. Սահակյան, Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենդափոխումը թուրք պատմագրության մեջ, Հայպետհրատ, Երևան, 1963, էջ 41—55:

Քայլքայված տնտեսությամբ և փոքրաթիվ բանակով, չէր կարող իրական սպառնալիք ներկայացնել Թուրքիային։ Քեմաւականներին խիստ ձեռնտու էր և նրանք Հապաղեցին Օլթիւ շրջանում ստեղծված միջադեպը որպես պատրվակ օգտագործել։ Հայաստանի դեմ իրենց ծրագրած հարձակումը սկսելու համար։ 1920 թ. աշնանը ձեռնարկված քեմալական ազդեսիստն նոր ժանր աղետներ բերեց Հայ ժողովրդին և հանգեցրեց նոր տերիտորիալ հափշտակումների։ Եվ այդ արշավանքը պրոֆեսոր Կարալը ցինիկորեն համարում է թուրք ժողովրդի ազատագրական պայքարի առաջին հաղթանակը, եզրակացնելով, որ Հայաստանի տերիտորիայի նվաճումը, խաղաղ բնակչության ոչնչացումը և թուրքական զավթիչների գաղանությունները («Հայերի դեմ տարած հաղթանակները», — բայց հեղինակի արտահայտության) «երկրում առկա ազգային շարժման ծավալման և ազգային կովի հնարավորությունների մեծացման պատճառ հանդիսացան»<sup>23</sup>։

Կամ մյուս փաստարկը։ Արդյո՞ք 1921 թվականի հունվարին տեղի ունեցած ինոնյուի առաջին ճակատամարտով որոշվեց Թուրքիայի ազգային-ազատագրական պայքարի հաղթական ելքը։ Իհարկե, ոչ։ Թուրքական զորքերին դժվարությամբ հաջողվեց միայն կասեցնել հունական բանակի հարձակումը, սակայն նրանք առաջ շշարժվեցին։ Հունները այդ պարությունից հետո էլ մեծ ուժ էին ներկայացնում և նկատելի հաջողություններ ունեցան, ընդհուպ մոտենալով Անկարային։ Հայտնի է, որ Մոսկվայի պայմանագրի ստորագրումից միայն կես տարի հետո՝ 1921 թվականի սեպտեմբերին թուրքական բանակը Քեմալի ղեկավարությամբ հույներին պարտության մատնեց Սակարյայի ճակատամարտում, իսկ դրանից հետո էլ պահանջվեց մեկ տարի՝ Դոմլուփնարի մոտ հույների դեմ վճռական հաղթանակ տանելու համար։

Ինչ վերաբերում է կոնդոնի կոնֆերանսին, թուրք պրոֆեսորի կողմից գիտական անբարեխղճություն է այդ կոնֆե-

<sup>23</sup> Prof. Enver Ziya Karal, s. 98.

րանսի մսուին հիշատակելը՝ ոչ մի խոսք չասելով նրա խայ-  
տառակ կրախի մասին:

Ինչպես հայտնի է, 1921 թվականի փետրվար-մարտ ա-  
միսներին կայացած լոնդոնի կոնֆերանսում քննարկվեց նաև  
մերձավորարելլան հարցը՝ Սերի պայմանագիրը վերանա-  
յելու նպատակով: Ճիշտ է, քեմալականները մեծ հույսեր էին  
կապում այդ կոնֆերանսի հետ, կարծում էին, որ Անգլիան  
պատրաստ է որոշ զիջումներ անել, բայց բանակցությունները  
նրանց ոչ մի արդյունք չտվեցին: Անկարայի կառավարության  
պատվիրակության կողմից Սերի դաշնագիրը վերանայելու  
մասին փետրվարի 24-ին ներկայացրած կոնկրետ առաջար-  
կությունները՝ Եվրոպայում 1913 թվականի սահմանի վերա-  
կանոնում, իզմիրի շրջանից հունական գորքերի էվակուացիա,  
Հայաստանի հետ սահմանի անցկացումն ըստ Ալբանիանդրա-  
պոլի պայմանագրի, այս բոլորը անգլիական պահպանողա-  
կան «Թայմս» թերթն իր 1921 թ. փետրվարի 25-ի համարում  
անվանեց «անհեթիթ պահանջներ»: Ինքը Մուստաֆա Քեմալը  
հետագայում խոստովանել է, որ լոնդոնի կոնֆերանսի ժա-  
մանակ Անկարայի կառավարության պատվիրակությունը հա-  
մոզվեց, որ «Անտանտի տերությունները ցանկանում էին  
Սերի դաշնագրի անարգելք կիրառումը»<sup>24</sup>:

Լոնդոնի կոնֆերանսի ժամանակ գաղտնի բանակցու-  
թյունների մեջ մտնելով Անգլիայի պրեմիեր-մինիստր Լոյդ  
Ջորջի հետ, քեմալական պատվիրակության ղեկավար և ար-  
տաքին գործերի մինիստր Բեքիր Սամի-Բեյը առաջարկել էր  
Թուրքիան ընդգրկել Հակասովետական բլոկի մեջ՝ նրան միաց-  
նելով Հյուսիսային Կովկասի լեռնականներին և այդպիսով  
ստեղծելով Ֆեդերալ բուժերային պետություն՝ Արևմուտքի ու  
Սովետական Ռուսաստանի միջև<sup>25</sup>: Բայց քանի որ լոնդոնի  
կոնֆերանսում Թուրքիայի հետապնդած նպատակները ձա-  
խողվեցին, իսկ բանակցությունների գաղտնիքը անսպասելիո-

<sup>24</sup> Мустафа Кемаль, Путь новой Турции, т. III, стр. 200.

<sup>25</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Halide Edip, The Turkish Ordeal. New York—London, 1928, p. 255.

ուն հրապարակվեց, թուրքիայի Ազգային մեծ ժողովը ստիպված էր արտաքին գործերի մինիստրի պաշտոնից ազատել Բերի Սամի-բեյին: Հենց լոնդոնի կոնֆերանսի անհաջողությունը, որը պարզորոշ դարձավ արդեն մարտի սկզբին, ինչպես նաև հունական զորքերի նոր հարձակման վտանգը, քեմալականներին ստիպեցին ավելի լուրջ մոտենալ Մոսկվայում ընթացող սովետա-թուրքական բանակցություններին, մասնավորապես հրաժարվել Ալեքսանդրապոլի պայմանագիրն ուժի մեջ թողնելու իրենց համառ պահանջից, որից հետո միայն կողմերը համաձայնության եկան և 1921 թ. մարտի 16-ին սովետա-թուրքական առաջին պայմանագիրը ստորագրվեց:

Որ թուրք պատմաբանները միանդամայն անհիմն կերպով են Սովետական Ռուսաստանի կառավարությանը մեղադրում Մոսկվայի պայմանագրի ստորագրումը ձգձգելու մեջ, երեսում է նաև մի շարք փաստաթղթերից, որոնք վկայում են այն մասին, որ տակավին 1920 թվականի նոյեմբերի վերջերին Սովետական Ռուսաստանի կառավարությունը սկզբունքորեն վճռել էր Մոսկվայում կոնֆերանս հրավիրելու հարցը՝ սովետա-թուրքական պայմանագիր կնքելու համար: Այսպես, 1920 թվականի նոյեմբերի 27-ին Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ կայացած ՌԿ(Բ)Պ Կենտկոմի քաղբյուրոյի նիստում քննարկելով Անդրկովկասում ստեղծված իրադրությունը, որոշում ընդունվեց երկրամասում անհապաղ խաղաղություն ապահովելու անհրաժեշտության մասին<sup>26</sup>: 1920 թվականի դեկտեմբերի 1-ին Հայաստանում ՌՍՖՍՌ ներկայացուցիչ Բ. Վ. Լեգրանին ուղարկած հեռագրում Զիշերինը հանձնարարում էր բացատրել Անկարայի կառավարությանը ՌՍՖՍՌ կառավարության տեսակետը Անդրկովկասին վերաբերող մի շարք հարցերում:

«Մեզ ցանկալի է իմանալ, — գրում էր Զիշերինը, — ստացե՞ւ է արդյոք թուրքական կառավարությունը պայմանագրի

<sup>26</sup> Տե՛ս «Ленинский сборник», XXXVI, стр. 144.

Նախագիծը<sup>27</sup>, որը մշակվել էր մեր կողմից թեքիր Սամի-բեյի հետ միասին և որը ուղարկվել է Անկարա՝ Յուսուֆ Քեմալի միջոցով։ Արդյոք թուրքական կառավարությունը այն ընդունելի է համարում և ինչպես է վերաբերվում այն կետերին, որոնք տարակարծություն էին առաջ բերել մեր և թեքիր Սամիի միջև, որոնց վերաբերյալ վերջինս չէր կարող որոշում դնդանել»<sup>28</sup>։ Իսկ 1920 թվականի գեկտեմբերի 9-ի նոտայում, ողջունելով սովետա-թուրքական կոնֆերանսի հրավիրումը, ՌՍՖՍՌ կառավարությունն անհրաժեշտ էր գտնում Ադրեշանի և Հայաստանի սովետական կառավարությունների ներկայացուցիչների մասնակցությունը այդ կոնֆերանսում, քանի որ այնուղղ «վճռվելու հն տերիտորիալ և ուրիշ հարցեր՝ այդ պետությունների և Թուրքիայի ու Ռուսաստանի միջև»։ Նոտայի վերջում ընդգծվում էր կոնֆերանսի հրավիրումն արագացնելու անհրաժեշտությունը<sup>29</sup>։

Ինչպես տեսնում ենք, թուրք հեղինակների այն պնդումը, թե իր Սովետական Ռուսաստանի կառավարությունը ձրգագում էր Մոսկվայի պայմանագրի ստորագրումը, մինչև վերջը անհրաժեշտությունը<sup>29</sup>։

1921 թվականի պայմանագրի կնքման շարժառիթներին էնվեր Զիյա Կարալի տված «բացատրությունը» գրեթե նույնությամբ կրկնում է Ալթեմուր Քըլըզը ԱՄՆ-ում հրատարակված «Թուրքիան և աշխարհը» վերնագիրը կրող իր գրքում։ «1921 թվականի պայմանագիրը, — գրում է նա, — ստորագրվեց այն բանից հետո, երբ հայերի, իսկ այնուհետև հույների դեմ՝ Արևմտյան ճակատում ձեռք բերված հաղթանակները համոզեցին սովետական ղեկավարներին, որ թուրքական աստղը վերընթաց շարժման մեջ է»<sup>30</sup>։

<sup>27</sup> Խոսքը 1920 թվականի օգոստոսի 24-ին նախնական ստորագրած սովետա-թուրքական պայմանագրի մասին էր։

<sup>28</sup> „Документы внешней политики СССР“, т. III, стр. 364—365.

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 371։

<sup>30</sup> Altemur Kilic, Turkey and the World. Washington, 1959, p. 39.

Թուրք պատմաբանների աշխատություններում խեղաթյուրված է նաև Անդրկովկասի սովետական հանրապետությունների ու Թուրքիայի միջև 1921 թվականի հոկտեմբերի 13-ին Կարսում կնքված պայմանագրի պատմությունը:

Եթե պրոֆեսոր Կարալը Մոսկվայի պայմանագրի ուշացման պատճառը կապում է Սովետական Ռուսաստանի վարածքաղաքականության հետ, ապա Մյուրքերեմ Քյամիլ Սուն և Քյամիլ Սուն «Թուրքական հանրապետության պատմության» իրենց դասագրքում Կարսի պայմանագրի ստորագրումը ձըդագելու մեջ նույնպես մեղադրում են Սովետական Ռուսաստանի կառավարությանը:

«Ռուսաները, որպես միջնորդ հանդես դալուց առաջ, — գրում են հեղինակները, — ցանկանում են ճանաչել թուրքական կառավարության ուժը և այդ իսկ պատճառով որոշ ժամանակ սպասեցին: Սակարյայի մոտ թուրքական բանակի տարած մեծ հաղթանակից հետո միայն նրանք հավատացին թուրքական նոր կառավարության հզորությանը և կովկասյան հանրապետությունների ու մեր միջև ստորագրվող պայմանագրի միջնորդ դարձան»<sup>31</sup>:

Թուրք հեղինակների այս տեսակետի հիմքում ևս ընկած է «Թարիհ»-ի գնահատականը:

«Մոսկվայի կառավարությունը», — գրված է «Թարիհ»-ում, — որոշ ժամանակ ձգձգում է Կարսի պայմանագրի ստորագրումը և Սակարյա գետի վրա թուրքերի տարած հաղթանակից հետո միայն ստորագրեց այդ պայմանագրիը»<sup>32</sup>:

Նման փաստագործ պնդումները նպատակ ունեն դիտավորյալ կերպով սքողել պատմական փաստերը: Իրականում, հենց Անկարայի կառավարությունն էր ձգձգում անդրկովկասյան հանրապետությունների հետ պայմանագրի կընքումը: Այդ մասին անվիճելիորեն վկայում են ինչպես բազ-

<sup>31</sup> Mükerrerem Kâmil Su ve Kâmil Su, Türkiye Cumhuriyeti tarihi, İstanbul, 1957, s. 85.

<sup>32</sup> Tarih, cilt IV, s. 103—104.

մաթիվ արխիվային նյութերը, այնպիս էլ վերջերս հրապարակված փաստաթղթերը:

1921 թվականի մարտի 16-ի պայմանագրով նախատեսվում էր կարգավորել և նորմալացնել Թուրքիայի և անդրկովկասյան սովետական Հանրապետությունների փոխհարաբերությունները՝ նրանց միջև պայմանագիր կնքելով: Հակառակ այդ բանին, Անկարայի կառավարությունը տարբեր պատրիվակներով ուշացնում ու հետաձգում է բանակցությունները անդրկովկասյան Հանրապետությունների հետ: Դրա պատճառն այն էր, որ թեև Մոսկվայի պայմանագրով Ալեքսանդրապոլի կողոպտիչ պայմանագիրը շեղյալ էր հայտարարվել, թուրքական կառավարող շրջանները տակավին չէին հրաժարվել այն կյանքում կիրառելու իրենց մտադրությունից: Դա պարզորոշ երևում է նաև Մոսկվայում Անկարայի կառավարության դեսպան Ալի Ֆուլադին ուղարկած Զիշերինի 1921 թվականի ապրիլի 8-ի նոտարից, որտեղ ասված էր հետևյալը: «Զեմ կարող Զեղնից թաքցնել այն խոր զարմանքը, որ ինձ մոտ առաջ եկավ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության ուազմական մինիստր Ֆեզզի փաշայի հայտարարության հետ ծանոթանալիս:

Թազմական մինիստրը հայտարարում է, մասնավորապես, որ Արևելյան ուազմաճակատի թուրքական բանակը, մընալով Կովկասում՝ պետք է այնտեղ կատարի հավասարակշռող տարրի գեր: Ինձ համար դժվար է հասկանալ, թե Արևելյան ուազմաճակատի թուրքական բանակը ուրիշ ի՞նչ ուազմական ուժի դեմ է նախատեսված հանդես գալու՝ Կովկասում ուժերի հավասարակշռության պահպանման համար: Քանի որ այդ շրջանում մյուս միակ ուազմական ուժը սովետական հանրապետությունների միավորված կարմիր բանակն է, հետևություն է արվում, որ ուազմական մինիստրի կարծիքով, թուրքական բանակը պետք է հանդիսանա մի տարր, որը թշնամի է սովետական ուժերին և նպատակ ունի հակակշիռ ուժ հանդիսանալու նրանց ուազմական հզորությանը»: Այնուհետև նոտարյում ամենայն որոշակիությամբ

նշվում էր, որ թուրքական մինիստրի այդ հայտարարությունը մինչև վերջը հակասում է Մոսկվայի պայմանագրի բովանդակությանը և հանդիսանում է սովետական զինված ուժերի դեմ ուղղված թշնամական մի ակտ։ Անդրադառնալով Ֆեվրա- ֆիաշայի հայտարարության այն մասին, որտեղ աստվում էր, որ թուրքական զորքերի օկուպացիայի տակ գտնվող Հայաստանի տերիտորիան էվակուացիայի կենթարկվի Ալեքսանդրապոլի պայմանագիրը գործողության մեջ զնելուց հետո միայն, Մովետական Ռուսաստանի կառավարությունը վճռականորեն հայտարարում էր Հիշյալ նոտայում, որ «Ալեքսանդրապոլի պայմանագրի կիրառումը ցանկանալը հավասարագոր է Մոսկվայի պայմանագրի վերացմանը»<sup>33</sup>։

Սակայն այս նոտայից հետո էլ թուրքական կառավարությունը քողարկված ձևով շարունակում էր կառչել Ալեքսանդրապոլի պայմանագրից։

Մոսկվայի կոնֆերանսի ժամանակ կողմերը պայմանավորվեցին, որ թուրքական պատվիրակությունը Թուրքիա վերադառնալու ճանապարհին կանգ կառնի Թիֆլիսում և անդը կովկասյան երեք հանրապետությունների հետ պայմանագիր կկնքի։ Սակայն, եթե ապրիլի կեսերին թուրքական պատվիրակությունը եկավ Անդրկովկաս, պատվիրակության զեկավար, արտաքին գործերի մինիստր Յուսուֆ Քեմալը անսպասելիորեն հայտարարեց, որ ինքը կարող է պայմանագիր կընքել միայն Վրաստանի և Աղրբեշանի հետ, իսկ Հայաստանի հետ բանակցություններ վարելու համար լիազորված չէ։ Դա էր պատճառը, որ անդրկովկասյան երեք հանրապետությունների ու Թուրքիայի միջև նախատեսվող կոնֆերանսը տեղի չունեցավ և պատվիրակությունը մեկնեց Անկարա։ Զնայած այն բանին, որ թուրքերն իրենք ձախողեցին անդրկովկասյան հանրապետությունների հետ պայմանագրի կնքումը, Անկարայի կառավարությունը բարդել Մովետական Ռուսաստանի և Անդրկովկասի

<sup>33</sup> „Документы внешней политики СССР“, т. IV, стр. 53—54.

սովետական Հանրապետությունների կառավարությունների՝ վրա՝ մեղադրելով նրանց Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածը<sup>34</sup> շիրագործելու մեջ։ Զիշերինի 1921 թվականի հուլիսի 6-ի պատասխան նոտայում որոշակիորեն ասվում էր, որ վերոհիշյալ 15-րդ հոդվածի կիրառումը խափանվեց միայն այն պատճառով, որ թուրքական պատվիրակությունն ինքը անհնարին դարձրեց պայմանագրի կնքումը անդրկովկասյան Հանրապետությունների ու Թուրքիայի միջև<sup>35</sup>:

Պետք է ասել, որ Մոսկվայի պայմանագրիը ստորագրելով, Անկարայի կառավարող շրջանները չհրաժարվեցին Արևմուտքի տերությունների հետ գործարքի մեջ մտնելու այն հակումներից, որոնք ի հայտ եկան տակավին 1920 թվականի աշնանը։ Փաստաթղթերը վկայում են, որ բուրժուա-ֆեոդալական ազգայնական շրջանների շահերն արտահայտող քիմալական կառավարությունը, որն իր գործունեության առաջին իսկ քայլերով որոշակիորեն դրսեորեց իր բացահայտ թշնամական վերաբերմունքը երկրի առաջադիմ ուժերի նկատմամբ, երբեք էլ անկեղծ ու հետևողականորեն լոյալ, բարեկամական քաղաքականություն չի վարել (և չէր էլ կարող վարել) սովետական երկրի հանդեպ։

Սովետական Ռուսաստանից ստանալով ուղղմական ու դրամական զգալի միջոցներ, որոնք այդ շրջանում այնքան հարկավոր էին հենց վերջինիս, քեմալականները պատրաստ էին հարմար ու ձեռնտու գործարքի դեպքում անմիջապես խզել կապերը սովետական երկրի հետ։ Այսպես, օրինակ, արխիվային մի փաստաթղթից պարզվում է, որ Մոսկվայի պայմանագրի ստորագրումից հետո շատ շանցած, 1921 թվա-

<sup>34</sup> 1921 թվականի մարտի 16-ի պայմանագրի 15-րդ հոդվածով՝ Սովետական Ռուսաստանի կառավարությունը պարտավորվում էր անհրաժեշտ քայլեր ձեռնարկել՝ անդրկովկասյան հանրապետություններին գերարերող պայմանագրի հոդվածները վերջիններիս կողմից ճանաչվելու համար։ Տե՛ս „Документы внешней политики СССР“, т. III, стр. 602.

<sup>35</sup> Նույն տեղում, հ. IV, էջ 169:

Հանի հունիսի 4-ին Անկարայում, Մուստաֆա Քեմալի նախագահությամբ տեղի էր ունեցել Կուվահի միլիյե (Ազգային ուժեր) կուսակցության նիստը, որտեղ մեծամասնության առաջարկությամբ ընդունվել էր Հետևյալ գաղտնի որոշումը.

«1 Կուվահի միլիյեի անդամներից կազմել մի հանձնաժողով, որը պետք է զբաղվի Սովետական Ռուսաստանի Հետ կապված բոլոր քաղաքական հարցերով:

2 Ընդունել, որ չնայած անհրաժեշտությանը, դաշինքը Սովետական Ռուսաստանի հետ խիստ վտանգավոր է և այդ կապակցությամբ խափանել Սովետական Ռուսաստանի բոլոր պաշտոնական ու ոչ պաշտոնական ներկայացուցիչների գործունեությունը Թուրքիայում:

3 Շարունակել բանակցությունները դաշնակիցների (Անտանտի) հետ և հաջողության դեպքում համաձայնության գալ՝ նույնիսկ Սովետական Ռուսաստանի հետ հարաբերությունները խզելու գնով:

4 Անմիջապես փակել այն հիմնարկները, ակումբներն ու գրադարանները, որտեղ հավաքվում են կոմունիստական կարգերին համակրող անձինք»<sup>36</sup>:

1921 թվականի մայիսի 15-ին ֆրանսիական «Թան» թերթը տպագրել էր թուրքական ազգային շարժման «ամենանշանավոր գործիչներից մեկի» հայտարարությունը, որտեղ, մասնավորապես, ասված էր հետևյալը.

«Թուրքերի ու բոլշևիկների միջև ներկայումս գոյություն ունեցող բարեկամական հարաբերությունները կարող են փոփոխվել՝ նայած թե վերջնականապես ինչպես կլուծվի թուրքական հարցը: Եթե թուրքերի ազգային պահանջները լրիվ բավարարվեն, նրանք կկարողանան զբաղվել կովկասյան հարցով, Աղրբեջանի, Դաղստանի ու Բաթումի հարցերով: Ճիշտ է, առայժմ մեր կառավարությունը հայտարարել է, որ

<sup>36</sup> Տե՛ս ԱՀԱՕՐ Ազեր. ССР, ֆ. 6с/28р, օպ. 1, եճ. քր. 47.

ինքը շահագրգոված չէ այդ հարցերում՝ վախենալով մեղադրվել պանթուրքիզմի մեջ...»<sup>37</sup>

Միայն հունիսի 14-ին ՌՍՖՍՌ արտաքին գործերի ժողկումատը ստացավ թուրքական դեսպան Ալի Ֆուադի հաղորդումն այն մասին, որ Անկարայի կառավարությունը համաձայն է պայմանագիր կնքել բոլոր երեք անդրկովկասյան հանրապետությունների հետ։ Սակայն դրանից հետո էլ կոնֆերանս գումարելու համար պահանջվեց շուրջ երեք ամիս։ Դրա պատճառը դարձյալ Անկարայի կառավարության գրաված գիրքն էր։

Կոնֆերանսը Կարսում հրավիրելու իր նախնական առաջարկությանը հակառակ<sup>38</sup>, թուրքական կառավարությունը հանդես եկավ Անկարայում հավաքվելու առաջարկով, որը միանգամայն աննպաստ էր անդրկովկասյան սովետական հանրապետությունների պատվիրակությունների համար՝ իրենց կառավարությունների հետ հաղորդակցություն պահպանելու տեսակետից։ Մերժելով այդ առաջարկը, Զիշերինը 1921 թվականի օգոստոսի 8-ի նոտայում ընդգծում էր նաև այն հանդամանքը, որ Անկարան գտնվում է պատերազմի թատերաբեմին շատ մոտ<sup>39</sup>, թուրքական կողմը, այնուհետև, նորից փորձեց պնդել իր առաջարկի վրա, բայց հաջողություն չունեցավ։

Ինչպես տեսնում ենք, փաստերն անվիճելիորեն հերքում են թուրք պատմաբանների այն պնդումը, թե իբր սովետական կողմն էր ձգձգում Կարսի պայմանագրի ստորագրումը։ Ընդհակառակը, Ալեքսանդրապոլի պայմանագրիը Սովետական Հայաստանին պարտադրելու թուրքական կառավարության փորձերն ի նկատի ունենալով, ՌՍՖՍՌ կառավարությունն ինքը շահագրգոված էր արագացնելու թուրքիայի

<sup>37</sup> Տե՛ս „Бюллетень народного комиссариата иностранных дел РСФСР“, 5 июля 1921 г., стр. 32.

<sup>38</sup> Այդ մասին տե՛ս „Документы внешней политики СССР“, т. IV, стр. 227, 249, 255, 287.

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 255։

և անդրկովկասյան հանրապետությունների միջև պայմանագրի ստորագրումը:

Նույնիսկ Կարսի կոնֆերանսի ընթացքում թուրքական պատվիրակությունը խարդախ բաղաքականություն էր գարում, փորձում էր երկարաձգել բանակցությունները: Անդրկովկասյան պատվիրակության անդամ Սովետական Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ա. Մուավյանը 1921 թ. հոկտեմբերի 5-ին Կարսից հաղորդում էր Հետեւյալը. «...Վստահելի աղբյուրներից եկող տեղեկությունների համաձայն, թուրքերը դիտավորյալ կերպով ձգձում են բանակցությունները՝ հույսեր կապելով ոռւս-լիճական ճրգնաժամի սրման հետ»<sup>40</sup>: Կարսի կոնֆերանսում ՌՍՖՍՌ կառավարության ներկայացուցիչ Յա. Գանեցին հոկտեմբերի 6-ին Զիշերինին ուղարկած իր հեռագրում նույնպես հայտնում էր այդ մասին. «Թուրքիս մոտ ստեղծվել է որոշակի տպավորություն, որ թուրքերը գիտակցորեն ձգձում են կոնֆերանսը: Քաղաքում լուրեր են շրջում, որ այսօր-վաղը պատերազմ կհայտարարվի լիճաստանին և մեզ որոշակիորեն հայտնի է, որ թուրքական պատվիրակությունը շարաշահում է այդ հանգամանքը»<sup>41</sup>:

Թուրք հեղինակների աշխատություններում խեղաթյուրված է նաև Կարսի կոնֆերանսի բանակցությունների ընթացքը, որի անաշառ շարադրանքն անխուսափելիորեն վեր կհա-

<sup>40</sup> ՀՍՍՌ հոկտեմբերյան ուսուլուցիւթիւնի և սոցիալիստական շինուարության կենտրոնական պետական արթիվ, Փ. 40/113, ց. 3, գ. 75, թ. 56:

<sup>41</sup> Նույն տեղում, թ. 50: Պետք է ասել, որ տակավին կոնֆերանսի բացման նախօրյակին, քեմալական կառավարությունը փորձեց շահատմի դիմել՝ հույս ունենալով այդ եղանակով Անդրկովկասի սովետական պատվիրակությանը զրգել զիջումներ անելու: Ա. Մուավյանը հոկտեմբերի 10-ին գրում էր Կարսից, որ Մուստաֆա Քեմալը Ազգային մեծ ժողովում 1921 թվականի սեպտեմբերի 20-ին աբտասանած էր ճառում ուղղակիորեն արտահայտվել է արտասահմանում Անտանտի միջնորդությամբ հաշտություն կնքելու հնարավորության օգուինը: Տե՛ս նույն տեղում, թ. 60:

ներ թուրքերի երկդիմի քաղաքականությունը ինչպես անդր-կովկասյան հանրապետությունների, այնպես էլ Սովետական Ռուսաստանի նկատմամբ: Թուրք պատմաբանները հայտարարում են, օրինակ, որ կոնֆերանսում արտասովոր ոշինչ տեղի շունցավ, որ բանակցությունները հարթ անցան: Այսպես, խոսելով Կարսի կոնֆերանսի մասին, Զերեսովը գրում է, որ «բանակցությունները նորմալ անցան, հայերը առաջ չքաշեցին սահմանի վերանայման ու ճշգրտման պահանջը»<sup>42</sup>: Այնինչ, կոնֆերանսի նիւտերի արձանագրություններից ու արխիվային փաստաթղթերից երևում է, որ բանակցությունները շափազանց սուր և լարված բնույթ էին կրում այն բացահայտ թշնամական դիրքի պատճառով, որ գրավել էր թուրքական պատվիրակությունը Սովետական Հայաստանի նկատմամբ:

Ինչպես նշվեց, թուրքերը պահանջում էին սեպարատ պայմանագրեր կնքել անդրկովկասյան հանրապետությունների հետ, որը նրանց հնարավորություն կտար միայնակ մնալ Սովետական Հայաստանի ներկայացուցիչների հետ և վերջիններիս թելադրել իրենց պայմանները, այսինքն պարտադրել Ալեքսանդրապոլի կողոպտիչ պայմանագիրը<sup>43</sup>: Արտասովոր էր թեկուզ այն, որ անդրկովկասյան հանրապետություն-

<sup>42</sup> General Ali Fuat Cebesoy, Moskova hatıraları, s. 259.

<sup>43</sup> Նորերս հրապարակված փաստաթղթերից երեսում է, որ քեմալական կառավարությունը կարսի պայմանագիրը ստորագրելուց հետո էլ հայաստանի հետ կնքված հաշտության պայմանագիրը էր համարում Ալեքսանդրապոլի գաշնագիրը և դեռ ինչ-որ հույսեր էը կապում այն վերակենդանացնելու հետ: Այսպիս 1923 թվականի օգոստոսի 13-ին թուրքական մեջլիսի նիստում արտասահմած իր ձառում Մռւստափա Քեմալը ասել էր: «Մենք սուսների հետ կնքեցինք բարեկամության պայմանագիրը, որն ուժի մեջ է ցայսօր: Այդ նույն հիմունքներով պայմանագրեր կնքվեցին Աւկրաինայի, Վրաստանի, Աղքաղանի ու Աղդամաստանի հետ: Արևելյան ճակատում տարած հաղրանակից հետո մենք հաշտություն կնքեցինք հայերի հետ (ընդգծումը մերն է—Ռ. Ս.): АВП СССР, ф. 132, оп. 8а, п. 70, д. 60, л. 66. Տե՛ս „Международная жизнь“, 1963, № 11, стр. 158.

ների պատվիրակությունը՝ միասնական պայմանագիր ստորագրելու վճռականությամբ գալով կոնֆերանս, նորից հանդիպեց սեպարատ պայմանագրեր կնքելու թուրքերի արդեն մերժված առաջարկությանը: Կոնֆերանսի առաջին նիստում թուրքական պատվիրակությունը հայտարարեց, որ ինքը ցանկանում է անդրկովկասյան հանրապետություններից յուրաքանչյուրի հետ առանձին պայմանագիր կնքել: Սակայն, թուրքերի այդ նպատակը շիրականացավ շնորհիվ անդրկովկասյան պատվիրակության գրաված համերաշխու ու վճռական դիրքի:

«Մեր պատվիրակությունը,—զրում է Գ. Կ. Օրջոնիկիձեն,—կատեղորիկ կերպով հայտարարեց թուրքերին, որ նա պահանջում է համատեղ բանակցություններ վարել անդրկովկասյան բոլոր հանրապետությունների հետ և միասնական հաշտության պայմանագիր կնքել... Սյապիսի պահանջի համար օրինական հիմքեր ներկայացնելու թուրքերի առաջարկին մեր պատվիրակությունը պատասխանեց, որ անդրկովկասյան պատվիրակությունը հանդես է գալիս, որպես անդրկովկասյան հանրապետությունների ֆեդերացիայի ներկայացուցիչ»<sup>44</sup>: Շարունակելով համառել, թուրքական պատվիրակությունը սեպական թուրքերի 30-ի նիստում հանդես եկավ մի պրովկացիոն հարցով՝ «ինչպիսի՞ փոխհարաբերությունների մեջ են գտնվում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունները»: Թուրքիայի արտաքին գործերի մինիստրին ուղղված 1921 թ. հոկտեմբերի 3-ի նոտայում Զիշերինը պաշտոնապես հայտարարեց, որ անդրկովկասյան հանրապետությունների կառավարությունները տեղյակ են պահել ՌՍՖՍՌ կառավարությանն այն մասին, որ նրանց միջև գոյություն ունի քաղաքական ու տնտեսական սերտ դաշինք և նրանց վերաբերող քաղաքական ու տնտեսական բոլոր հարցերը լուծվում են համատեղ<sup>45</sup>: Միայն դրանից հետո թուրքական պատվիրակությունը (որին գլխավորում էր մոլի շո-

<sup>44</sup> Г. К. Орджоникидзе, Избранные статьи и речи, М., 1939, стр. 177.

<sup>45</sup> „Документы внешней политики СССР“, т. IV, стр. 392.

Վինիստ-ջարդարար Քյազլմ Կարաբեքիր-փաշան) համաձայն-վեց միասնական պայմանագիր ստորագրել երեք սովետական հանրապետությունների՝ Աղբբեշանի, Հայաստանի և Վրաստանի հետ:

Կոնֆերանսի ժամանակ ուժեղ պայքար ծավալվեց Ալեքսանդրապոլի դեպոյի հարցի շուրջը։ Անդրկովկասյան պատվիրակությունը պահանջում էր ետ վերադարձնել քաղաքի օկուպացման ժամանակ կողոպտված ու արտահանված հըսկայական գույքը, իսկ թուրքական պատվիրակությունը նույնիսկ փորձում էր «ապացուցել», որ Թուրքիան օրինական իրավունք ունի այդ գույքն իրեն պահելու<sup>46</sup>։

Ինչ վերաբերում է սովետա-թուրքական սահմանի վերջնական ճշգրտման հարցին, այստեղ ևս թուրքական պատվիրակությունը հանդես բերեց իր անհաշտ, թշնամական վերաբերմունքը Սովետական Հայաստանի նկատմամբ։ Ճիշտ է, Կարսի կոնֆերանսում տիրիտորիալ հարցերն ըստ էության չքննարկվեցին, քանի որ նրանք իրենց արտահայտությունն էին գտել Մոսկվայի պայմանագրում, որի համաձայն, ՌՍՖՍՌ կառավարությունը, ստեղծված իրադրությունից ելնելով Կարսի մարզը, Արդահանը և Արդվինը զիշեց Թուրքիային։ Սակայն անդրկովկասյան պատվիրակությունը հանդես եկավ սովետա-թուրքական սահմանը մի փոքր շտկելու առաջարկվ, այն հաշվով, որ պատմական Անի քաղաքն ու նրա ավերակները անցնեն Սովետական Հայաստանին՝ որպես հայ ժողովրդի մշակույթի համար հսկայական արժեք ներկայացնող հուշարձաններ։ Թուրքական պատվիրակությունը հրաժարվեց ընդառաջ գնալ այդ խնդրանքին, թեև մինչ այդ Անկարայի կառավարությունը տվել էր իր համաձայնությունը Զանալով որևէ կերպ արդարացնել իր անբարյացակամ վարքագիծը, թուրքերը փորձեցին այն հիմնավորել նրանով, որ

<sup>46</sup> ՏԵ՛ս ՀՍՍՌ Հոկտեմբերյան ռեվուլյուցիայի և սոցիալիստական շինարարության կենտրոնական պետական արխիվ, ֆ. 40/113, ց. 3, գ. 75, թ. 59։

իրենք «չեն ցանկանում Մոսկվայի պայմանագրի համեմատ որևէ փոփոխություն մտցնել»: Կարաբերիր փաշան դեմագոգիկ կերպով հայտարարեց, որ նման փոփոխությունները «կարող են դժգոհություն առաջ բերել թուրք ազգաբնակչության մեջ»<sup>47:</sup>

Ընդհանրապես, Կարսի կոնֆերանսում քեմալականների բոնած անբարյացակամ, թշնամական դիրքը, անդրկովկասյան հանրապետությունների և, հատկապես, Սովետական Հայաստանի նկատմամբ նրանց կողմից անցկացվող կուրսը այն աստիճան անընդունելի էին, որ անդրկովկասյան պատվիրակության նախագահ Յա. Ս. Գանեցկին ստիպված էր Գ. Վ. Զիշերինին հեռագրել հետեւյալը. «...Թուրքերի վարքագիծն այնպիսին է, որ ակամայից հարց ես տալիս. ինչո՞ւ էինք մենք նրանց համար այդքան զոհաբերություններ կատարում...»<sup>48:</sup>

Թուրք հեղինակների աշխատություններում զգալի տեղ է հատկացված 1922—1923 թվականների լողանի կոնֆերանսին: Եվ դա հասկանալի է: Այդ կոնֆերանսում ստորագրված հաշտության պայմանագրով էր, որ ճանաշվեց թուրք ժողովրդի ազգային-ազատագրական հակամապերիալիստական պայքարի հաղթական ավարտը և թուրքական պետության անկախ, ինքնուրույն գոյությունը:

Միաժամանակ, լողանի կոնֆերանսում որոշակիորեն երեան եկան քեմալականների արտաքին քաղաքականության անհետեղականությունը, իմպերիալիստների հետ գործարքի մեջ մտնելու նրանց հակումները, որոնք բնորոշ էին թուրքիայի ազգային բոլորուազիային՝ ազգային-ազատագրական պայքարի հենց սկզբնական շրջանից:

Կոնֆերանսում քննարկվող առավել կարևոր հարցերից մեկը նեղուցների ոեժիմի մշակման և ընդունման հարցն էր, որի բնական ու արդարացի լուծման մեջ ամենից առաջ շա-

<sup>47</sup> Տե՛ս ԱՀԱՕՐ Ազեր, ССР, ф. 6с/28 р, оп. 1, ед. хр. 81, л. 13—14.

<sup>48</sup> ՀԱՅԱ ՀՈՒՇ ԿՊԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 75, թ. 48:

Հազրդոված էին սեծովյան պետությունները: Սովետական կառավարության քաղաքականությունը նեղուցների հարցում շարագրվել էր Վ. Ի. Լենինի կողմից անգլիական «Օբսերվեր» և «Մանչեստեր Գարդիան» թերթերի թղթակից Ֆարբմանին տված ինտերվյուի մեջ, որտեղ ասված էր, որ նեղուցների վերաբերյալ սովետական ծրագիրը իր մեջ պարունակում է.

«Առաջին, Թուրքիայի ազգային ձգտումների բավարարումը:

Երկրորդ, նեղուցների փակումը խաղաղ և պատերազմական ժամանակ ռազմական բոլոր նավերի համար: Այս է բոլոր տերությունների, ոչ միայն նրանց, որոնց տերիտորիան անմիջականորեն սահմանակից է նեղուցներին, այլև բոլոր մնացածների անմիջական մերձավորագույն առևտրական շահը:

Երրորդ, նեղուցների վերաբերյալ մեր ծրագիրը առևտրական նավագնացության կատարյալ ազատությունն է...»<sup>49</sup>:

Լոգանի կոնֆերանսում սովետական պատվիրակությունը Գ. Վ. Զիշերինի գլխավորությամբ ակտիվ մասնակցություն ունեցավ նեղուցների նոր ոեժիմի մշակմանը՝ սեծովյան պետությունների շահերին համապատասխանող կոնվենցիա ընդունելու համար: Սակայն սովետական պատվիրակության շանքերն այդ ուղղությամբ հենց սկզբից աջակցություն շգտան թուրքական պատվիրակության կողմից, որն ավելի, քան Սովետական Միությունը, շահագրգոված էր նեղուցներն ամրացնելու և հնարավոր հարձակումից պաշտպանելու մեջ:

Ընդհակառակը, Թուրքիայի համար կենսական նշանակություն ունեցող այս հարցում Անկարայի կառավարությունը լուրջ զիջումներ արեց իմպերիալիստներին՝ ընդունելով նրանց առաջարկած նախագիծը: 1921 թվականի մարտի 16-ի պայմանագրի 5-րդ հոդվածով նախատեսվում էր, որ Սև ծովի և նեղուցների միջազգային ստատուտի վերջնական մշակումը պետք է հանձնարարվի սեծովյան պետությունների ներկա-

<sup>49</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 456—457: Հայպետհրատ, Ֆրիան, 1952:

բացուցիչներից բաղկացած հատուկ կոնֆերանսին: Դրանով իսկ Մոսկվայի պայմանագիրը հաստատում էր պայմանավորվող կողմերի համաձայնությունն այն մասին, որ նեղուցների հարցում անմիջականորեն շահագրգոված են Սև ծովի մերձափնյա երկրները, ուստի և այդ հարցը մտնում է վերջիններիս, և ոչ թե եվրոպական կոնֆերանսի, իրավասության մեջ՝ ինչպես այդ եղել էր առաջներում: Խախտելով վերոհիշյալ 5-րդ հոդվածը, թուրքական կառավարությունը համաձայնվեց, որ այդ հարցը քննարկվի Լոզանի կոնֆերանսում, որին մասնակցում էին Սև և Միջերկրական ծովերի հետ ոչ մի առընչություն շունեցող երկրներ, օրինակ Ճապոնիան: Դեռ ավելին, թուրքական պատվիրակությունը անդրկուլիսյան գործարքի մեջ մտավ Անտանտի պետությունների և, առաջին հերթին, Անգլիայի հետ, որի հետևանքով ընդունվեց նեղուցների ռեժիմի վերաբերյալ այնպիսի մի կոնվենցիա, որը հակասում էր ինչպես Սովետական Միության և սեծովյան մյուս պետությունների, այնպես էլ հենց իրեն՝ Թուրքիայի շահերին: Այն ժամանակ, երբ սովետական նախագծի համաձայն Թուրքիային իրավունք էր վերապահվում ամրացնելու նեղուցները և արգելելու օտար պետությունների ռազմանավերի անցումը նեղուցներով, թուրքական կառավարությունը, ընդառաջելով արևմտյան տերություններին, համաձայնվեց նեղուցների ապառազմականացմանը և նրանցով առանց բացառության բոլոր օտար պետությունների ռազմանավերի անցմանը՝ ինչպես խաղաղ պայմաններում, այնպես էլ պատերազմի ժամանակ:

Որ նեղուցների ռեժիմի վերաբերյալ Լոզանի կոնֆերանսում ընդունված կոնվենցիան իրոք ձեռնոտու չէր Թուրքիային և չէր ապահովում նրա անվտանգությունը, երեաց հետագայում, երբ թուրքական կառավարությունն ինքն առաջինը հարցարձրացրեց Լոզանի կոնվենցիայի վերանայման մասին:

Անտեսելով փաստերը, թուրք հեղինակները ժխտում են նեղուցների փակման մեջ Թուրքիայի շահագրգովածությունը, Լոզանի կոնֆերանսում սովետական պատվիրակության կողմից նրան ցույց տրված բարոյական մեծ օգնությունը: Այս-

պես, Ալթեմուր Քըլըշը զրում է. «Զիշերինը ձեացնում էր, թե իբր նա բարյացակամորին պաշտպանում է թուրքական նոր պիտությունը»: Նրա կարծիքով, «ոչ սեծովյան պիտությունների ռազմանավերի համար նեղուցները փակելու պահանջը, որով հանդիս էր գալիս Ռուսաստանը, միայն արտաքուատ էր թվում պրոթուրքական, բայց իրականում այն Սովետական Ռուսաստանի օգտին էր»<sup>50</sup>:

Պետք է ասել, որ հեղինակն իր այդ տեսակետը հայտնում է մի աշխատության մեջ, որտեղ հաճախ է հիշատակվում թուրքական հանրապետության հիմնադիր Քեմալ Աթաթյուրքի անունը: Ուստի ավելորդ չէ վերջիշել վերջինիս կարծիքը քննարկվող հարցի վերաբերյալ: Տակավին 1923 թվականին Քեմալը բնդգծել է, թե ինչպիսի օմեծ օգուտ բերեց թուրքերին Զիշերինի հիանալի ելույթը կողանում, որ Սովետական Ռուսաստանի աշակցությունը բարոյապես օգնեց իրենցը<sup>51</sup>: Նման խոստովանությունների կարելի է հանդիպել նաև առանձին թուրք հեղինակների աշխատություններում: Այսպիս, Ռըֆքը Սալիմ Բուրշակը, խոսելով նեղուցների մասին, նշում է, որ «կողանում թուրքական տեսակետը եռանդուն կերպով պաշտպանվում էր Ռուսաստանի կողմից»<sup>52</sup>:

Ամերիկյան հայտնի պատմաբան Հովարդը, որը շատ հեռու է Սովետական Միությանը համակրելուց, գտնում է, որ կողանում սովետական պատվիրակությունը ավելի եռանդուն կերպով, քան իրենք թուրքերը, պաշտպանում էր վերջիններիս իրավունքները: Խոսելով նեղուցների վերաբերյալ սովետական առաջարկների մասին, նա գրում է. «Ռուսական սխեման ավելի պրոթուրքական էր, քան իսմեթ փաշալի ծրագիրը»<sup>53</sup>: Նույն կարծիքն են հայտնում ամերիկյան այլ պատմաբանները<sup>54</sup>:

<sup>50</sup> Altemur Kılıç, p. 44.

<sup>51</sup> „Международная жизнь“, 1960, № 11, стр. 141.

<sup>52</sup> Rıfki Salim Burçak, Türk-Rus-İngiliz münasebetleri (1791—1941). İstanbul, 1946, s. 67.

<sup>53</sup> Harry H. Howard, The Partition of Turkey. A Diplomatic History, 1913—1923. Oklahoma, 1931, p. 286.

<sup>54</sup> Տե՛ս The Diplomats 1919—1939. Ed. by Gordon A. Craig and Felix Gilbert. Princeton, 1953, p. 203.

Թուրք Հեղինակների աշխատություններում հատկանը՝ շական է նաև պատմական դեպքերի շարադրանքի ժամանակ փաստերի միանգամայն կամայական ընտրությունը: Թուրքիայի դիրքը, նրա քաղաքականությունը ստվերոտ կողմից դրսերող ոչ մի փաստ չի հասնում ընթերցողին, այդ մասին դիտակցորեն լուրջուն է պահպանվում և, միևնույն ժամանակ, ցցուն ձեռվ ներկայացվում են Թուրքիայի «դրական» գործերը: Ալի Ֆուաթ Զերեսոյը իր մի այլ գրքում, 1957 թվականին հրատարակված «Քաղաքական հուշերում» չի մոռանում նշել, որ հենց իրենք՝ թուրքերը կոզանի կոնֆերանսից պահանջեցին սովետական պատվիրակությանը հրավիրել նեղուցների հարցի քննարկմանը<sup>55</sup>: Սակայն նա ոչինչ չի ասում թուրքական պատվիրակության ապերախտ և ուխտազրուժ վարքագծի մասին, լուրջամբ է անցնում այն փաստի կողքով, որ թուրքական պատվիրակության ղեկավար Խամեթ փաշան սովետական պատվիրակությունից գաղտնի մասնակցում էր էրսպերտների հանձնաժողովում նեղուցների հարցի քննարկմանը՝ Անգլիայի և իմպերիալիստական մյուս պետությունների հետ<sup>56</sup>:

Այսպես, ուրեմն, հետպատերազմյան տարիներին լույս տեսած թուրք Հեղինակների աշխատություններում զգալի տեղ է հատկացված սովետա-թուրքական հարաբերությունների հաստատման ժամանակաշրջանի պատմության հարցերին, որոնք, ինչպես ցույց տրվեց, լուսաբանվում են վերին աստիճանի միտումնավոր, հակագիտական դիրքերից՝ աղավաղվում ու կեղծվում են դեպքերը, նենգափոխվում է պատմական իրականությունը, գիտակցորեն թաքցվում են ընթերցողից կարևոր շատ փաստեր: Հիմնական տենդենցը, որը գերիշխում է թուրք Հեղինակների տեսակետներում ու գնահատականներում, գայն է, որ իբր Սովետական Միությունն ավելի, քան Թուրքիան,

<sup>55</sup> General Ali Fuat Cebesoy, Siyasi hatırlar. İstanbul, 1957, s. 321.

<sup>56</sup> № 84 "История дипломатии", т. III, Госполитиздат, М.—Л., 1945, стр. 220—221.

Համագործական էր այդ հարաբերությունների հաստատման ու  
ամրապնդման մեջ, իսկ վերջինիս համար այն շուներ վճռա-  
կան նշանակություն: Այստեղից էլ թուրք հեղինակների ջան-  
քերը՝ ամեն կերպ նսեմացնելու և անտեսելու սովետական  
պետության կողմից այդ շրջանում թուրքիային ցուց տրված  
անշահախնդիր նյութական, ուազմական ու բարոյական մեծ  
օգնությունն ու աջակցությունը, թերագնահատելու և նույնիսկ  
ուրանալու այդ օգնության նշանակությունը թուրք ժողովրդի  
հակաիմպերիալիստական պայքարի հաղթանակի զործում:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄԸ (1924—1939 թթ.)

Ժամանակակից թուրք պատմաբանների աշխատություններում զգալի տեղ է հատկացված նշված ժամանակաշրջանի սովետա-թուրքական հարաբերությունների պատմության հարցերին, ՍՍՌՄ-ի և Թուրքիայի միջև այդ տարիներին առավել ակտիվ դրանորում դտած քաղաքական ու տնտեսական կապերի լուսաբանմանը:

Լոգանի կոնֆերանսից մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբն ընկած ժամանակաշրջանը սովետա-թուրքական հարաբերությունների համար բնորոշ է այն տեսակետից, որ այդ տարիներին և, հատկապես, 1925—1935 թվականներին, Սովետական Միության և Թուրքական հանրապետության միջև գոյություն է ունեցել փոխադարձ օգտակար ու ձեռնտու համագործակցություն՝ ինչպես միջազգային ասպարեզում, այնպես էլ տնտեսական ու կուլտուրական կապերի բնագավառներում։ Ինչ վերաբերում է սովետա-թուրքական հարաբերություններին 1935 թվականի վերջերից ըսկըսած մինչև 1939 թվականի սեպտեմբերը՝ համաշխարհային երկրորդ պատերազմի սկիզբը, այս էտապում Թուրքիան հարձարվեց ՍՍՌՄ-ի հետ նորմալ և բարիդրացիական հարաբերություններ պահպանելու քաղաքականությունից և մասնակցություն ունեցավ Արևմուտքի իմպերիալիստական տերությունների ձեռնարկած դիվանագիտական կոմբինացիաներում՝ բացահայտորեն դրսևորելով իր ոչ-բարյացակամ, թշրիմամական վերաբերմունքը Սովետական Միության նկատմամբ։

Ինչպես են գնահատվում 1924—1939 թվականների սովորական հարաբերությունները թուրք հեղինակների աշխատություններում:

Թուրք հեղինակները, ինչպես ցուց տրվեց նախորդ գրեյտում, սովորական հարաբերությունների գրեթե բոլոր հարցերի քննարկմանը մոտենում են նախապես հետապնդած մի ընդհանուր, հիմնական նպատակով՝ վարկարեկել Սովորական Միության արտաքին քաղաքականությունը Արեգելքի երկրների և, մասնավորապես, Թուրքիայի նկատմամբ, «ապացուցել», որ այն մշտական սպառնալիք է բերել Թուրքիային, որ վերջինս միայն վնաս է ստացել ՍՍՌՄ-ի հետ համագործակցելուց: Կողմնորոշվելով նման ձգումներով, թուրք հեղինակները հետևողականորեն պաշտպանում են հետևյալ թյուրք, մինչև վերջը անհիմն տեսակետը. Սովորական Միությունը, երբ ուժեղ է եղել, միշտ սպառնացել է Թուրքիային, երբ թույլ է եղել՝ միշտ ձգտել է ստանալ նրա աջակցությունը:

Այսպես, Հայուկ Յուլմանը (որը Անկարայում լույս տեսնող «Ֆորում» արտաքին քաղաքական հանդեսի 1960—1961 թվականների մի քանի համարներում տպագրել է «Թուրք-սովորական հարաբերությունները 1923—1960 թվականներին» հոդվածաշարը) գտնում է, որ Սոնտրեի կոնֆերանսից հետո «թուրք-սովորական հարաբերությունները չխղվեցին, որովհետև Սովորական Միությունն իրեն տակավին ուժեղ չէր զգում և այդ պատճառով հոգ էր տանում Թուրքիայի հետ համերաշխ ապրելու մասին»<sup>1</sup>: Իսկ պրոֆ. Ահմեթ Շյուքրյու Էսմերը սովորա-թուրքական հարաբերություններին նվիրված հոդվածում ուղղակի գրում է.

«Սովորական Միությունը բոլոր այն ժամանակներում, երբ իրեն ուժեղ է զգացել, սպառնացել է Թուրքիային և միայն մեկուսացած ու թույլ գտնվելու պահին փնտրել է նրա բարեկամությունը»<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս „Forum“, 15 Agustos 1960, sayı 153, s. 10.

<sup>2</sup> „Ulus“, 21 Ekim 1957.

Վերջին Հեղինակը՝ Էսմերը հայտնի ժուռնալիստ և քաղաքական տեսաբան է: 30-ական թվականների սկզբին Հրապարակած իր մի շարք հոդվածներում նա բարձր էր գնահատում Թուրքիայի նկատմամբ Սովետական Միության վարած բարեկամական քաղաքականությունը: Եվ պատահական չէ, որ երբ այժմ, աղավաղելով պատմական իրականությունը, նա խոսում է Թուրքիայի նկատմամբ սովետական սպառնալիքների մասին, ոչ մի փաստ չի բերում՝ իր եզրակացությունը հիմնավորելու համար: Իսկ փորձելով «Հիմնավորել» իր մյուս սիալ տեսակետը, այն է, որ իբր Սովետական Միությունը մեկուսացած և թույլ վիճակում գտնվելու պահերին ձգտել է մերձենալ Թուրքիայի Հետ, Հեղինակը մատնանշում է 1925 թվականի սովետա-թուրքական պայմանագիրը, որը, նրա կարծիքով, Սովետական Միությունը ստիպված էր կնքել Լոկառնոյի կոնֆերանսից հետո նրան սպառնացող շրջապատման վտանգից խուսափելու համար: Այսպիս, իր «Քաղաքական պատմություն» գրքում էսմերը գրում է: «Սովետական Միությունը լոկառնոյի պայմանագրերի ստորագրումից վախեցավ ու իր Հարեւանների, այդ թվում և Թուրքիայի Հետ շարժակման պակտեր ստորագրեց»<sup>3</sup>: 1925 թվականի պայմանագրին տրված այդ նույն գնահատականը էսմերը կրրկնում է «Նոր Թուրքիան» վերնագիրը կրող գրքում զետեղված «Թուրքական դիվանագիտությունը 1920—1955 թվականներին» հոդվածում<sup>4</sup>: Այսպիսով, ստացվում է, որ միայն Սովետական Միությունն էր շահագրգութած այդ պայմանագրում, որ Թուրքիան դրա կարիքը չուներ, վերջինս ոչինչ շահաց այդ պայմանագրից:

Նման միտումնավոր գնահատականների Հեղինակները գիտակցորեն նենգափոխում են փաստերը, խուսափում են պատմական իրադրությունը վերլուծելուց, անտեսում ու լուս-

<sup>3</sup> Dr. Ahmet Şükrü Esmer, Siyasi tarih (1919—1939). Ankara, 1953, s. 192.

<sup>4</sup> Տե՛ս Prof. Dr. Ahmet Şükrü Esmer, Türk Diplomasisi (1920—1955). Yeni Türkiye. İstanbul, 1959, s. 78.

թյան են մատնում այն բարձր գնահատականը, որ իր ժամանակին Հենց թուրքական մամուլը տվել է 1925 թվականի պայմանագրին՝ ընդգծելով վերջինիս կարևորագույն նշանակությունը Թուրքիայի համար: Թուրք Հեղինակների միտունավոր մեկնաբանություններն ակնհայտ կդառնան պայմանագրի կնքման նախօրյակին ստեղծված միջազգային իրադրության համառոտ վերլուծությունից անգամ:

Զհարձակման և շեղոքության պայմանագիրը Սովետական Միությունը և Թուրքիան ստորագրեցին 1925 թվականի դեկտեմբերի 17-ին, Փարիզում: ՍՍՌՄ-ի համար այդ պայմանագրի ունեցած դրական նշանակությունն անժխտելի է. դա սովետական դիվանագիտության առաջին փորձն էր՝ Հարձակվելու և թշնամական խմբավորումներին չմասնակցելու վերաբերյալ խաղաղասիրական այդ նոր ակտը միջազգային ասպարեզում հաստատելու: Պայմանագիրն, ինչ խոսք, ուներ և հակալոկառնոյական ուղղվածություն: 1925 թվականի հոկտեմբերին կնքված Լոկառնոյի համաձայնագրերը (այսպես կոչված «Հռենոսյան պակտը») անսքող հակասովետական սրություն ունեին: Նրանց ոգեշնչողները՝ անգլիական և ֆրանսիական իմպերիալիստական շրջանները Գերմանիայի սահմանների անվտանգությունը երաշխավորելով հանդերձ հրաժարվեցին կեհաստանի և Զեխոսովակիայի արևմտյան սահմանների ապահովության երաշխիք տալ՝ հասկացնելով գերմանական իմպերիալիստներին, որ իրենք պատրաստ են այդ երկրները զոհարերել, եթե Գերմանիան հարձակվի ՍՍՌՄ-ի վրա: Սակայն Լոկառնոյի համաձայնագրերը միայն Սովետական Միության դեմ չեին ուղղված: Արևմտյան եվրոպայի այսպես կոչված «խաղաղեցումը», այդ շրջանում մաքսիմալ «հանգստության» ապահովումը հնարավորություն էր տալիս Անգլիային ավելի ակտիվ քաղաքականություն վարելու Արևմելքում, ասիական ժողովուրդներին ներգրավելու զանազան իմպերիալիստական խմբավորումների մեջ: Լոկառնոն նպաստում էր անգլիական իմպերիալիզմի դիրքերի ամրապնդմանը նաև Մերձավոր արևելքի երկրներում, նրանց վրա ձնշումը

ուժեղացնելուն, ուստի այդ համաձայնագրերը, անպայման ուղղված էին նաև Արևելքի երկրների, այդ թվում և Թուրքիայի դեմ: Թուրքական կիսապաշտոնական «Միլիյեթ» թերթն այդ կապակցությամբ գրում էր. «Մեր կողմից տակավին չեն բմբոնվել Արևելքի դեմ ուղղված գաղտնի և խարդախ այն մտադրությունները, որոնց առկայությունը մենք դիտակցում ենք բնազդորեն»<sup>5</sup>:

Լոկանոյի համաձայնագրերի սոորագրումից հետո անդիմական դիվանագիտությունն այլին ուժեղացրեց իր մնշումը Թուրքիայի վրա՝ Մոսուլի հարցի կապակցությամբ: Այդ ժամանակ Մոսուլի շուրջը ծագած անգող-թուրքական բանավեճն այն աստիճան խորացել էր, որ երկու երկրների մամուլը բացեիրաց գրում էր պատերազմի ոեալ հնարավորության մասին:

Գրավելով Մոսուլի վիլայեթը Մուգրոսի զինադադարից (1918 թվականի Հոկտեմբերի 30) հետո, Անգլիան այն մըտցրել էր իր մանդատային տերիտորիան հանդիսացող Իրաքի կազմի մեջ և այժմ մտադիր չէր նավթի հսկայական պաշարներով հարութ հարութ այդ մարզը զիջել Թուրքիային:

Մոսուլի հարցը տևական վեճերի առարկա էր 1922—1923 թվականների լողանի կոնֆերանսում, որի ընթացքում կողմերը համաձայնության չեկան: Լողանի պայմանագրի 3-րդ հոդվածն ազդարարում էր, որ «Թուրքիայի և Իրաքի միջև սահմանը կորոշվի Թուրքիայի և Անգլիայի հոժար կամքով, 9-ամսյա ժամկետում: Նախատեսված ժամկետում համաձայնության չգալու դեպքում վեճը կքննարկվի Ազգերի լիգայի խորհրդում»<sup>6</sup>: 1924 թվականի ապրիլ-մայիսին կայացած Ստամբուլի կոնֆերանսում անգող-թուրքական բանակցություններն արդյունք չտվեցին, և անգլիական կառավարությունը 1924 թվականի օգոստոսի 10-ին հարցի քննարկումը տեղափոխեց Ազգերի լիգա: Վերջինիս կողմից առանձնացված

<sup>5</sup> Տե՛ս ЦГАОР СССР, ф. 4459, оп. 2, ед. хр. 60, л. 49.

<sup>6</sup> „Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне“, Изд. Литиздата НКИД, М., 1927, стр. 145.

Հանձնաժողովը, գործը տեղում հետազոտելոց հետո, 1925 թվականի սեպտեմբերին լիգայի խորհրդին ներկայացրեց իր հաշվետվությունը, որտեղ «ելնելով իրաքի նորմալ զարգացման պահանջներից», առաջարկվում էր Մոսուլը միացնել իրաքին՝ եթե հետագա 25 տարիներին իրաքի մանդատը մնա Անգլիայի ձեռքում<sup>7</sup>: Թուրքական պատվիրակությունը, որը հրավիրված էր այդ հարցի քննարկմանը, առարկեց վերոհիշյալ որոշման դեմ: Ելույթ ունենալով Ազգերի լիգայի խորհրդի 35-րդ սեսիայում, Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Թիգրիկ Մյունշտյուն հայտարարեց, որ մանդատային ռեժիմը չի կարելի տարածել Մոսուլի վիլայեթի վրա, քանի դեռ Թուրքիայի սուվերենությունը նրա նկատմամբ շարունակում է պահպանվել<sup>8</sup>:

Ազգերի լիգայի խորհուրդը, սակայն, հաշվի շառավ Թուրքական կառավարության բողոքները և 1925 թվականի դեկտեմբերի 16-ի իր նիստում որոշում կայացրեց Թուրքիայի և իրաքի միջև սահմանն այսպես կոչված «Բրյուսելյան գծով» անցկացնելու մասին, այսինքն՝ Մոսուլի մարդն Իրաքին էր անցնում: Թուրքիան հրաժարվեց այդ որոշումն ընդունել, որը, ինչպես խոստովանում է անգլիական պատմաբան եղվարդ Վերե-Հոգը, «կարուկ կերպով ազդեց Թուրքիայի հասարակական կարծիքի վրա... Հակաբրիտանական տրամադրությունները նոր, բարձրագույն կետի հասան... Անգլիան նորից դարձավ ատելի իմպերիալիստական թշնամի...»<sup>9</sup>:

Սակայն Թուրքիան սուր և լարված փոխհարաբերությունների մեջ էր ոչ միայն Անգլիայի, այլև այս հարցում վերջինիս պաշտպանող իմպերիալիստական երկու խոշոր տե-

<sup>7</sup> La question de Mossoul à la 35ème Session du Conseil de la Société des Nations (Genève). Lausanne, 1925, p. 108.

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 58:

<sup>9</sup> Edward Reginald Vere-Hodge, Turkish Foreign Policy (1918—1948). Thèse, présentée à l'Université de Genève pour obtenir le grade de docteur ès sciences politiques. Genève, 1950, p. 63.

բությունների՝ Ֆրանսիայի ու Իտալիայի հետ իտալական ֆաշիզմն անգլո-թուրքական ճգնաժամի այս մոմենտին առերես դրսեորում էր իր նվաճողական ձգտումները Փոքր Ասիայի նկատմամբ՝ տերիտորիալ ձեռքբերումների միջոցով իտալիայի ռգերբնակեցումը» վերացնելու պատրվակով: Թուրքական մամուլը 1925 թվականի աշնանը տաղնապով հաղորդում էր Ռոդոս և Սիցիլիա կղզիների վրա իտալական զորքերի կենտրոնացման մասին:

Լարված վիճակում էին գտնվում նաև Թուրքիայի հարաբերությունները Ֆրանսիայի հետ՝ օտտոմանյան պարտքի և թուրք-սիրիական սահմանին վերաբերող հարցերի կարգավորման հետ առնչված: Ճիշտ է, կողանի կոնֆերանսում Թուրքիան փաստորեն ճանաշեց օտտոմանյան պարտքը, բայց միշտ շարք հարցեր՝ պարտքի մարման ժամկետները, այն փակելու կարգը և այլն, մնում էին լուծված: Սիրիական սահմանի հարցը ևս լուրջ բախումների առիթ էր ժառայում երկու երկրների միջև:

Նշված ժամանակաշրջանում Թուրքիայի ներքին վիճակը ևս բավականին ծանր էր: Ճիշտ է, 1925 թվականի փետրվարին թուրքական զորքերին հաջողվեց ճնշել շեյխ Սահդի ապրստամբությունը, սակայն ազատասեր քուրդ ժողովուրդը չէր գաղարեցրել իր պայքարը. պարտիզանական պատերազմը Քուրդստանում շարունակվում էր: Քեմալականների ներքին քաղաքականության դեմ հանդես էին գալիս նաև ընդդիմադիր ուժերը: Թեև թուրքական կառավարությունը 1925 թվականի հունիսին որոշում էր ընդունել առաջադիմական-հանրապետական կուսակցությունն արձակելու մասին՝ նրան մեղադրելով քրդական շարժման հետ ունեցած կապի մեջ, ընդդիմադիր ուժերը գեռ ակտիվորեն գործում էին՝ օգտագործելով նաև երկրի տնտեսություն ու ֆինանսների անմխիթար վիճակը:

Թուրքիայի համար օրհասական այդ պահին, եթե Անգլիան սպառնում էր նրան պատերազմով, անգլո-իտալա-հունական կոալիցիայով<sup>10</sup>, Սովետական Միությունը միակ տերությունն

<sup>10</sup> Տե՛ս Jean Pichon, Le partage du Proche-Orient, Paris, 1938, p. 247.

էր, որը հետեւղականորեն սլաշտպանում էր Թուրքիային: Նույնիսկ իր հակասովետական ուղղությամբ հայտնի ֆրանսիական «Է'ազի ֆրանսեզ» ամսագիրը ստիպված էր խոստուվանել, որ «ի հակադրություն Թուրքիայի նկատմամբ անդրիսական թշնամանքի՝ Սովետները մշտապես հավանություն էին տալիս թուրքական տեսակետին»<sup>11</sup>:

Այսպիսով, 1925 թվականի վերջին ստեղծված իրադրության վերլուծությունը պարզորոշ կերպով ցույց է տալիս, որ այդ ժամանակաշրջանում Թուրքիայի միջազգային դրությունը խիստ վատացել էր, նա լրիվ մեկուսացված վիճակում էր գտնվում:

Ահա այսպիսի պայմաններում, 1925 թվականի դեկտեմբերի 17-ին, այսինքն Մոսուլի վերաբերյալ Ազգերի լիգայի կայացրած որոշման հաջորդ օրն իսկ, ՍՍՌՄ-ի և Թուրքիայի միջև Փարիզում ստորագրվեց պայմանագիր «Հարձակման ռչեղորության մասին», որը գոհունակությամբ ընդունվեց Սովետական Միությունում և Թուրքիայում: Կանգ շառնելով այստեղ պայմանագրի հոդվածների վերլուծության վրա, նշենք միայն այն արձագանքը, որ պայմանագիրը գտավ թուրքական մամուլում և հասարակայնության մեջ:

Պայմանագրի ստորագրումից հետո մի քանի շաբաթ Թուրքիայի մամուլը մեծագույն հետաքրքրություն հանդիս բերեց այդ իրադարձության նկատմամբ, վերլուծում էր պայմանագրի բովանդակությունը, առանձին հոդվածները, տալիս իր գնահատականը: Համարյա բոլոր թուրքական թերթերը այդ պայմանագրին նվիրված առաջնորդող հոդվածներ գետեղեցին, որոնցում բարձր էր գնահատվում նրա նշանակությունը Թուրքիայի միջազգային դրությունն ամրապնդելու և նրա անվտանգությունն ապահովելու գործում:

Թուրքական կիսապաշտոնական «Հարֆիմիյեթի միլլիե» թերթը 1925 թվականի դեկտեմբերի 22-ի համարում դրում էր, «Եվրոպական պայմանագրերն ագրեսիվ բնույթ են կրում և ուղղված են Արևելի դեմ: Նրանք առգործված չեն խաղաղու-

<sup>11</sup> „L'Asie française“, Աօստ-սեպտեմբեր 1926, p. 271.

թյան ձգտումներով... Այդպիսի վիճակը ստիպում է Թուրքիային ինմեռության կերպով փնտրել իր անվտանգությունը երաշխավագրող միջոցներ՝ դաշինք կազմելով այն պետությունների հետ, որոնք Թուրքիայի հետ ընդհանուր շահեր ունեն» (այս և բոլոր մյուս ընդգծումները թերթերինն են—Ռ. Ս.): Ի պատասխան արեմտյան մամուլի այն նախազգուշացումներին, որ նման համաձայնագրեր ստորագրելով և մերձենալով ՍՍՌՄ-ի հետ, Թուրքիան սպառնալիքի տակ է դնում իր անվտանգությունը, թերթն ավելացնում էր. «Նրանց, որոնց անհանգությունը է մեր հարկանների հետ մերձեցումը, մենք ասում ենք, որ դա միայն մե՞ր անվտանգության հարցն է»<sup>12</sup>; Նույն թերթը, գեկտեմբերի 24-ին տպագրելով պայմանագրի լրիվ տեքստը, հաղորդում էր, որ «սովետա-թուրքական պայմանագրի կողումը հսկայական տպավորություն գործեց Անկարայում»: Առաջնորդող հոգվածում «Հաքիմիյեթի միլլիյեն» ընդգծում էր, որ նոր պայմանագիրը ագրեսիվ նպատակներ չի հետապնդում, այլ վկայում է Թուրքիայի՝ դեպի իր հզոր հարկանը կողմնորոշվելու մասին, որի քաղաքականությունը հակառիր է միավորված տերությունների քաղաքականությանը՝ Ազգերի լիգայում: Առաջնորդողի վերջում ասված էր, որ «նոր համաձայնագիրը Թուրքիայի համար անվտանգության և բարեկեցության հարց է»<sup>13</sup>: Ստամբուլում լույս տեսնող «Հալք» թերթը գեկտեմբերի 24-ի համարում հատկապես նշում էր արևելյան ժողովուրդների նկատմամբ Սովետական Միության վարած քաղաքականության հակառությունը Անդրկայի և Ազգերի լիգայի իմպերիալիստական քաղաքականությանը:

«ՍՍՌՄ-ը կանգնում է մեր կողմը,—ասված էր թերթում: Համաձայնագրի ստորագրությունը մի մանիֆեստացիա է Ազգերի լիգայի իմպերիալիստական քաղաքականության դեմ Արևելքում»<sup>14</sup>:

<sup>12</sup> Տե՛ս „Известия“, 24.XII-1925.

<sup>13</sup> Տե՛ս „Известия“, 29.XII-1925.

<sup>14</sup> Տե՛ս Արхив внешней политики СССР, ф. 132, д. 35; п. 75, оп. 10, л. 373.

1925 թվականի պայմանագիրը դրական գնահատական ստացավ նաև ընդդիմադիր մամուլի էջերում։ Այսպես, օրինակ, «Վաքըթ» թերթը 1925 թվականի դեկտեմբերի 31-ին գրում էր, որ «կառավարությունը երկրի պաշտպանության շահերից ելնելով կնքեց սովետա-թուրքական համաձայնագիրը»<sup>15</sup>:

Այսպիսով, 1925 թվականի սովետա-թուրքական պայմանագրի արձագանքները ժամանակի թուրքական մամուլում աներկայորեն հաստատում են այն ճշմարտությունը, որ թուրքիան ավելի, քան Սովետական Միությունը, շահագրգոված էր Հիշյալ պայմանագրի ստորագրմամբ, որը թուրքիային դուրս բերեց լրիվ մեկուսացումից միշագային ասպարեզում և ամրապնդեց նրա ղիրքերը ստեղծված լարված իրազրության պայմաններում։ Թուրքական մամուլից բերված մեջբերումներն իսկ վճռականորեն հերքում են ժամանակակից թուրք Հեղինակների այն միտումնավոր կարծիքը, թե իրը 1925 թվականի պայմանագրիրը միայն Սովետական Միության օգտին էր, նրա շահերից էր ելնում, իսկ թուրքիային այն ձեռնտու չէր և վերջինս դրա կարիքը չուներ։

Ժամանակի անգլիական մամուլը սովետա-թուրքական պայմանագրի ստորագրման լուրը դժոնհությամբ և վատ քողարկված թշնամանքով ընդունեց հենց այն պատճառով, որ այդ պայմանագրով Սովետական Միությունը բարոյական մեծ աջակցություն էր ցուց տալիս թուրքիային՝ նրա համար դժվարին պահին։ Եվ պատճական չէր, որ պայմանագրը մեծ անհանգստություն առաջ բերեց Անգլիայի քաղաքական շրջաններում ու մամուլում։ «Թուրքերի հետ հիմնական գյուխացավանքը կայանում է նրանում, որ նրանց մեջքին կանգնած է Սովետական Միությունը։ Թուրք-սովետական պայմանագիրը ստորագրվեց Մոսկովի սահմանի վերաբերյալ Ազգերի լիգայի խորհրդի որոշումից անմիշապես հետո կարծես թե նրա համար, որպեսզի Եվրոպային հիշեցվի Մոսկվայի ուժի

<sup>15</sup> ՏԵ՛՛ «Известия», 3.1.1926.

մասին»<sup>16</sup>, — գրում էր անգլիական հայտնի ժուռնալիստ Ավ-  
գուրը:

Ժամանակակից թուրք հեղինակների առանձին աշխատու-  
թյուններում ևս հանդիպում ենք խիստ բնորոշ խոստովանու-  
թյունների՝ 1925 թվականի պայմանագրի կնքման շարժառիթ-  
ների մասին: Այսպես, արդեն հիշատակված Ալթեմուր Քըլը-  
ջը, խոսելով հիշյալ պայմանագրի մասին, գալիս է այն եղ-  
րակացության, որ «թուրքերին զեպի այդ գործողությունը  
մղող հիմնական գործոնը նրանց մեջ նորից արթնացած  
կասկածն էր բրիտանական իմպերիալիզմի հանդեպ, որը  
Մոսուլի հարցում իրոք անհանգստացնում էր թուրքիային»<sup>17</sup>:

Թուրք հեղինակների աշխատություններում վերին ասսի-  
ճանի միտումնավոր, աղճատված տեսքով են ներկայացվում  
ՍՍՌՄ-ի և Թուրքիայի միջև նախապատերազմյան տարինե-  
րին, հատկապես 1927—1935 թվականներին բավականին լայն  
զարգացում ստացած առևտրական ու տնտեսական հարաբե-  
րությունները:

Նպատակադրվելով անվստահություն ու թշնամանք սեր-  
մանել զեպի Սովետական Միությունը, նրա տնտեսական ու  
առևտրական քաղաքականությունը Արևելքի երկրների նկատ-  
մամբ, թուրք պատմաբաններն ու ժուռնալիստները նորից  
անդրադառնում են անցյալում դատապարտված ու հերքված  
շինծու և սնանկ մեղադրանքներին՝ ՍՍՌՄ-ի հասցեին: Այս-  
պես, նրանք մեղադրում են Սովետական Միության այն բա-  
նում, որ իբր վերջինս 1929—1933 թվականների համաշ-  
խարհային տնտեսական գննաժամի տարիներին Թուրքիայում  
դեմպինգի քաղաքականություն էր վարում, 1927 և 1931 թը-  
վականների առևտրական պայմանագրերով ստանձնած իր  
պարտավորությունները չեր կատարում և այլն: Ալթեմուր  
Քըլըջը, օրինակ, պնդում է, որ թուրք առևտրականների ապ-  
րանքը Ռուսաստանում բռնագրավվում էր, որ 1931 թվականի

<sup>16</sup> „Fortnightly Review“, 1926, № 2, p. 149.

<sup>17</sup> Altemur Kilic, p. 56.

Ժարտի 16-ին կնքված երկրորդ առևտրական պայմանագրից հետո էլ «ՍՍՌՄ-ը շարունակում էր դեմպինգի պրակտիկան կիրառել»<sup>18</sup>:

Նման անհիմն մեղադրանքներ ներկայացվել են հենց նշված ժամանակաշրջանի թուրքական մամուլում, որոնք իր ժամանակին վճռականորեն հերքվել են սովետական ներկայացուցիչների կողմից: Այսպես, 1927 թվականի մարտի 11-ի առվետա-թուրքական առաջին առևտրական պայմանագրի ստորագրումից շատ շանցած, թուրքական մամուլը սկսեց աղմկել այն մասին, որ իբր թուրք վաճառականները ՍՍՌՄ-տերիտորիայում հետապնդվում են, նրանց գուցքը բռնագրավվում է և այլն:

Հարցի էությունը նրանումն էր, որ 1927 թվականի առևտրական պայմանագիրը սովետա-թուրքական ապրանքաշրջանառության ընդլայնմանը նպաստելով հանդերձ, տարբեր բնույթի շարաշահումների հնարավորություն էր տալիս: Համաձայն այդ պայմանագրի, թուրք առևտրականներին իրավունք էր վերապահվում իրենց ապրանքն արտահանել և վաճառել ՍՍՌՄ-ի տերիտորիայում: ՍՍՌՄ ներքին շուկայի հետ անմիջական շփումը հանգեցրել էր այն բանին, որ թուրք առևտրականները կապ էին հաստատել նեպմանների հետ և զրադշում էին սպեկուլյատիվ գործառնություններով: Մաքսիմալ շահույթ ստանալու ձգտումով տարված, թուրք առևտրականները Սովետական Միություն էին ներմուծում սպառողական բնույթի մեջ քանակությամբ ապրանքներ և դրանք վաճառում սպեկուլյանտ-մասնավորներին, դրանով իսկ ուժեղացնելով մասնավոր կապիտալիստական տարերքը ՍՍՌՄ ներքին շուկայում: Միայն 1928—1929 թվականների օպերացիոն տարվա 10 ամիսների ընթացքում ՍՍՌՄ-ի տերիտորիայում թուրք առևտրականների ստացած 7.750 հազ. ոուրլուց մասնավորների հետ կնքած գործարքը կազմում էր 2.832 հազ. ոուրլի, այսինքն՝ 36,5 տոկոս: Այսպիսի շփման հետեւ-

<sup>18</sup> Altemur Kılıç, p. 57.

վաճառքով թուրք առևտրականների ձեռք բերած շահույթները  
 ոչինչ ընդհանուր շունեին ո՛չ թուրքիայի ներքին շուկայում  
 վաճառվող ապրանքների ինքնարժեքի հետ՝ ավելացրած նոր-  
 մալ առևտրական շահույթը, ո՛չ այդ ապրանքները սպառող  
 եվրոպական և այլ շուկաների գների, ո՛չ էլ ՍՍՌՄ տերի-  
 տորիայում արևելյան մյուս երկրների առևտրականների կող-  
 մից վաճառվող այդ նույն ապրանքների գների հետ։ Այսպես,  
 1 արկղ նարնջի գինը ՍՍՌՄ ներքին շուկայում հասնում էր  
 45 ռուբլու, իսկ առանձին գործարքների գեպքում՝ 130 ռուբլու,  
 այն ժամանակ, երբ թուրքական շուկայում այն կազմում էր  
 4,5—5 ռուբլի<sup>19</sup>։ Միևնույն ժամանակ, թուրք առևտրական-  
 ները, պայմանագրի պայմանները խախտելով, վալյուտայի  
 սպեկուլացիայով էին զրադաշտում։ Համաձայն պայմանագրի,  
 թուրք առևտրականները կոռպերատիվներին վաճառվող իրենց  
 ապրանքի դիմաց պետք է ստանային դրամով միայն դրանց  
 վաճառքային ընդհանուր արժողության 70 տոկոսը, իսկ 30  
 տոկոսի շափով նրանք պետք է սովետական ապրանքներ  
 գնեին։ Այնինչ, թուրք առևտրականները շատ հաճախ դիմում  
 էին ապօրինի ճանապարհների. ստանալով սովետական ռուբ-  
 լիներ մեր ներքին շուկայում ապրանքներ գնելու համար, նր-  
 անք փոխանակում էին այդ ռուբլիները արտասահմանյան  
 վալյուտայի հետ՝ Ստամբուլի բանկիրների միջոցով կազ-  
 հաստատելով ՍՍՌՄ-ում գործող արտասահմանյան մի քա-  
 նի ձեռնարկությունների հետ<sup>20</sup>, որը խստիվ հետապնդվում էր  
 սովետական օրենքներով։ Հաճախակի կրկնվում էին նաև  
 թուրքական սերտիֆիկատներով ոչ-թուրքական ապրանքների  
 ներմուծման գեպերը, որը նույնպես առևտրական պայմա-  
 նագրի խախտում էր։ Նույնիսկ թուրքական մամուլում փաս-  
 տեր էին բերվում այն մասին, որ մի շադր առևտրական պա-  
 լատներ ցըվել էին ֆիկտիվ վկայականներ տալու համար<sup>21</sup>։

<sup>19</sup> Архив Министерства внешней торговли СССР (далее—Ар-  
хив МВТ СССР), ф. „Главный секретариат“, оп. 183, д. 92, л.  
185—186.

<sup>20</sup> Նույն տեղում, թ. 186:

<sup>21</sup> Նույն տեղում, թ. 76:

Բնական է, որ սովետական համապատասխան օրգանները չեին կարող հանդուրժել նման խախտումներ, և երբ մաքսատները, հաստատելով թուրք առևտրականների ներմուծված ապրանքների վերաբերյալ տրված վկայականների կեղծ, ապօրինի լինելը, նրանց առաջարկում էին դրանք ետ ուղարկել, թուրքական մամուլը անմիջապես հանդես էր գալիս նըրանց պաշտպանությամբ և հակասովետական կամպանիան ու դիվանագիտական զեկուցները հետևում էին իրար, ըստ որում առևտրական այդ անհամաձայնությունները հաճախ կապում էին ՍՍՌՄ-ի հետ գոյություն ունեցող քաղաքական փոխարարերությունների հետ<sup>22</sup>: Ահա թի ինչ էր հաղորդում ՍՍՌՄ առևտրի ժողկումատին ուղարկած 1929 թվականի օգոստոսի 9-ի իր նամակում թուրքիայում ՍՍՌՄ առևտրական ներկայացուցիչը: «Մեր գործողությունները թուրքական մամուլում գնահատվում են որպես բացահայտ ոեպրեսիա, որն իբր թաքնված նպատակ ունի ստիպել թուրքերին շեղյալ հայտարարել առևտրական պայմանագիրը: Այս թաքնված թեղը, որն ընկած է պաշտոնական և ոչ-պաշտոնական մամուլի կողմից անցկացվող հակասովետական կամպանիայի հիմքում, անպայման սննուցվում ու պաշտպանվում էր կառավարող շրջանների կողմից, որոնք տակտիկորեն նախապատրաստում էին իրենց զիրքերը՝ ապագա բանակցությունների համար»<sup>23</sup>:

Ինչպես տեսնում ենք, թուրքական մամուլի այն ժամանակ հարուցած՝ մեղադրանքները, որոնք այժմ օգտագործվում են թուրք պատմաբանների կողմից, անհիմն ու փաստազուրկ են: Սովետական Միությունն ինքը առաջինը հարց բարձրացրեց 1927 թվականի առևտրական պայմանագիրը վերանայելու և նոր առևտրական պայմանագիր կնքելու մասին: 1931 թ. մարտի 16-ին ստորագրված սովետա-թուրքական երկրորդ առևտրական պայմանագիրը թուրքիայի հետ կատարվող ողջ առևտուր տեղափոխելով վերջինիս տերիտորիան, վերջ դրեց վերը նշված շարաշահումներին:

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>23</sup> Նույն տեղում:

Ինչ վերաբերում է Սովետական Միության կողմից իր անցկացվող դեմպինգի քաղաքականությանը, այստեղ ևս թուրք հեղինակները փորձում են ջրի երես բարձրացնել վազուց խորտակված սուտը: Քըլըջը, Յուլմանը և մյուսները իրավացի են մի բանում. դա այն է, որ համաշխարհային տնտեսական ճգնաժամի տարիներին կապիտալիստական երկրների մամուլում բորբոքվող հակասովետական թունոտ կամպանիային բավականին ուժգին ձայնակցեցին նաև թուրքական թերթերը՝ կրկնելով արևմուտքի բուրժուական մամուլի հերյուրանքները: Վերոհիշյալ հեղինակները «մոռանում» են միայն հիշեցնել իրենց ընթերցողներին, որ նույն թուրքական թերթերը ի վերջո հանդես եկան սովետական դեմպինգի առկայության հերքումով:

1929—33 թվականների համաշխարհային տնտեսական ճգնաժամի տարիներին թուրքիայի տակավին թույլ էկոնոմիկան, հատկապես գյուղատնտեսությունը, մեծապես տուժեցին՝ շնայած թուրքական կառավարության ձեռք առած հովանավորական միջոցառումներին: Զանալով որևէ բացատրություն տալ տնտեսության նկատելի անկմանը, արտադրության ու ապրանքաշրջանառության խիստ կրճատման և ճշգնաժամի հետ առնչվող այլ երևույթներին, թուրքական թերթերը միացան համաշխարհային մամուլում սկսված հակասովետական կամպանիային, որի նպատակն էր այսպես կոչված «սովետական դեմպինգի» քողի տակ Սովետական Միությանը մեղադրել համաշխարհային ճգնաժամը սրելու ու խորացնելու մեջ: Թուրքական մամուլում տեղ գտած հակասովետական կամպանիան տարվում էր զանազան մոտիվներով. ՍՍՌՄ-ը մեղադրվում էր այս բանում, որ նրա արտադրած ապրանքները մրցակցություն են առաջ բերում ներքին, թուրքական շուկայում, համաշխարհային շուկայում և այլն:: Ստամբուլում ֆրանսերեն լեզվով լույս տեսնող «Խեպյուրիկ» թերթը, օրինակ, 1931 թվականի մարտի 21-ի համարում գրում էր, որ Սովետական Միությունը «հացահատիկը վաճառում է շուկայական գներից ցածր և այդ պատճառով ոչ միայն չի տա-

ռապում համաշխարհային ճգնաժամից, այլ նրա գործոններից մեկն է հանդիսանում»:

Նման մեղադրանքները հերքվել էին Թուրքիայում ՍՍՌՄ լիազոր ներկայացուցիչ (գեսպան) Յա. Զ. Սուրիցի կողմից՝ թուրքական մամուլի թղթակիցներին նրա տված ինտերվյու մեջ, որը թուրքական կառավարության կիսապաշտոնական օրգանը հանդիսացող «Միլիյեթ» թերթը գետեղել էր իր 1930 թվականի դեկտեմբերի 10-ի համարում՝ «Այսպես կոչված սովետական դեմպինգը» վերնագրի տակ։ «Սովետական դեմպինգի մասին պնդումների ամբողջ սնանկությունը ցույց տալու համար, ասվում էր հիշյալ պատասխանում, — բավական է մի քանի փաստեր և թվեր բերել. 1913 թվականին ցարական Ռուսաստանից հացահատիկի արտահանումը կազմում էր համաշխարհային հացահատիկի արտահանման 25 տոկոսը, մինչդեռ ներկայումս այն կազմում է ընդամենը 7—8 տոկոս։ Ինչ վերաբերում է հացահատիկի վաճառքի գներին, բավական է նայել Մարտելի Հավաս գործակալության կողմից ամեն օր հրատարակվող գների բյուջենին, համոզվելու համար, որ «օրինակ, ոռոմինական հացահատիկը մշտապես վաճառվում է ավելի ցածր գներով»<sup>24</sup>։ Չնայած այս հիմնավորված ու համոզիչ հերքմանը, հակասովետական կամպանիան թուրքական մամուլում շարունակվում էր գրեթե ողջ 1931 թվականի ընթացքում։

«Միլիյեթ» թերթը 1931 թվականի մայիսին սովետական դեմպինգի հարցին նվիրված հոդվածների մի սերիա տպագրեց<sup>25</sup>, որոնց հեղինակները, ի վիճակի ըլինելով հաստատել սովետական արտադրության ապրանքների մրցակցության առկայությունը թուրքական շուկայում, Սովետական Միությանը մեղադրում էին դեպի արտասահման այնպիսի մթերքների արտահանման մեջ, «որոնք այնտեղ խանգարում են թուրքական արտադրանքի իրացմանը»։ Սովետական արտահանման դեմ առաջ քաշված մեղադրանքներն այն աստիճան

<sup>24</sup> „Milliyet“, 10.XII.1930.

<sup>25</sup> ՏԵ՛ս „Milliyet“, 20—25.V.1931.

մտացածին ու անհիմն էին, որ թուրքական թերթերը, ինչպես  
նաև պաշտոնական անձինք ու ղեկավար գործիչները, ի վեր-  
ջո, ստիպված էին հանդես գալու փաստական հերքումներով։  
Այսպես, կառավարող շրջաններին մոտ կանգնած «Արշամ»  
ազգեցիկ թերթը հաղորդում էր, որ արտաքին առևտորի ղե-  
պարտամենտը, հետաքննելով սովետական դեմպինդի իբր  
անբարենպաստ ազգեցությունը թուրքական արտահանման  
ապրանքների վրա, եկավ այն եղբակացության, որ «սովետա-  
կան ապրանքներն արտասահմանյան շուկաներում ոչ մի ազ-  
գեցություն չեն գործում թուրքական ապրանքների իրացման  
վրա»։

«Յարըն» թերթը 1931 թվականի ապրիլի 4-ի համարում  
տպագրել էր թուրքիայի տնտեսության մինիստրության եղ-  
բակացությունը վերջինիս կողմից անցկացված հետաքըն-  
նության մասին՝ սովետական էքսպորտացին կազմակերպու-  
թյունների կողմից ցեմենտի բնագավառում դեմպինգ կիրա-  
ռելու առթիվ, որտեղ ասված էր, որ «թուրքական շուկայում  
ուստական ցեմենտ բոլորովին չկա»։ Վերջապես, թուրքիայի  
տնտեսության մինիստր Մուստաֆա Շերիֆ-բեյը մեջլիսի նիս-  
տում նույնպես խոստովանեց, որ «թուրքիայում սովետական  
դեմպինգ գոյություն չունի»<sup>26</sup>։

Այսպիսով, փաստերը հերքում են թուրք հեղինակների  
այն պնդումները, որոնք խեղաթյուրելով պատմական իրա-  
կանությունը, աղավաղված տեսքով են ներկայացնում արե-  
վելան երկրների և, հատկապես, թուրքիայի նկատմամբ  
ՍՍՌՄ-ի վարած առևտրական քաղաքականությունը։

Սակայն ավելի համառորեն թուրք պատմարանները  
պաշտպանում են մի այլ թյուր և սնանկ տեսակետ։ Զանալով  
նսեմացնել և նույնիսկ լիովին ուրանալ նախապատերազմ-  
յան տարիներին Սովետական Միության կողմից թուրքիային  
ցուց տրված տնտեսական, ֆինանսական ու տեխնիկական  
անշահախնդիր օգնությունը, նրանք կոպիտ կերպով խեղա-

<sup>26</sup> „Hakimiyeti Miliyye“, 24.VII.1931.

թյուրում են այդ օգնության իմաստն ու նպատակները՝ կըրկ-նելով Արևմուտքի բուրժուական պատմաբանների տարածած այն կեղծիքը, որ իբր Սովետական Միության օգնությունն ու աջակցությունը մի նպատակ էր հետապնդում՝ թույլ շտալ թուրքիային մերձենալու արևմտյան տերությունների հետ: Այսպես, Յուլմանը գործն այնպես է ներկայացնում, որ իբր Սովետական Միության ողջ քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ կանխորոշվել է այն վախով, որ նա տածում էր արևմտյան տերությունների համար Թուրքիայի մերձենալու փաստից: Նույնիսկ 1925 թվականի Հարձակման և շեղորդության պայմանագրի ժամկետի երկարաձգումը նա կապում է այդ «վախի» հետ:

«Սովետական զեկավարների այդ վախը,—գրում է Յուլմանը,—ավելի մեծացավ (Թուրքիայի ֆինանսների մինիստր) Եյուքրյու Սարացօղուի ուղևորությամբ (Ամերիկայի Միացյալ Նահանգներ—Ռ. Ս.) և ՍՍՌՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Լիտվինովը 1931 թվականի վերջերին այցելեց Անկարա, որի հետևանքով 1925 թվականի զեկտեմբերի 17-ի պայմանագիրը երկարացվեց 5 տարով»: «Եատ շանցած,—շարունակում է հեղինակը,—1932 թվականի ամրիկին, Սովետական Միությունը Թուրքիային 8 մլն. դոլար վարկ տրամադրեց, որի մի մասով Կայսերի տրիկոտաժի ֆաբրիկան կառուցվեց... Այս բոլորը ակներեկ կերպով ցուց է տալիս, որ Սովետական Միությունը անհանգույթյուն էր զգում Թուրքիայի՝ զեպի արևմտյան պետությունները թեքվելուց»<sup>27</sup>: Իսկ Քըլչը ուղղակի գրում է. «Սովետները Արևմուտքի հետ Թուրքիայի մերձեցումը կանխելու համար նոր քայլ արեցին՝ նրան առաջարկեցին 8 մլն. դոլար վարկ՝ Սովետական Միությունից մեքենաներ գնելու նպատակով»<sup>28</sup>:

Այս միտումնավոր կարծիքը հայտնելով, հեղինակը միևնույն ժամանակ անհրաժեշտ է համարում նշել այն փաստը,

<sup>27</sup> „Forum“, I Temmuz 1960, sayı 150, s. 10.

<sup>28</sup> Altemur Kılıç, p. 58.

որ «Թուրքիան ի վիճակի չէր ստանալու այդ վարկը Արևմուտքից՝ ներառյալ Ամերիկան՝ այդ ժամանակ շարունակվող համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառով»<sup>29</sup>։ Այստեղ պետք է ավելացնել, որ Թուրքիան ոչ միայն չէր կարող Արևմուտքից ստանալ այդ վարկը, այլ նման արտոնյալ պայմաններով վարկ ոչ մի իմպերիալիստական տերություններան չէր տրամադրի:

Եվ իրոք, Սովետական կառավարությունն այդ վարկը հատկացնում էր Թուրքիային առանց տոկոսի և նրա մարումը կատարվելու էր քսան տարվա ընթացքում՝ Սովետական Միությանը թուրքական արտադրության ապրանքներ մատակարարելու եղանակով։ Այսպիսով, թուրքական կառավարությունը ստիպված չէր լինի դիմելու օտարերկրյա վայցուտացնելու համար։

Այնուհետև, մեքենաներն ու սարքավորումը ՍՍՌՄ-ը հատկացնում էր այնպիսի զներով, որոնցով դրանք վաճառվում էին այդ ապրանքների հիմնական արտադրող հանդիսացող երկրների կողմից։

Իր ժամանակին թուրքական մամուլը լայնորեն արձագանքել է այդ իրադարձությանը և ընդգծել սովետական վարկի «բացառիկ արտոնյալ պայմանները»։ Թուրքական թերթերը գնահատում էին այդ ակտը, որպես բարեկամական և անշահախնդիր օգնություն Թուրքիայի էկոնոմիկային, որը նրա առջև նոր ուղիներ է բացում<sup>30</sup>։

Անկարայում լույս տեսնող «Կադր» ամսագիրը հատուկ հոդված էր նվիրել սովետական վարկին, որտեղ, մասնավորապես, նշվում էր, որ «Մուսաստանի կողմից Թուրքիային տրված ապրանքային վարկը ժառանգում է երկիրը կարճ ժամանակամիջոցում առաջավոր ու նորագույն տեխնիկայով զինելու խնդրին»<sup>31</sup>։

<sup>29</sup> Altemur Kilic, p. 58.

<sup>30</sup> *Sü'ü* „Досье иностранной печати“, 1932, №7, п. 2. Обзор турецкой прессы. Материалы Института истории АН СССР.

<sup>31</sup> *Sü'ü* „Kadro“, № 5, Mayis 1932, s. 27. Ankara.

ՍՍՌՄ-ի ֆինանսական և տեխնիկական օգնության անշահախնդիր բնույթն այն աստիճան ակներև էր, որ թուրքական թերթերը բանավեճի մեջ էին մտնում ֆրանսիական մամուլի հետ, որը թշնամաբար ընդունեց սովետա-թուրքական տնտեսական համագործակցության առթիվ հրապարակված պաշտոնական հաղորդումը։ Այսպես, «Զումհուրիեթ» թերթը հակահարված էր տալիս ֆրանսիական կիսապաշտոնական «Տան» թերթին, որն իր առաջնորդողում փորձում էր թուրքիայի պրեմիեր-մինիստր Խամեթ Խնոնյուի 1932 թվականի մայիսին Մոսկվա կատարած այցելությունը կապել ինչ-որ գաղտնի մտադրությունների հետ։

«Իզուր են ումանք ուղևորության մեջ գաղտնի շարժառիթներ փնտրում, — նշում էր թերթը։ Մեզ համար օգտակար է ուսումնասիրել այն ուղիները, որոնցով Սովետական Միությունը ընթանում է դեպի առաջադիմությունը։ ՍՍՌՄ-ը հոգաբությամբ օգնում է մեզ այդ բանում...»։

Բացի այդ, հրաժարվելով թուրքիային ապառիկ տեքըստիլ մեքենաներ վաճառել, արևմտյան երկրները հաշվի շառան այն հանգամանքը, որ թուրքիան դրանք ավելի ձեռնտու պայմաններով կարող է ստանալ Սովետական Միությունից։ Ամերիկյան «Նյու-Յորք հերալդ տրիբյուն» թերթը 1932 թվականի հունիսի 19-ի համարում տպագրել էր Ստամբուլի իր թղթակցի հաղորդումը, որտեղ, մասնավորապես, ասված էր հետեւյալը։

«...Շատ հետաքրքիր է նշել, քանի որ դա որպես մեծ իրոնիա է հնչում, որ այն ժամանակ, երբ արևմտյան երկըստիլները հրաժարվեցին թուրքիային վարկով մեքենաներ վաճառել, Սովետական Միությունն ի վիճակի եղավ անել այդ բանը՝ շպահանջելով որևէ երաշխիք։ ՍՍՌՄ-ը համաձայնվեց դրամի փոխարեն թուրքական ապրանքներ ստանալ՝ այդ վարկը մարելու համար...»։

ՍՍՌՄ-ի կողմից թուրքիային երկարաժամկետ ու անտոկոս վարկ տրամադրելու փաստը մեծ արձագանք գտավ Արևելքի հետամնաց երկրներում։ Այսպես, օրինակ, Հնդկա-

կան «Բոմբեյ քրոնիկլ» թերթն իր 1932 թվականի հունիսի 4-ի համարում զետեղել էր մի հոդված, որտեղ ասվում էր, որ «Թուրքիային տրված սովետական վարկը նոր դարաշրջան է բացում Արևելքի հետամնաց գյուղատնտեսական երկրների համար»: Նշելով այն փաստը, որ Թուրքիային հատկացված սովետական վարկը առաջին վարկն էր, որ երբեքցե Սովետական Միությունը տրամադրել էր օտարերկրյա որևէ պետության, թերթն ընդգծում էր այն առավելությունները, որոնք սովետական արդյունաբերական վարկով տրվում են հետամնաց երկրներին: «Թուրքիան, Ավղանստանը և Պարսկաստանը իրենց տնտեսական թուլության հետևանքով շեն կարող ելքոպական կամ ամերիկյան արտադրության մեքենաներ գնել, որովհետեւ նրանք շափազանց թանկ են արևելյան այդ աղքատ երկրների համար»<sup>32:</sup>

Անհրաժեշտ է նշել, որ նույնիսկ այդպիսի արտոնյալ պայմաններով հատկացված սովետական վարկի իրացումը Թուրքիայում հարթ չի անցել իր ժամանակին, այն որոշակի դիմագրության է հանդիպել Սովետական Միության նկատմամբ թշնամաբար տրամադրված թուրքական աղղեցիկ շըրջանների կողմից: Արխիվային փաստաթղթերից երևում է, որ մի շարք զեկավար գործիչներ ջանք շէին խնայում սովետական վարկի իրացումը խափանելու համար: Այսպիս, տնտեսության մինիստր Զելյալ Բայարը Թուրքիայում տեքստիլ կոմբինատի կառուցման հետ կապված տեխնիկական հարցերը ճշգրտելու նպատակով կառավարական հանձնաժողով ուղարկելով Սովետական Միություն, միաժամանակ այդ նույն տեխնիկական առաջարկներն ուղարկել էր Անգլիա ու Գերմանիա՝ «ապացուցելու համար, որ անգլիացիներն ու գերմանացիները կկարողանան ավելի լավ նախագծեր տալ, զգալիորեն ավելի էժան և ավելի կարճ ժամկետում...»<sup>33:</sup>

<sup>32</sup> Տես „Հա զարубежном Востоке“, 1932, № 2, стр. 106.

<sup>33</sup> Архив МВТ СССР, ф. „Восточный сектор“, оп. 342; д. 10, л. 146.

Հաղորդելով Սովետական Միության նկատմամբ աներախտապարտ ու ուժտաղրուժ դիրք բռնած Զելյալ Բայարի ու նրա խմբի անշնորհակալ գործունեության մասին, թուրքական կառավարական հանձնաժողովի անդամներից մեկը՝ Շեվքիթ Թուրքութ-բեյը խոստովանում էր, որ այդ խումբը «ուժեղ աշակցություն էր ստանում ազգեցիկ անձանց կողմից»<sup>34</sup>: Սովետական «Տուրկստրոյ» տրեստի կառավարչի հետ ունեցած մի այլ զրուցի ժամանակ հիշյալ Թուրքութ-բեյը հայտնել էր, որ Զելյալ Բայարի խումբը, իր ձեռքում կենտրոնացնելով Կայսերի քաղաքում կառուցվելիք տեքստիլ կոմբինատի շինարարության հետ կապված բոլոր հարցերը, տրեստի ստեղծման առաջին իսկ օրերից ամեն կերպ աշխատում էր կասեցնել նրա աշխատանքը:

«Նրան (Բայարի խմբին—Ռ. Ա.) հաջողվեց երկու ամսով հետաձգել էսքիզային նախագծի հաստատումը, ուշացնել սովետական մասնագետ-ինժեներների մեկնումը Թուրքիա՝ տեխնիկական անհրաժեշտ տվյալները տեղում ճշտելու նպատակով և այլն»<sup>35</sup>:

Թշնամական այդ գործողությունները նպատակ էին հետապնդում շինարարական աշխատանքների ձգձգման ձանապարհով Սովետական Միության համար անհնարին դարձնել տեքստիլ կոմբինատի ավարտումն ու գործարկումը սահմանված ժամկետին:

Զնայած բազմաթիվ խոշընդուներին, սովետական մասնագետներին, այնուամենայնիվ, հաջողվեց ժամանակին ավարտել Թուրքիայի խոշորագույն տեքստիլ կոմբինատի շինարարությունը:

Կայսերի կոմբինատն ամբողջովին հագեցված էր սովետական արտադրության մեքենաներով ու սարքավորումներով: Հիմնական տեխնիկական կազմերը պատրաստվել էին Մոսկվայում՝ հատուկ կուրսերում: Բացի դրանից, թուրքական կառավարության խնդրանքով վերոհիշյալ «Տուրկստրոյ»

<sup>34</sup> Արխիվ МВТ СССР, ф. „Восточный сектор“, оп. 359, д. 36, л. 9.

<sup>35</sup> Նույն տեղում, թ. 8:

տրեստը թուրքիայում կազմակերպել էր որակյալ բանվորական ուժի նախապատրաստման կուրսեր, որտեղ դասավանդում էին Սովետական Միությունից հրավիրված մասնագետները:

Կայսերի կոմբինատի շահագործման հանձնելու կապակցությամբ (1935 թվականի սեպտեմբերի 17-ին) թուրքիայում Սովետական Միության գեսպան Լ. Մ. Կարախանն ու թուրքիայի պրեմինիստը-մինիստը Խսմեթ Խոնյունն հեռագրեր փոխակեցին: Վերջինիս հեռագրում ասված էր.

«...Համագործակցելով մեզ հետ կապիտալ գործում, որին մենք ձեռնարկեցինք, Սովետական Միությունն իր բարեկամության նոր ապացույց տվեց մեզ»<sup>36</sup>:

Մի շարք թուրք գործիչներ և մասնագետներ, որոնք նախապատերազմյան տարիներին և, մասնավորապես, 1932—1935 թվականներին այցելել էին Սովետական Միություն, թուրքիա վերադառնալուց հետո խոստվանում էին, որ ՍՍՌՄ-ի տնտեսական քաղաքականությունը բարեկամական ու անշահախնդիր բնույթ է կրում, թուրքիային «ատրակացնելու» նպատակներ չետապնդում: Միաժամանակ նրանք նըշում էին այն փաստը, որ Սովետական Միության վերաբերյալ իրենց երկրում տարածվող լուրերը շատ հեռու են իրականությունից: Այսպես, թուրքական կառավարական հանձնաժողովի անդամներից մեկը՝ Զելյալեղին-բեյը հայտարարեց. «Վերադառնալով Անկարա, ես իմ բոլոր ընկերներին կպատճեմ, որ Հիմնովին փոխում եմ կարծիքս ՍՍՌՄ-ի մասին, որպես տեխնիկապես հետամնաց և իմպորտից նոր աղատագրվող մի երկրի, որովհետև այն ամենը, ինչ որ հանձնաժողովը տեսավլ, մինչև վերջը հակասում է ՍՍՌՄ-ի վերաբերյալ թուրքիայում տարածվող լուրերին»<sup>37</sup>: Եթե 1934 թվականի սեպտեմբերին՝ ՍՍՌՄ-ից հիշյալ հանձնաժողովի մեկնելուց առաջ, նրա անդամներին հանձնվեցին բամբակեղինք արդյունաբերության 1934 թվականի արտադրանքի նմուշների

<sup>36</sup> „Известия“, 22.IX.1935.

<sup>37</sup> Архив МВТ СССР, ф. Туркстрой, оп. 765, д. 15, л. 11.

ալբոմներ, հանձնաժողովի անդամներից մեկը ասաց հետևյալը.

«Մենք նորից համոզվում ենք թուրքիայի նկատմամբ ՍՍՌՄ-ի անկեղծ ու բարյացակամ վերաբերմունքի մեջ: Տեսնիկական այդքան տվյալներ պարունակող նյութը աշխարհի ո'չ մի ֆիրմա, ո'չ մի գնով մեզ չէր տա...»<sup>38</sup>:

Իսկ թուրքական հայտնի «Սումերբանկի» ղիրեկտոր Նուրուլա Էսաղը, որն ամենեին էլ բարեկամաբար չէր տրամադրված Սովետական Միության նկատմամբ, հայտարարեց, որ իր զրուցները սովետական ղեկավար գործիչների հետ իրեն համոզեցին այն բանում, որ ի ղեմս ՍՍՌՄ-ի թուրքերն ունեն անկեղծ ու ուժեղ բարեկամ:

«Ես իմ ընկերների հետ եղել եմ Խտալիայում, Շվեյցարիայում. ու Գերմանիայում: Ինչի ես հանդիպեցի այնտեղ, դա այն է, որ բոլորը ցանկանում են վաճառել իրենց ապրանքը, բայց վաճառել՝ առևտրական շահի նկատառումներից ելնելով... սակայն նրանց առաջարկներում չկա և ո'չ մի յոտացանկություն՝ օգնել մեզ աղատագրվելու օտարերկրյա տրնտեսական կախվածությունից: Ահա թե ինչումն է տարրերությունը մեր հանդեպ ՍՍՌՄ-ի ու Եվրոպայի երկրների վերաբերմունքի մեջ...»<sup>39</sup>:

Նույնիսկ հետպատերազմյան տարիների թուրքական մամուկի էջերում, որը Բայար-Մենդերեսի տիրապետության օրոք մինչև վերջը ծառայում էր այդ կլիկի նպատակներին և բայց ահայտ պրոամերիկյան ուղղություն ուներ, երբեմն տեղ են գտել ուշագրավ խոստովանություններ՝ ՍՍՌՄ-ի տնտեսական օգնության մասին: Այսպես, իր հակասովետական ուղղվածությամբ աշքի ընկնող «Աքշամ» թերթը 1956 թվականի մարտի 26-ին գրում էր.

«Թուրքերը լավ գիտեն սովետական տնտեսական օգնությունն այն պատճառով, որ 30-ական թվականներին ին-

<sup>38</sup> Архив МВТ СССР, ф. Түркстрой, оп. 765, д. 15, л. 9.

<sup>39</sup> Նույն տեղում, թ. 1:

Թուրքիայում սկսվեց ոռուների օդնության շնորհիվ<sup>40</sup>:

Պետք է ասել, որ առանձին թուրք հեղինակներ «ի միջի այլոց» հիշատակում են 1932—1935 թվականներին ՍՍՌՄ-ի կողմից Թուրքիային ցուցյա տրված տնտեսական օգնությունը և խոստովանում, որ այն իրոք անշահախնդիր բնույթ էր կրում: Այսպես, Քեմալ Քարփաթը, որը, ինչպես ցուցյա տրվեց նախորդ գլխում, սովետա-թուրքական հարաբերությունների մի շարք հարցեր լուսաբանում է միտումնավոր ձեռվ, վերը հիշատակված իր աշխատության մեջ նշում է, որ «Սովետները Թուրքիային 8 մլն. դոլարի արժողությամբ օգնություն հատկացրեցին՝ շփնտրելով ո՛չ մի շահ»<sup>41</sup>:

Այսպիսով, բերված փաստերը համոզիչ կերպով հերքում են թուրք հեղինակների այն սխալ և վերին աստիճանի միտումնավոր գնահատականները, որոնց համաձայն նախապատերազմյան տարիներին ՍՍՌՄ-ի կողմից Թուրքիային ցուցյա տրված ֆինանսական ու տեխնիկական օգնությունը իրը չի կրել անշահախնդիր բնույթ և Թուրքիան ՍՍՌՄ-ի հետ տընտեսական համագործակցությունից որևէ օգուտ չի ստացել:

\* \* \*

Թուրք պատմագրության մեջ խեղաթյուրվում է նաև երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակի սովետա-թուրքական հարաբերությունների պատմությունը:

Թուրք պատմաբանների մոտ գերիշխում է այն տեսակետը, որ սովետա-թուրքական հարաբերությունները սրվեցին ու վատթարացան ՍՍՌՄ-ի մեղքով, սովետական կառավարության վարած սխալ քաղաքականության հետևանքով: Սակայն նրանց մի մասը (Սաղըք, Քարփաթ, Քըլըզ, Թուրչակ) գտնում է, որ սովետա-թուրքական հարաբերությունները սրվեցին 1935 թվականի վերջից—1936 թվականից, մյուսները (Յուլման, Էսմեր) այն կարծիքն են հայտնում, որ մինչև 1939

<sup>40</sup> Akşam<sup>a</sup>, 26.III.1956.

<sup>41</sup> Kemal Kargat, p. 351.

թվականը՝ 2-րդ Համաշխարհային պատերազմի սկիզբը, Սովետական Միության ու Թուրքիայի միջև գոյություն ունեին նորմալ և անկեղծ փոխհարաբերություններ:

Այսպես, Նեչմեդդին Սադակը, որը երկար տարիներ հրատարակել է Թուրքիայի կառավարող շրջաններին մոտ կանգնած «Աքշամ» թերթը, իսկ այնուհետև գլխավորել արտաքին գործերի մինիստրությունը, գտնում է, որ սովետա-թուրքական հարաբերությունները սկսեցին փոխվել 1935 թվականից անմիջապես հետո, և հետեւալ բացատրությունն է տալիս. «Փոփոխությունը կապված էր ոչ թե Թուրքիայի սեփական քաղաքականության, այլ Համաշխարհային քաղաքականության ուժերի հետ»<sup>42</sup>: Զարգացնելով իր միտքը, հեղինակը «շրջվում» է դեպի Սովետական Միությունը և հանգում այն եզրակացության, որ իրը վերջինս փոխեց իր քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ: «Թուրքիայի նկատմամբ սովետական քաղաքականության փոփոխումը,—գրում է Սադակը,—տեղի ունեցավ Մոնտրեի կոնվենցիայի ստորագրությամբ. թեև նրա հոդվածները նպաստավոր էին Սովետներին, ուսական մամուլը այդ մոմենտից սկսեց դժգոհություն հայտնել Թուրքիայից և մեղադրել նրան «իմպերիալիստական տերությունների ձեռքին խաղալիք դառնալու մեջ»<sup>43</sup>: Քեմալ Քարփաթը ևս սովետա-թուրքական հարաբերությունների սրման մեղքը փորձում է բարդել ՍՍՌՄ-ի վրա, նրան մեղադրելով Թուրքիայի նիրքին գործերին միջամտելու մեջ:

«Սովետա-թուրքական բարեկամությունը,—գրում է Քարփաթը,—աստիճանաբար վատթարացավ 1935 թվականից հետո»<sup>44</sup>:

Համարյա նույնն է կրկնում Քըլըզը. «Հասարակական կարծիքը (թուրքական—Ռ. Ս.),—գրում է նա, —որը մինչև

<sup>42</sup> Necmeddin Sadak, Turkey faces the Soviets, „Foreign Affairs“, April 1949, vol. 27, № 3, p. 451.

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 452:

<sup>44</sup> Kemal Karpat, p. 351.

1935 թվականը միանգամայն բարյացակամ էր տրամադրված Սովետական Ռուսաստանի նկատմամբ, գնալով դառնում էր ավելի կասկածամիտ Թուրքիայում Ռուսաստանի ծավալած քայլայիշ գործունեության և նեղուցների նկատմամբ նրա մտադրությունների հանդեպ»<sup>45</sup>:

Նման մեղադրանքները թուրք Հեղինակներն անհրաժեշտ չեն համարում Հիմնավորել փաստերով, քանի որ այդպիսիք իրականության մեջ չկան: Սովետական Միությունը երբեք չի միջամտել Թուրքիայի ներքին գործերին: Այդ բանը նշել են իրենք՝ Թուրքիայի ղեկավար գործիչները: Այսպես, Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Թեվֆիկ Ռյուզյուն եղիալական «Աս-Սիյասա» թերթի թղթակցին տված ինտերվյուուի մեջ վերջինիս այն հարցին, թե «բոլշևիկները պրոպագանդա չեն տանում Թուրքիայում», կատեզորիկ կերպով պատասխանեց. «ՍՍՌ-ը երբեք չի միջամտել մեր գործերին»<sup>46</sup> (ընդունումը մերն է—Ռ. Ս.):

Ինչ վերաբերում է Մոնտերի կոնֆերանսին, թուրք Հեղինակներն անհանգուրժելի կերպով խեղաթյուրում են այդ կոնֆերանսում Սովետական Միության գրաված դիրքը և, միաժամանակ, շանք չեն խնայում Անգլիայի ու նեղուցների հարցում նրա ագրեսիվ քաղաքականության պաշտպանի դերում հանդես եկած Թուրքիայի դիրքը ամենադրական կողմերից ներկայացնելու համար: Եթե պրոֆ. Էսմերը, խոսելով Մոնտերի մասին, հարկ չի համարում պարզաբանել, թե ինչո՞ւ «կոնֆերանսի բանակցությունների ժամանակ Թուրքիայի և Սովետների միջև տարածայնություններ առաջ եկան...»<sup>47</sup>, ապա Բուրշակը, աղավաղելով փաստերը, պնդում է, թե Մոնտերի կոնֆերանսում Անգլիայի ու Ռուսաստանի դերերը՝ կողմնի համեմատությամբ՝ փոխվեցին: «Այս անգամ,—զրում է նա, —Անգլիան, պաշտպանելով Թուրքական տեսակետը, Ռուսաստանի դեմ ճակատ կազմեց»<sup>48</sup>:

<sup>45</sup> Атетур Килис, р. 112.

<sup>46</sup> Տե՛ս ЦГАОР СССР, ф. 4459, оп. 2, ед. хр. 161, л. 394.

<sup>47</sup> Dr. Ahmet Şükrü Esmer, Siyasi tarih, s. 231.

<sup>48</sup> Rıfkı Saltım Burçak, s. 67.

Իրականում, սակայն, ճիշտ հակառակն է տեղի ունեցել։ Ոչ բեկանք Անդիխան պաշտպանեց թուրքական տեսակետը, այլ Թուրքիան իր տեսակետը Մոնտրեի կոնֆերանսում շաշտպանեց, նա ուղղակի հրաժարվեց իր տեսակետից՝ հօգուտ Անդիխայի։ Այլ կերպ ասած, Թուրքիան ինքը մինչև վերջը մոլուանդորեն պաշտպանեց նեղուցների նոր կոնվենցիայի անդիխական նախագիծը, որը ոչ միայն բացահայտ հակասովետական ուղղվածություն ուներ, այլև հակասում էր Թուրքիայի անվտանգության շահերին։ Այդ մասին իր ժամանակին զրկել է նույնիսկ թուրքական մամուլում։ Այսպես, Ստամբուլում լույս տեսնող կիսապաշտոնական «Զումհուրիեթ» թերթը և նրա ֆրանսերեն հրատարակությունը հանդիսացնող «Ընեպյուբլիկ» թերթը 1936 թվականի հունիսի 12-ի իրենց առաջնորդողներում խիստ քննադատության էին ենթարկում նեղուցների վերաբերյալ անգլիական նախագիծը՝ մերկացնելով նրա հոդվածների «ազրեսիվ բնույթը»։ Ընդգծելով անգլիական այն թեղի անձեթեթությունը, որով առաջարկվում էր օտարերկրյա ուազմանավերի նեղուցներով անցնելը պատերազմի տարիներին ավելի մեծ շափով ազատ ճանաշվեր, քան խաղաղ ժամանակ, թերթերը եղրակացնում էին, որ այդ բանն «անհամատելի է Թուրքիայի անվտանգության հետ»<sup>49</sup>։

Միաժամանակ, Թուրքական պատվիրակությունը փորձեց կոնվենցիայի մեջ մտցնել այնպիսի կետեր, որոնք նըսպատակ ունեին խոշընդունելու Սև ծովում սովետական ուազմական նախատրումի զարգացմանը։

Ինչպես հայտնի է, Մոնտրեի կոնֆերանսի ժամանակ Անդիխան առաջ քաշեց սկզբովյան տերությունների և, առաջին հերթին, ՍՍՌՄ-ի դեմ ուղղված, նրանց շահերն անտեսող հետեւյալ պահանջը. բոլոր օտար ուազմանավերի անսահմանափակ մուտք Սև ծովը և վերջինիս «միջազգային բնույթի» ճանաշում։ Բացի դրանից, Անդիխան պահանջում էր սկզբովյան

<sup>49</sup> Տե՛ս „Известия“, 15.VII.1936.

և ոչ-սեծովյան պետությունների ռազմանավերի համար «Հավասար իրավունքներ» նեղուցներում ու Սև ծովում:

Թուրքական պատվիրակության ղեկավար Արասը Անդլիայի ներկայացուցիչների հետ ունեցած անդրկուլիսյան հանդիպումների ժամանակ շանք չէր խնայում Սովետական Միության արդարացի ռազմաքննիչը՝ ձախողելու համար։ Սակայն սովետական պատվիրակության հաստատում դիրքն ի վերջո հաղթանակեց և արևմտյան տերությունները ստիպված եղան համաձայնվելու նրա առաջարկների հետ։ օտար տերությունների ռազմանավերի տոննաժը սահմանափակվում էր, իսկ սեծովյան տերություններին հնարավորություն էր տրվում ցանկացած տոննայի ռազմանավեր անցկացնել նեղուցներով և այլն<sup>50</sup>։

Ինչպես տեսնում ենք, Սովետական Միությունը ոչ մի ագրեսիվ նպատակ չէր հետապնդում նեղուցների նկատմամբ, այլ ղեկավարվում էր բացառապես սեծովյան պետությունների անվտանգության շահերով։ Մոնտերեի կոնֆերանսում նրա առաջ քաշած ծրագիրը ստեղծված բարդ ու վերին աստիճանի լարված միջազգային իրազրության պայմաններում սեծովյան տերություններին օտար ռազմանավերի հնարավոր հարձակումից զգուշացնելու և նրանց անվտանգությունն ապահովելու միակ բանական և հնարավոր ուղին էր։ Եթե Թուրքիան պաշտպաներ նեղուցների կոնվենցիայի վերաբերյալ սովետական նախագիծը, ինչ խոսք, այն կատարյալ կլիներ՝ կարգելվեր օտար տերությունների ռազմանավերի մուտքը Սև ծովը։ Հետագա իրազարձությունների ժամանակ, հատկապես Հայրենական մեծ պատերազմի տարիներին, ակնառու դարձավ, որ նեղուցների հարցում կոմպրոմիսային համաձայնությունը, որպիսին էր 1936 թվականի Մոնտերեի կոնվենցիան, միանգամայն ձեռնտու էր Թուրքիայի հետադիմական շրջաններին՝ նրանց ձեռքերին լիակատար ազատություն տալով նե-

<sup>50</sup> Մոնտերեի կոնվենցիայի մասին տե՛ս „Дипломатический словарь“, т. 2. М., 1950, стр. 167—168; БСЭ, изд. 2, т. 28, стр. 261.

դուցներում, որը, ինչպես ստորև կտեսնենք, օգտագործվեց ֆաշիստական Գերմանիային ծառայելու նպատակներով:

Մոնտերեի կոնֆերանսում Սովետական Միության գրաված դիրքը, ինչպես երեսում է փաստերից, ոչ մի հիմք չետալիս թուրք պատմաբաններին պնդելու Թուրքիայի նկատմամբ սովետական արտաքին քաղաքականության փոփոխման մասին, որը և, նրանց կարծիքով, հանգեցրեց սովետա-թուրքական հարաբերությունների վատթարացմանը: Բնդիմակառակը, Մոնտերեի կոնֆերանսի ժամանակ թուրքական պատվիրակության վարքագիծը, բացահայտ պրոանգլիական դիրքը ապացուց էր անգլո-թուրքական այն մերձեցման, որն իր առաջին պայմանագրային արտահայտությունն էր գտնել տակավին 1935 թվականի նոյեմբերին Անգլիայի և Թուրքիայի միջև ստորագրված փոխադարձ օգնության մասին՝ այսպես կոչված միշերկրածովյան «ջենտլմենյան» համաձայնագրում, որով Թուրքիան փաստորեն հավանություն էր տալիս Արևմուտքի կողմից անցկացվող շմիջամտելու՝ այսինքն ազրեսիայի թողտվության տիրահռչակ քաղաքականությանը:

Անգլիայի հետ ավելի մերձենալու ճանապարհին կատարած Թուրքիայի հաջորդ քայլը՝ նրա ակտիվ մասնակցությունն էր անգլիական դիվանագիտության նոր հակասովետական գործարքին՝ մերձավորաբեկցան Անտանտին, որն իրենից ներկայացնում էր շորս տերությունների՝ Թուրքիայի, Իրանի, Իրաքի և Ավղանստանի քաղաքական մի բլոկ: Մերձավորաբեկցան Անտանտի կազմավորման մասին արձանագրությունը՝ Սաադաբաղի պակտը ստորագրվեց Հիշյալ տերությունների արտաքին գործերի մինիստրների կողմից 1937 թվականի հուլիսի 8-ին Թեհրանում՝ Իրանի շահի ամառային նստավայրը Հանդիսացող Սաադաբաղի պակտում: Սաադաբաղի պակտի ստեղծումով Անգլիան մտադրվել էր այդ նոր քաղաքական խմբավորումն օգտագործել հակասովետական նպատակներով:

Ինչպես է գնահատվում Սաադաբաղի պակտում Թուրքիայի մասնակցությունը թուրք հեղինակների կողմից:

Պրոֆ. Էսմերն, օրինակ, անսքող գոհունակությամբ նըշում է, որ Սաադաբաղի պակտի ստեղծման գործում Թուրքիան ղեկավար դեր խաղաց<sup>51</sup>: Սակայն ավելի կարևոր է նույն Հեղինակի խոստովանությունը Հիշյալ պակտի ստորագրման մեջ Անդլիայի խաղացած դերի մասին: Նշելով, որ «Սաադաբաղի պակտի ստորագրումը Անդլիայում էլ լավ ընդունվեց» և «Ամերիկայում էլ գոհունակություն առաջ բերեց», Էսմերն, այնուհետեւ, գրում է. «Ըստ էության, եթե Անդլիայի օգնությունը չկիներ, պակտի ստորագրումը հնարավոր չեր դառնաց»<sup>52</sup>:

Սակայն ոչ բալոր թուրք Հեղինակներն են ընդդում Անդլիայի ոգեշնչող դերը և Թուրքիայի ակտիվ մասնակցությունը պակտում: Այլ Հեղինակներ փորձում են Սաադաբաղի պակտը ներկայացնել որպես սոսկ «պաշտպանական» նպատակներ հետապնդող մի ձեռնարկում:

«Սաադաբաղի պակտը ստորագրած պետությունների խումբը,—գրում է Քըլըջը,—կարող էր դառնալ մի բլոկ ընդդեմ Սովետական Ռուսաստանի ճնշման՝ մի կողմից և «առանցքի» երկրների՝ մյուս կողմից»<sup>53</sup>:

Այսպես, ուրեմն, Հեղինակն այստեղ փորձում է նույնացնել Սովետական Միության մերձավորարկելյան քաղաքականությունը «առանցքի» երկրների և, առաջին հերթին, Գերմանիայի՝ Մերձավոր արևելքի երկրները ուժգին կերպով ներթափանցելու ուղղությամբ տարվող քաղաքականության հետ, որի արտահայտություններից մեկն էլ ֆաշիստական Գերմանիայի մի շարք գործիչների հաճախակի այցելություններն էին Թուրքիա: Հարկ չկա այստեղ Հերքելու բուրժուական պատմաբանների զառամյալ Հերյուրանքը «սովետական ճնշման» մասին: Միայն պետք է նշել, որ թուրք պատմաբանները, ջանալով սովետա-թուրքական հարաբերությունների սրման մեղքը բարդել Սովետական Միության վրա, Մոնտրեի կոնֆերանսի, Մերձավորարկելյան Անտանտի կազմավորման և

<sup>51</sup> Dr. Ahmet Şükrü Esmer, Siyasî tarih, s. 245.

<sup>52</sup> Նույն աեղում, էջ 248:

<sup>53</sup> Altemur Kılıç, p. 72.

մյուս այլ հարցերում ՍՍՌՄ-ի նկատմամբ թուրքիայի վարած ոչ բարիդրացիական, թշնամական քաղաքականության արդարացման փորձերի հետ մեկտեղ հեշտությամբ մոռացության են տալիս մի շարք այլ փաստեր։ Այսպէս, 1938 թվականի աշնանը Ստամբուլում կայացավ եվրոպայում և Մերձավոր արևելքի երկրներում լիազորագրված ճապոնական դիվանագետների խորհրդակցություն, որը թուրքական մամուլի մեծամասնության կողմից որակվեց որպես հակասովետական։ Թուրքական կառավարությունը թույլատրեց այդ կոնֆերանսն այն ժամանակ, երբ ճապոնիան վարում էր ՍՍՌՄ-ի նկատմամբ բացահայտ թշնամական քաղաքականություն և հենց այդ ժամանակաշրջանում ուազմական պրովոկացիայի դիմեց Խասան լճի մոտ։ Լավատեղյակ լինելով հիշյալ խորհրդակցության իսկական նպատակներին, թուրքական կառավարությունը միայն որոշ ժամանակ անց ստիպված եղավ արգելել այդ կոնֆերանսը<sup>54</sup>։

Այսպիսով, փաստերը վկայում են ՍՍՌՄ-ի նկատմամբ թուրքիայի կառավարող շրջանների ոչ բարիդրացիական քաղաքականության բազմաթիվ դրսերումների մասին, հատկապես 1935 թվականից հետո, որոնք և հետագայում հասցրեցին սովետա-թուրքական փոխարարերությունների սըրմանը։

Թուրք հեղինակներն իրենց աշխատություններում առանձնահատուկ տեղ են հատկացնում 1939 թվականի օգոստոսի 23-ի սովետա-գերմանական չհարձակման պակտին։ Զանալով քողարկել թուրքիայի կառավարող շրջանների հետագա ավելի ակտիվ մասնակցությունը անգլո-ֆրանսիական իմպերիալիստների վարած «մյունխենյան» քաղաքականությանը, նրանք Սովետական Միությանը մեղադրում են ֆաշիստական Գերմանիայի հետ պայմանագիր կնքելու մեջ, որի հետևանքով իր թուրքիան հարկադրված եղավ հիմնովին վերանայել իր արտաքին քաղաքականությունը։ Այսպես, Մյուքերերեմ Քյամիլ Սուն և Քյամիլ Սուն, խոսելով 1939 թ-

<sup>54</sup> Տե՛ս „Мировое хозяйство и мировая политика“, 1939, № 6, стр. 44.

վականի անգլո-ֆրանս-սովետական բանակցությունների մասին, զրում են, որ այդ բանակցությունները շարունակելով հանդերձ, Ռուսաստանը անսպասելիորեն Գերմանիայի հետ շնարձակման պակտ ստորագրեց, որով «Թուրքիայի քաղաքականության մեջ նրբին մի վիճակ ստեղծվեց, քանի որ Թուրքիան Ռուսաստանի հետ բարեկամ էր և Ֆրանսիայի ու Անգլիայի հետ էլ համաձայնության էր եկել: Եթե Ռուսաստանը Ֆրանսիայի և Անգլիայի հետ համաձայնության գար, — շարունակում են հեղինակները, — խնդիրը լուծված կլիներ: Իսկ Ռուսաստանը, Հանկարծակի պայմանագիր կնքելով Գերմանիայի հետ, Անգլիայից ու Ֆրանսիայից երես դարձրեց»<sup>55</sup>: Գրեթե նույն միտքն է անցկացնում Յուլմանը: «Ռուսաստանի ու Գերմանիայի միջև շնարձակման պակտի ստորագրումը, — գրում է նա, — Թուրքիայի արտաքին հարաբերություններում մի նոր փուլ բացեց»<sup>56</sup>: Եվ ահա թե ինչու. «Թուրքիան Անգլիայի հետ բանակցությունների մեջ մտնելով, հույս էր տածում, որ Սովետական Միությունն էլ արևմուտքի տերությունների հետ համաձայնության կամ»<sup>57</sup>:

Բայց չե՞ որ սովետական կառավարությունը, 1939 թվականի մարտից սկսած, շուրջ 4 ամիս բանակցություններ վարելով Անգլիայի ու Ֆրանսիայի ներկայացուցիչների հետ՝ Մոսկվայում, բոլոր հնարավոր միջոցները գործադրեց նրանց հետ համաձայնության գալու համար: 1948 թվականին Սովետական ինֆորմացիոն բյուրոյի կողմից հրապարակված «Պատմության կեղծարարները» պատմական տեղեկանքը ամբողջ աշխարհի հասարակական կարծիքի առաջ մերկացրեց 1939 թ. անգլո-ֆրանս-սովետական բանակցությունների ժամանակ արևմտյան տերությունների հետապնդած խարդախ նպատակները<sup>58</sup>:

<sup>55</sup> Mükerrer Kâmil Su ve Kâmil Su, Türkiye Cumhuriyeti tarihi, s. 141.

<sup>56</sup> „Forum“, 15 Agustos 1960, sayı 153, s. 10.

<sup>57</sup> Նույն տեղում:

<sup>58</sup> Այդ մասին տե՛ս «Պատմության կեղծարարները» (Պատմական տեղեկանք): Հայպետհրատ, Երևան, 1948, էջ 37:

Սովետական արտաքին քաղաքականության «փոփոխման» նույնպիսի սխալ տեսակետով են հանդես գալիս արդեն Հիշատակված թուրք հեղինակներ էսմերը և Բուրշակը:

«Սովետական Միությունը, —գրում է էսմերը, —խաղաղության նակատին միանալու փոխարեն օգոստոսի 23-ին Գերմանիայի հետ շարձակման պակտ ստորագրեց: Այս իրադարձությունը թուրքիայի արտաքին հարաբերություններում նոր էտապ բացեց»<sup>59</sup> (ընդգծումը մերն է—Ռ. Ս.): Այս հարցին ավելի հանգամանորեն անդրադառնալով իր «թուրքական դիվանագիտությունը 1920—1955 թթ.» հոդվածում, էսմերը կրկնում է վերը բերված թյուր գնահատականը<sup>60</sup>, իսկ Բուրշակը գտնում է, որ Սովետական Միությունը, «երես դարձրեց ընդհանուր խաղաղություն հաստատելու թեղից ու խաղաղությունը պահպանելու ջանքերից հրաժարվեց»<sup>61</sup>:

Այսպես, ուրեմն, ըստ թուրք հեղինակների, ոչ թե արևմտյան տերություններն էին հրաժարվել ֆաշիստական ազգիսիան կանխելու և խաղաղությունը պահպանելու ջանքերից, այլ Սովետական Միությունը:

Հրապարակված բազմաթիվ փաստաթղթերը, արևմուտքի ղեկավար գործիչների մերկացուցիչ խոստովանությունները համաշխարհային հասարակական կարծիքին արդեն տվել են համոզիչ վկայություններ այն մասին, թե ո՞ր պետությունն էր իսկապես անկեղծորեն պայքարում խաղաղության պահպանման համար, մասնավորապես երկրորդ համաշխարհային պատերազմին նախորդող վերջին ամիսներին: Տակավին 1939 թվականի ամռանը, երբ անգլո-ֆրանսիական ներկայացուցիչների պրովոկացիոն վարքագիծը ձախողման էր մոտեցնում Մոսկվայի բանակցությունները, կապիտալիստական աշխարհի ջերմ պաշտպաններից մեկը, Անգլիայի նախկին պրեմիերմինիստը կոյդ Զորդը գրանսիական «Սը սուար» թերթում

<sup>59</sup> Dr. Ahmet Şükrü Esmer, Siyasi tarih, s. 233.

<sup>60</sup> 84' Prof. Dr. Ahmet Şükrü Esmer, Türk Diplomasi, s. 85.

<sup>61</sup> Rıfki Salim Burçak, s. 96.

Հանդես եկավ մի խիստ հողվածով անգլիական կառավարության քաղաքականության դեմ՝ մերկացնելով Մոսկվայի բանակցությունների անհաջողության իրական պատճառը:

«Նեիլ Չեմբերլենը, Հալիֆֆարսը և Զոն Սայմոնը,—զրում էր նա, —ո՞չ մի համաձայնություն չեն ցանկանում Ռուսաստանի հետ»<sup>62</sup>:

Ինչ վերաբերում է 1939 թվականի օգոստոսի 23-ի սովետա-գերմանական շհարձակման պակտին, թուրք պատմաբանների տրված զնահատականը համընկնում է արևմուտքի բուրժուական պատմագրության մեջ պաշտպանվող այն միտումնավոր կարծիքի հետ, որի համաձայն Սովետական Միությունը իբր մատրվել էր այդպիսի պայմանագիր ստորագրել Գերմանիայի հետ: Մինչդեռ, ինչպես նշվում է «Հայրենական ՄԵծ պատերազմի պատմության» մեջ, «այդ պայմանագիրը ՍՍՌ-ի համար հարկադրված քայլ էր, որին նա դիմեց այն բանից հետո, երբ նրան վերջնականապես պարզ դարձավ Անգլիայի ու Ֆրանսիայի հետ հիտլերյան ազրեսիայի դեմ համատեղ պաշտպանության մասին համաձայնության հասնելու կատարյալ անհնարինությունը և նրանց հետ նման բանակցությունների բացարձակ անհուսալիությունը»:

Վերջին ժամանակներս արևմուտքի առանձին անաշառ պատմաբաններ խոստովանում են, որ հենց արևմտյան տերությունների վարած մյունիենյան քաղաքականությունն էր, որ հանգեցրեց այդ պակտի ստորագրմանը: Այսպես, բուրժուական պատմաբան Շերերը նշում է, որ «ուշադիր հետազոտելիս, գերմանա-սովետական պակտը ներկայանում է որպես լոկ մի բնական պատասխան թողովության (ազրեսիայի—խմբ.) այն քաղաքականությանն Արևելքում, որ անգլիական ու ֆրանսիական կառավարություններն սկսեցին անցկացնել Մյունիենից անմիջապես հետո»<sup>63</sup>:

<sup>62</sup> Տե՛ս «Պատմության կեղծարարները», էջ 43:

<sup>63</sup> A. Scherger, Le problème des „mains libres à l'Est“, „Revue d'histoire de la deuxième guerre mondiale“, octobre 1958, p. 24. Տե՛ս История Великой Отечественной войны Советского Союза 1941—1945 гг. Воениздат, М., 1960, т. I, стр. 177.

Անդրագառնանք խաղաղության այն ճակատին, որի մասին հիշատակում են թուրք պատմաբանները։ Նրանք արևմբույան տերությունների վարած ազրեսիայի թողտվության քաղաքականությունը պաշտպանում են այն պարզ պատճառով, որ ինքը Թուրքիան այդ շրջանում երես էր դարձրել ՍՍՌՄ-ի խաղաղասիրական քայլերը պաշտպանելու, այսինքն Թուրքիայի ազգային շահերից ենող քաղաքականությունից։ Հավանություն տալով դերմանական ազրեսիան դեպի արևելք՝ Սովետական Միության դեմ ուղղելու անզլո-ֆրանս-ամերիկյան հրահրող քաղաքականությանը։ 1939 թվականի մայիսի 12-ին հրապարակված դեկլարացիան՝ անզլո-թուրքական նախնական համաձայնության մասին քողարկված ձեռվ արտահայտում էր թուրքական կառավարող շրջանների նոր տրամադրությունները։ Դեկլարացիայի կապակցությամբ Թուրքիայի պրեմիեր-մինիստր Ռեֆիկ Սայդամը հետևյալ դեմագոգիկ հայտարարությունն արեց. «Թուրքիան վերջնականապես խզում է չեղողության քաղաքականության հետ, որովհետև միջազգային իրադրությունն այնպիսին է, որ դրսից եկող սպառնալիքը զնալով մեծանում է։ Այսպիսի պայմաններում Թուրքիայի համար վտանգավոր է չեղողության քաղաքականությունը շարունակելը։ Թուրքիան վճռականորեն անցնում է խաղաղության դիրքերը, բնդդեմ ազրեսիայի և կպաշտպանի խաղաղության գործը նրա կողմնակիցների հետ համատեղ»<sup>64</sup> (ընդգծումը մերն է—Ռ. Ս.):

Այս բոլորը սոսկ հայտարարություններ էին, իսկ գործնականում, Թուրքիայի վարած արտաքին քաղաքականությունը հեռու էր խաղաղության նպատակներին ծառացելուց։ Հայտնի է Թուրքիայի կառավարող շրջանների հանդես բերած ակտիվությունը Մերձավոր արևելքում, երբ այդ շրջանում Անգլիան ու Ֆրանսիան ուղղմական խոշոր ուժեր էին կենտրոնացրել, նպատակ ունենալով գրանք օգտագործել Սովետական Միության դեմ։ Հետևելով անզլո-ֆրանսիական բլոկի

<sup>64</sup> № 4 „Коммунистический Интернационал“, 1939, № 7, стр. 34.

ռազմական պատրաստություններին, Թուրքիայի ղեկավար-ները ձգտում էին հասնել այն բանին, որ թուրքական զորքերին հանձնարարվի «արշավանք ձեռնարկել» դեպի Բա-րու<sup>65</sup>:

Այսպիսով, 1924—1939 թվականների սովետա-թուրքա-կան հարաբերությունները ևս թուրք պատմաբանները լուսա-բանում են հակագիտական դիրքերից. նենդափոխում են պատմական իրականությունը, խեղաթյուրում Սովետական Միության արտաքին քաղաքականությունը Արևելքի երկրների, այդ թվում և Թուրքիայի նկատմամբ, գիտակցորեն լրության մատնում անցյալի փաստերը: Հիշյալ ժամանակաշրջանում ՍՍՌՄ-ի և Թուրքիայի միջև ինչպես միջազգային հարաբե-րությունների ասպարեզում, այնպես էլ տնտեսական ու կու-տուրական բնագավառներում տեղ գտած համագործակցու-թյունը, որը թուրք ղեկավար գործիչների և ժամանակի թուր-քական մամուլի գնահատությամբ իսկապես համապատաս-խանել է Թուրքիայի ազգային շահերին, ժամանակակից թուրք-պատմագրության մեջ գիտակցորեն մոռացության է տրվում: Անտեսելով փաստերը, թուրք հեղինակները ժխտում են ՍՍՌՄ-ի կողմից այդ շրջանում (1932—1935 թվականներին) Թուրքիային ցուց տրված տնտեսական ու ֆինանսական օգ-նության անշահախնդիր բնույթը՝ փորձելով նսեմացնել այդ օգնության նշանակությունը, մասնավորապես՝ Թուրքիայում ազգային արդյունաբերություն ստեղծելու գործում:

Թուրք պատմաբանների այս տենդենցը լիովին ներդաշ-նակ է բուրժուական արևմուտքի և, հատկապես, Ամերիկայի Միացյալ Նահանգների ղեկավար շրջանների կողմից տարած-վող այն թյուր տեսակետի հետ, որի համաձայն, իբր ԱՄՆ-ում է ծագել և առաջին անգամ նրա կողմից է իրագործվել արե-վելքի թույլ ու հետամնաց երկրներին տնտեսական օգնու-թյուն ցուց տալու գաղափարը:

<sup>65</sup> Տե՛ս „Новейшая история стран зарубежного Востока“, вып. 2 (1929—1939 гг.), изд. Московского университета, 1955, стр. 236.

Թուրք պատմագրության մեջ կոպիտ կերպով խեղա-  
թյուրված է նաև երկրորդ համաշխարհային պատերազմի  
նախօրյակի սովետա-թուրքական հարաբերությունների պատ-  
մությունը. մինչև վերջը արդարացվում է Թուրքիայի ղեկա-  
վար շրջանների պրոիմագերիալիստական, ՍՍՌՄ-ի շահերին  
ու նրա անվտանգությանը վնասող քաղաքականությունը և,  
միևնույն ժամանակ, աղավաղված տեսքով է ներկայացվում  
ՍՍՌՄ արտաքին քաղաքականությունը, վերջինիս վրա է  
բարդվում Թուրքիայի հետ հարաբերությունների վատթարաց-  
ման մեղքը:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱԾԱՑԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻ  
ՍՈՎԵՏԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆԵՆԳԱՓՈԽՈՒՄԸ

Հետպատերազմյան տարիներին թուրք պատմաբաններից ու քաղաքական գործիչների հրատարակած բազմաթիվ աշխատություններում, պատմության գասագրերում ու միմուարային բնույթի գրականության մեջ մեծ տեղ է հատկացված երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին թուրքիայի վարած արտաքին քաղաքականության հարցերին, մասնավորապես սովետա-թուրքական հարաբերություններին։ Թուրք հեղինակների հետապնդած հիմնական նպատակն է «ապացել», թե իրը թուրքիան երկրորդ համաշխարհային սպառազմի ամբողջ ժամանակաշրջանում՝ ինչպես 1939—1941 թվականներին, այնպես էլ ՍՍՌՄ-ի վրա ֆաշիստական Գերմանիայի ուխտագրուժ հարձակումից ընդհուպ մինչև Հայրենական մեծ պատերազմի վերջը Սովետական Միության նկատմամբ վարել է միանգամայն լոյալ, անկեղծ քաղաքականություն և մինչև վերջը հավատարիմ է մնացել իր կողմից ստանձնած պայմանագրային պարտավորություններին։ Դեռ ավելին, թուրք պատմաբանները պնդում են, որ պատերազմի տարիներին թուրքիայի գրաված «Հեղոք» դիրքը մեծապես օգնել է Սովետական Միությանը և նպաստել Հայրենական մեծ պատերազմում նրա ձեռք բերած համաշխարհային պատմական հաղթանակին։ Այսպես, թուրք պատմաբան Յահյա Օկզուն «Թուրք-սուսական պատերազմների պատմությունը» խորագիրը կրող գրքում հատուկ գլուխ է հատկացրել՝ «Թուրքական հաղթանակին թուրքերի ցույց տված օգնությանը»։

(ընդգծումը մերն է—Ռ. Ս.): Հակասովետական ոգով գրված և մինչև վերջը հակագիտական այս աշխատության մեջ հեղինակը պատմական իրականության խեղաթյուրումը հասցըրել է այն աստիճանի, որ 2-րդ համաշխարհային պատերազմը համարում է ոչ ավելի, ոչ պակաս, քան «բոլշևիկյան ղեկավարների ստեղծագործությունը» և պնդում, թե նրանք «լուրջ և խեղինական խաղաղություն հաստատելու նպատակ չունեին» և այդ պատճառով «խաղաղությանը անկեղծորեն ձգտող» արևմուտքի հետ ճակատ չկազմեցին<sup>1</sup>:

Թուրք հեղինակների աշխատություններում խեղաթյուրվում են 1939 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Մոսկվայում տեղի ունեցած սովետա-թուրքական բանակցությունները: Դրանց ձախողման մեջքը թուրք պատմաբանները փորձում են բարդել Սովետական Միության վրա<sup>2</sup>, միաբերան աղմկելով այն մասին, թե իբր 1939 թվականի Մոսկվայի բանակցությունների ժամանակ սովետական կառավարությունը ձգտում էր վերադառնալ նեղուցների հարցում ցարիզմի վարած իմպերիալիստական քաղաքականությանը, նեղուցների վրա հսկողություն հաստատել և այլն:

«Սարացօղլուի ուղևորությունը,—գրում է Քըլըջը,—ակներե դարձրեց, որ ՍՍՌՄ-ը մտագիր չէ բարի կամքի վրա հիմնված համաձայնագիր ստորագրելով<sup>3</sup>:

Ուրիշները (պրոֆ. Էսմեր, պրոֆ. Ուլոկ, Մյուքերրեմ Քյամիլ Սու, Քարփաթ) Սովետական Միությանը մեղադրում են երկդիմի քաղաքականության մեջ, մինչդեռ Թուրքիան, նրանց

<sup>1</sup> Yahya Okçu, Türk-Rus mücadele tarihi, Ankara, 1949, s. 197.

<sup>2</sup> Տես H. Emir Ereklet, İkinci Cihan harbi ve Türkiye, İstanbul, 1945, s. 23; Yahya Okçu, s. 189; Prof. Dr. Coşkun Uçok, Siyasi tarih dersleri, Ankara, 1957, s. 377; A. Halük Ülman. Türk-Sovyet münasebetleri (1923—1960). „Forum“, 15 Ağustos 1960, sayı 153, s. 10; Tahsin Ünal, s. 297; Prof. Enver Ziya Karal, s. 211; Prof. Dr. Ahmet Şükrü Esmer, Türk Diplomasisi, s. 85.

<sup>3</sup> Altemur Kılıç, p. 79.

կարծիքով, Մոսկվայի բանակցությունների ժամանակ շիտակ և անկեղծ առաջարկներով հանդես եկավ:

Այժմ տեսնենք, թե իրականում ինչպէ՞ս են ընթացել 1939 թ. սովետա-թուրքական բանակցությունները, ի՞նչ նպատակներ էին հետապնդում բանակցող կողմերը:

Ինչպես հայտնի է, 1939 թվականի մարտին Մոսկվայում սկսված անգլո-ֆրանս-սովետական բանակցությունների ժամանակ ակնհայտ դարձավ Անգլիայի և Ֆրանսիայի իմպերիալիստական շրջանների մտադրությունը՝ հասկացնել ֆաշիստական Գերմանիային, որ իրենք ամենաին էլ չեն պատրաստվում ուղղմական դաշինք կնքել ՍՍՌՄ-ի հետ: Լոնդոնում գերմանական դեսպան Դիրքսենը իր կառավարությանը ներկայացրած գաղտնի զեկուցագրում հաղորդում էր, որ արևմտյան տերությունների կողմից այդ բանակցությունները նպատակ ունեն «որոշել սովետական բանակի մարտունակությունը» և ոչ թե օպերատիվ համաձայնագրեր կնքել<sup>4</sup>:

Սովետական կառավարությունը հսկայական եռանդ գործադրեց, որպեսզի արևմտյան տերությունները և, առաջին հերթին, Անգլիան ու Ֆրանսիան մասնակցեն հիտլերյան ազրեսիայի դեմ բոլոր ջանքերի միավորմանը: Սակայն, ինչպես արգեն նշվեց, վերջիններս, իրենց հակասովետական ձգտումներով տարված, նպաստեցին ֆաշիզմի իմպերիալիստական պլաններին՝ դիտավորյալ կերպով ձախողելով 1939 թվականի մարտ—հունիս ամիսների Մոսկվայի բանակցությունները:

1939 թվականի սեպտեմբերի 1-ին ֆաշիստական Գերմանիան հարձակվեց Լեհաստանի վրա: Անգլիան ու Ֆրանսիան անմիջապես (սեպտեմբերի 3-ին) պատերազմ հայտարարեցին Գերմանիային և այդպիսով մարդկությունը ներգրավվեց համաշխարհային երկրորդ պատերազմի մեջ: Գեպքերի նման ընթացքը, ինչ խոսք, բոլորովին ձեռնտու չէր արևմտյան իմպերիալիստական տերություններին, նրանց

\* „Документы и материалы кануна второй мировой войны“. т. 2, Госполитиздат, 1948, д. № 21, стр. 117.

խաղաթղթերը խառնվեցին։ Սակայն Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարող շրջանները դրանից հետո էլ չհրաժարվեցին իրենց հակասովետական պլաններից։ Արևմտյան դիվանագիտությունը փորձեց «մյունիենյան գործարքը» մի այլ ձեռվ կրկնել՝ օտագործելով Թուրքիային։ 1939 թվականի սեպտեմբերի 25-ին ՍՍՌՄ-ի հետ փոխադարձ օգնության պայմանագիր կնքելու նպատակով բանակցություններ վարելու համար Մոսկվա ժամանեց Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Շ. Սարաջօղլուն։ Ինչպես հետագայում հաստատվեց, անգլիական դիվանագիտությունը նպատակադրվել էր Սովետական Միության ու Գերմանիայի միջև անհապաղ զինված ընդհարում առաջ բերել՝ զուգահեռ պակտերի սիստեմի օգնությամբ՝ սովետա-թուրքական և անգլո-ֆրանս-թուրքական նախարան Սարաջօղլուի Մոսկվա գալը արդեն ստորագրվել էին փոխադարձ օգնության պայմանագրեր մի կողմից Անգլիայի ու Թուրքիայի (1939 թվականի մայիսի 12-ին) և մյուս կողմից Ֆրանսիայի ու Թուրքիայի միջև (1939 թվականի հունիսի 23-ին)։ Անգլիայի, Ֆրանսիայի ու Գերմանիայի միջև պատերազմական վիճակի առկայության պայմաններում Թուրքիայի ու ՍՍՌՄ-ի միջև փոխադարձ օգնության պայմանագրի ստորագրումը անխուսափելիորեն զինված ընդհարում առաջ կրերեր Սովետական Միության ու Գերմանիայի միջև, այսինքն հենց այն, ինչի ձգտում էին ագրեսիայի սանձազերձման գլխավոր հրահրողները՝ Անգլիան ու Ֆրանսիան, ինչպես նաև Թուրքիան։

Սովետական կառավարությունը ժամանակին և ճիշտ կրուհից անգլո-ֆրանս-թուրքական դիվանագիտության այդ նոր քայլը։ Նա Թուրքիային առաջարկեց կնքել փոխադարձ օգնության վերաբերյալ երկկողմանի պակտ, որը պիտի սահմանափակվեր Սև ծովի և նեղուցների շրջաններով, գտնելով, որ այդպիսի պայմանագրի ստորագրումը չի կարող ՍՍՌՄ-ին մղել այնպիսի գործողությունների, որոնք նրան կներգրավեին զինված ընդհարուման մեջ՝ Գերմանիայի հետ։ Երկրորդ առաջարկությունը, որով Սովետական Միությունը հանդես եկավ

Մոսկվայի բանակցությունների ժամանակ, դա այն էր, որ  
նա Թուրքիայից երաշխիք էր պահանջում, որ պատերազմի  
սպառնալիքի դեպքում վերջինս ոչ-սկզբան տերությունների  
ռազմանավերին թույլ չի տա անցնել Բոսֆորը և մտնել Սև  
ծովը:

Թուրքական պատվիրակությունը մերժեց ՍՍՌՄ-ի այս  
երկու վերապահումներն էլ «և այդպիսով պակտի կնքումն  
անհնարին դարձրեց»<sup>5</sup>:

Ինչպես տեսնում ենք, 1939 թվականի սովետա-թուր-  
քական բանակցությունները ձախողվեցին ամենաին ոչ Սո-  
վետական Միության մեղքով, մի բան, որ փորձում են «Հաս-  
տատել» թուրք պատմաբանները: Դրանց ձախողման պատ-  
ճառը հենց Թուրքիայի գրաված դիրքն էր:

Պետք է ասել, որ թուրք հեղինակների այն հերյուրանքը,  
թե իր Սովետական Միությունը բանակցությունների ժամա-  
նակ պահանջում էր վերանայել նեղուցների ռեժիմի վերա-  
բերյալ 1936 թվականի Մոնտրեում կնքված միջազգային  
կոնվենցիան<sup>6</sup>, համառորեն շրջում էր արտասահմանյան մա-  
մուլի էջերում դեռևս այն ժամանակ, բանակցություններից  
անմիջապես հետո: Սարացօղլուի վերադարձից հետո արևմբտ-  
յան թերթերը ազմուկ բարձրացրին ՍՍՌՄ-ի դեմ՝ վերջինիս  
մեղադրելով նեղուցների հարցում արտոնյալ իրավունքներ  
պահանջնելու և Մոնտրեի կոնվենցիան հօգուտ իրեն վերա-  
նայելու մեջ: Սովետական կառավարությունը վճռականորեն  
հերքեց արտասահմանյան մամուլի հերթական այդ գրպար-  
տությունը, որակելով այն որպես «հերյուրանք և կեղծիք»<sup>7</sup>:

Սարացօղլուի Մոսկվա կատարած ուղևորության հետ  
կապված Արևմուտքի տերությունների հակասովետական մը-  
տագրություններն ակներև դարձան անզլո-ֆրանս-թուրքական  
պայմանագրի ստորագրությամբ:

<sup>5</sup> Доклад Председателя Совнаркома СССР на внеочередной сессии Верховного Совета первого созыва. „Известия“, I.XI.1939.

<sup>6</sup> *ŞE* Kemal Kağrat, p. 351, Dr. Ahmet Şükrü Ester, *Siyaset tarihi*, s. 255.

<sup>7</sup> „Известия“, I. XI. 1939.

1939 թվականի հոկտեմբերի 19-ին, շսպասելով նույնիսկ իր արտաքին գործերի մինիստրի վերադարձին (երբ նա գեռ ճանապարհին էր), թուրքական կառավարությունը Անկարայում Անգլիայի ու Ֆրանսիայի հետ ստորագրեց փոխադարձ օգնության պայմանագիր, որը նախատեսում էր.

1 Օգնություն Թուրքիային Անգլիայի ու Ֆրանսիայի կողմից այն դեպքում, «եթե Թուրքիան ներգրավվի պատերազմական գործողությունների մեջ ևլրոպական տերության հետ՝ այդ տերության կողմից Թուրքիայի դեմ կատարած ագրսիայի հետևանքով»:

2 Օգնություն Թուրքիայի կողմից այն դեպքում, «եթե ևլրոպական տերության կողմից կատարված ագրեսիայի ակտը հանգեցնի պատերազմի Միջերկրական ծովի գոտում, որտեղ կներգրավվեն Ֆրանսիան ու Միացյալ Թագավորությունը» և, միաժամանակ, օգնություն Ֆրանսիայի և Անգլիայի կողմից, «եթե ևլրոպական տերության կողմից կատարված ագրեսիայի ակտը հանգեցնի պատերազմի Միջերկրական ծովի գոտում, որտեղ կներգրավվի Թուրքիան» և այլն<sup>8</sup>:

Անգլո-ֆրանս-թուրքական պայմանագրի հակասովետական ուղղվածության մասին դժվար չէր կռահել Ազգային մեծ ժողովում Թուրքական հանրապետության պրեզիդենտ Խսմեթ Ինոնյուի արտասահման ճառից: Ելույթ ունենալով հերթական սեսիայի բացման օրը՝ 1939 թվականի նոյեմբերի 1-ին, Խնոնյուն Հայտարարեց, որ այդ պահանջ ժառայում է խաղաղության գործին մեր (այսինքն Թուրքական—Ռ. Ս.) շահերի գոտում»: Այլ կերպ ասած, Թուրքիայի կառավարող շրջանները հասկացնել էին տալիս, որ նրանք ոչինչ չունեն այդ բանի դեմ, եթե Փաշիստական ագրեսիան ուղղվի դեպի այնպիսի «գոտիներ», որոնց վրա անգլո-ֆրանսիական երաշխիքները չեն տարածվում, այսինքն՝ Սովետական Միության դեմ:

Թուրքիայի ղեկավար շրջանների պրոֆաշիստական քաղաքականությունն ավելի ցայտուն դրսևով վեցից Հայրենական մեծ պատերազմին նախորդող վերջին ամիսներին:

<sup>8</sup> Տես «Дипломатический словарь», т. I. Госполитиздат, 1948, стр. 137.

Ֆաշիստական Գերմանիայի զախչախումից հետո սպիտական բանակի ձեռքն ընկած Գերմանիայի արտաքին գործերի մինիստրության գաղտնի փաստաթղթերը մինչև վերջը մերկացնում են թուրքական կառավարողների նենդ քաղաքականությունը ՍՍՌՄ-ի նկատմամբ՝ նախքան Սովետական Միության վրա Գերմանիայի հարձակվելը։ Այսպես, թեղին ուղարկած գաղտնի հաղորդագրություններից մեկում, որը վերաբերում է 1941 թ. մայիսի 14-ին, Անկարայում գերմանական դեսպան ֆոն Պապենը Գերմանիայի արտաքին գործերի մինիստր Ռիբեռնտրոպին տեղեկացնում էր Թուրքիայի պրեզիդենտի հետ ունեցած իր զրույցի մասին, որի ժամանակ վերջինս հայտարարել էր, որ «Թուրքիան պատրաստ է իր վրա պարտավորություն վերցնել երբեք ոչինչ չձեռնարկել ընդդեմ Գերմանիայի և նրա հետ կոնֆլիկտի մեջ շմտնել»<sup>9</sup>։

Մի այլ փաստաթղթից երևում է, թե ինչպիսի ստոր նպատակների պետք է ծառայեր Թուրքիան գերմանացիների պատերազմական ծրագրերում։ Նույն մայիս ամսին Պապենին ուղարկած հեռագրում գերմանական կառավարությունը հայտնում էր նրան, որ «Թուրքիայի հետ պաշտոնական պայմանագիր կնքելու հետ մեկտեղ, կկնքվի նաև դադտնի պայմանագիր, որը հնարավորություն կտա մեզ Թուրքիայի վրայով տեղափոխելու անսահմանափակ քանակությամբ գենք և զինանյութեր...»։ Հեռագրում ասվում էր, որ այդ բոլորին հարկավոր է այնպիսի տեսք տալ, որ «գործնականում հնարավոր դառնար զենքի հետ միասին տեղափոխել նաև որոշ քանակությամբ զորք՝ քողարկված ձևով»<sup>10</sup>։

Գերմանացիներին այնքան անհրաժեշտ այդ պայմանագիրն իրեն երկար սպասեցնել շտվեց։ 1941 թ. հունիսի 18-ին, այսինքն Սովետական Միության վրա Փաշիստական Գերմանիայի ուխտագրութ հարձակումից 4 օր առաջ, Թուրքիայի

<sup>9</sup> „Документы министерства иностранных дел Германии“, вып. II. Германская политика в Турции (1941—1943). Госполитиздат, 1946, стр. 8.

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 11—12:

ու Գերմանիայի միջև ստորագրվեց պայմանագիր «բարեկամության ու շարձակման մասին»: Կնքելով այդ պայմանագիրը, Թուրքիան կոպիտ կերպով խախտեց 1929 թվականի դեկտեմբերի 17-ին Անկարայում ստորագրված սովետաթուրքական արձանագրությունը, որի 2-րդ հոդվածը պայմանագրով կողմերին պարտավորեցնում էր իրար տեղյակ պահել այլ պետությունների հետ քաղաքական պայմանագրեր կնքելու մասին և առանց մյուս կողմի համաձայնության այդպիսիք շատորագրել:

Գերմանա-թուրքական պայմանագիրը մեծ ծառայություն մատուցեց Հիտլերյան Գերմանիային: Անվտանգելով ֆաշիստական զորքերի բալկանյան թեր, այն հանդիսացավ Գերմանիայի կողմից Սովետական Միության դեմ պատերազմի նախապատրաստման վերջին օդակը: Միաժամանակ, այդ պայմանագրի ստորագրումով Թուրքիան բացահայտորեն ցույց տվեց, որ նա միանում է ֆաշիստական Գերմանիայի հակասովետական պլաններին: «Գերմանա-թուրքական պայմանագիրը հեշտացրեց ՍՍՌ-ի վրա Գերմանիայի հարձակումը և նրան հնարավորություն տվեց Թուրքիայի ձեւական չեղոքությունն օգտագործել ի վնաս ՍՍՌ-ի և ազատասեր այլ ժողովուրդների շահերի...»<sup>11</sup>:

Սովետական Միության վրա Գերմանիայի հարձակումից չետո Թուրքիայի ղեկավար շրջանները շապաղեցին իրենց գոհունակությունը հայտնելու գերմանա-թուրքական պայմանագրի «արդյունքների» վերաբերյալ: 1941 թվականի նոյեմբերի 1-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի բացման առթիվ արտասանած իր ճառում Թուրքիայի պրեզիդենտն ընդգծեց, որ 1941 թվականի հունիսի 18-ի պայմանագիրը «փոխադարձ վստահության մինուրու ստեղծեց»: «Այս արդյունքը ևս ցանկանում եմ գոհունակությամբ նշել... Այդ ժամանակից ի վեր թուրք-գերմանական հարաբերությունները, ոչ մի ժամա-

<sup>11</sup> „Дипломатический словарь в трех томах“, т. I. Госполитиздат, 1960, стр. 368—369.

Նակ շսրվելով, ընթանում են բարեկամության ուղիով»: Վերջում պրեզիդենտը վստահություն էր հայտնում, որ «բարեկամության ու Հարձակման» պայմանագիրը բոլոր հանգամանքներում շարունակում է և կշարունակի ուժի մեջ մնալ<sup>12</sup>:

Ժամանակակից թուրք պատմաբան պրոֆ. Ուչոկը իր «Թաղաքական պատմության» մեջ փորձելով «Հիմնավորել» իր այն կարծիքը, թե իբր 1941 թվականի հունիսի 18-ի պայմանագրով Թուրքիան «լրիվ շեղոք մի դիրք գրավեց», ակամայից մերկացնում է այդ շեղոքության իսկական իմաստը: «Գերմանիան էլ հենց այդ էր ցանկանում», — գրում է նա: «Թուրքիայի շեղոքության դեպքում, — բացատրում է իր միտքը հեղինակը, — պատերազմող պետությունների ռազմանավերը շեխն անցնի նեղուցներով և Սովետներին օգնություն ցույց չէին տա»<sup>13</sup>:

Անդրադառնանք այսպես կոչված «թուրքական շեղոքությանը» երկրորդ համաշխարհային պատերազմում: Այս հարցի քննության հարկ կա այն պատճառով, որ չնայած հետպատերազմյան տարիներին հրապարակված գաղտնի փաստաթթերին, որոնք համոզիլ հերապով համաշխարհային հասարակական կարծիքի առջև մերկացրին Թուրքիայի «չեղոք» քաղաքականությունը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, ժամանակակից Թուրքիայում լուս տեսնող պատմական գրականության մեջ անվերապահորեն արդարացվում և նույնիսկ փառաբանվում է Թուրքիայի «չեղոք» քաղաքականությունն ու նրա «դերը» մարդկության ընդհանուր հաղթանակի գործում:

1941 թ. հունիսի 22-ին Հիտլերյան Գերմանիան առանց պատերազմ հայտարարելու հարձակվեց Սովետական Միության վրա: Երեք օր հետո, հունիսի 25-ին թուրքական կառավարությունը Մոսկվայում իր դիսպանի միջոցով տեղեկաց-

<sup>12</sup> İn önpü dıyօt ki. Nutuk, hitabe, beyanat, hasbihaller. İstanbul, 1944, s. 103.

<sup>13</sup> Prof. Dr. Coşkun Uçok, Siyasi tarih dersleri. Ankara, 1957, s. 378.

թեց, որ «Գերմանիայի ու ՍՍՌՄ-ի միջև պատերազմով ստեղծված գրության առկայությամբ Ռեսպուբլիկայի կառավարությունը որոշել է հուակել թուրքիայի շեղոքությունը»<sup>14</sup>: Շատ շանցած, թուրքական պաշտոնական «Ռլուս» թերթը 1941 թրվականի հոկտեմբերի 5-ի համարում առանց իր հրճվանքը թաքցնելու գրում էր. «Գերմանացիները բացարձակապես ճիշտ վարդեցին՝ հարձակում գործելով Սովետների վրա»<sup>15</sup>:

Հայրենական պատերազմի արդեն առաջին ամիսներից սկսած թուրքական կառավարող շրջանները «Հեղոքության» քողի տակ թաքնվելով, սկսեցին ակտիվ աջակցություն ցույց տալ «առանցքի» երկրներին: 1941 թվականի հուլիսի 9-ին թուրքական կառավարությունը կոպիտ կերպով խախտելով 1936 թվականի Մոնտերեի կոնվենցիան, գերմանական «Զեեֆալկե» ռազմանավին թույլատրեց անցնել նեղուցներով և մտնել ՍԱ ծովը, իսկ օգոստոսին նույն ձևով ՍԱ ծովում երեվաց ֆաշիստական Խոտալիայի «Տարվիզիո» ռազմանավը<sup>16</sup>: Թուրքիայի այդ պրոֆաշիստական դիրքը հակահիտերյան կոալիցիայի մասնակիցներին՝ Սովետական Միությանն ու Անգլիային ստիպեց 1941 թվականի օգոստոսի 10-ին իրենց նույնանման նոտաներում «Հիշեցնել» թուրքական կառավարությանը նեղուցների ռեժիմի վերաբերյալ կոնվենցիան պահպանելու անհրաժեշտության մասին: Սակայն թուրքական դեկավարները ամենայն էլ մտադիր չեին հետևելու շեղոքության քաղաքականությանը: Ընդհակառակը, ընդհուպ մինչև պատերազմի վերջը նրանք հավատարիմ մնացին իրենց խոստմանը՝ «ոչինչ չձեռնարկել ի վնաս Գերմանիայի շահերի»: Սովետական կառավարությունը բազմից մատնանշել է պատերազմի տարիներին թուրքիայի կողմից նեղուցների ռեժիմի խախտման դեպքերի մասին:

<sup>14</sup> „Внешняя политика Советского Союза в период Великой Отечественной войны“, т. I. Госполитиздат, 1946, стр. 129.

<sup>15</sup> Տես Ս. Ստյոնգել, Վ տюрьме и на „воле“. Перевод с турецкого. Изд. иностр. лит., М., 1952, стр. 76.

<sup>16</sup> Տես „Правда“, 14. VIII. 1946.

Այսպես, 1942 թվականի նոյեմբերի 4-ի իր նոտայում սովետական կառավարությունը թուրքիայի ուշադրությունը վերստին հրավիրում էր այն բանի վրա, որ Գերմանիան մը-տադիր է առևտրական նավերի քողի տակ Սև ծովն անցկացնել օժանդակ ռազմանավեր՝ 140 հազ. տ ընդհանուր ջրատարողությամբ և նախազգուշացրեց, որ այդ նավերի բացթողումը նեղուցներով կհանդիսանար Մոնտրեի կոնվենցիայի կոպիտ խախտում: Թուրքական կառավարությունը, սակայն, թույլատրեց գերմանական այդ նավերին անցնել նեղուցներով և մանել Սև ծովը: 1944 թ. մայիս-հունիս ամիսներին տեղի ունեցան նեղուցներով գերմանական ռազմանավերի անցման մի քանի գեպքեր: Սովետական կառավարությունը բռնոք հայտնեց թուրքական կառավարությանն այն բանի գեմ, որ վերջինս թույլատրել է գերմանական ռազմական և ռազմա-օժանդակ նավերին անցնել Սև ծովից էգեյան ծովը: Դրանք «էմս» և «Կրիպտարանսպորտ» տիպի տարրեր տոննած ունեցող այն 13 նավերն էին, որոնք մասնակցում էին ռազմածովային օպերացիաներին Սև ծովում: Պատերազմի տարիներին նեղուցների ռեժիմի խախտման բազմաթիվ այլ գեպքեր են եղել, որոնց մասին սովետական կառավարությունը հայտնել է 1946 թ. օգոստոսի 7-ի և սեպտեմբերի 24-ի իր նոտաներում: Հայտնի է, որ թուրքական կառավարությունն ըստ էության չի կարողացել հերքել սովետական նոտաներում բերված փաստերից և ոչ մեկը:

Ժամանակակից թուրք պատմաբանները, արհամարհելով ոչ-հեռավոր անցյալի փաստերը, ձգտում են ամենադրական կողմերից ներկայացնել թուրքիայի կառավարող շրջանների քաղաքականությունը նեղուցների հարցում:

Վերջերս թուրքիայում լույս տեսած «Նոր թուրքիան» վերնագիրը կրող գրքում, որն, ի դեպ, հրատարակվել է Ռոկ-Փելլերի փոնդի գումարների օգնությամբ, պրոֆ. Էմերը թուրքիայի դիվանագիտությանը նվիրված իր հոդվածում անվերապահորեն արդարացնելով պատերազմի տարիներին թուրքիայի վարած «շեղոք» քաղաքականությունը փորձում է

«պատճառաբանել» վերջինիս կողմից նեղուցների ռեժիմի խախտման դեպքերը: Այսպես, Հիշատակելով 1944 թվականի ապրիլի 20-ին գերմանական նավերի՝ նեղուցներով դեպի Խումինիա անցնելու դեպքը, Հեղինակը պնդում է, որ իբր թուրքական կառավարությունը տեղյակ չեր այդ նավերի վրա սպառազինություն լինելու մասին<sup>17</sup>: Իսկ վերը հիշված Քըլըջը գրում է, «Չնայած պրոգերմանական ու պանթուրքական կլիկների գործունեությանը և Մենեմհնջիօղլուի (Թուրքիայի արտաքին գործերի մինիստրը—Ռ. Ս.) ու Սարաջօղլուի բավականին անզգույշ զրուցներին, թուրքական շեղոքությունը, ամբողջությամբ վերցրած, կոռեկտ էր և ոչ ի վնաս դաշնակիցների... նրա կողմից նեղուցների պաշտպանությունը ճիշտ էր, առանց որևէ թշնամական հետևանքի Սովետական Խուսաստանի նկատմամբ»<sup>18</sup> (ընդգծումը մերն է—Ռ. Ս.): Հեղինակը փորձում է ժխտել Թուրքիայի կողմից նեղուցների ռեժիմի խախտման բազմաթիվ դեպքերը, պնդելով, որ Սովետական Միության վրա գերմանացիների հարձակումից հետո Թուրքիան «կտրուկ կերպով մերժեց ճանապարհ տալու և նա գերմանական ու իտալական ոչ մի նավի թուլ չի տվել Միջերկրականից անցնել Սև ծովը»<sup>19</sup>: Իսկ Մյութքերեմ Քյամիլ Սուն և Քյամիլ Սուն, լրիվ արդարացնելով պատերազմի բոլոր տարիներին Թուրքիայի կառավարող շրջանների վարած «շեղոք» քաղաքականությունը, միաժամանակ շեշտում են Թուրքիայի «պողիտիվ» գերը: «Երկրորդ համաշխարհային պատերազմում,—գրում են նրանք,—թուրքական կառավարության շեղոքությունից Սովետական Միությունը օգուտ քաղեց»<sup>20</sup>:

«Թուրքիայի շեղոքությունը Խուսաստանի անվտանգու-

<sup>17</sup> Prof. Dr. Ahmet Şükrü Esmer, Türk Diploması, s. 93.

<sup>18</sup> Altıemur Kılıç, p. 97.

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 112:

<sup>20</sup> Mükerrem Kâmil Su ve Kâmil Su, s. 181.

թյունն ապահովեց նեղուցների ու Անատոլիայի կողմից՝<sup>21</sup>— եզրակացնում են Հեղինակները:

Թե ինչպես էր Թուրքիան ապահովում Ռուսաստանի անվտանգությունը Սև ծովի շրջանում, թուլլ տալով գերմանական նավերին մտնել Սև ծովը և ավազակային հարձակումներ գործել ՍՍՌՄ սեծովյան նավահանդիստների վրա, գերեսում ցույց տրվեց: Այժմ տեսնենք, թե ինչպիսի «անվտանգություն» էր ներկայացնում Թուրքիան Անատոլիայի կողմից:

Քաջ հայտնի է, որ Թուրքիայի կառավարող շրջանները՝ մինչև Վոլգոգրադի ճակատամարտը բացահայտորեն արտահայտում էին իրենց պրոֆաշիստական գիրքորշումը և Սովետական Միության նկատմամբ անսրող թշնամանքը: Թուրքութեական պրոֆիներները անհամբերությամբ սպասում էին: Վոլգոգրադի անկմանը՝ Սովետական Միության վրա հարձակվելու համար: Սովետա-թուրքական սահմանի մոտ՝ Տրապիզոնի ու Խոփայի շրջաններում 1942 թվականի ամռանը զդալի թվով թուրքական զորքեր էին կենտրոնացվել, որի մասին հետազյում՝ 1945 թվականի նոյեմբերի 1-ին Մեջլիսում արտասահմած իր ճառում խոստովանեց Թուրքիայի այն ժամանակվա պրեգիդենտ Ինոնյուն: Սովետա-թուրքական սահմանի մոտ թուրքական զորքերի կենտրոնացումը, ինչ խոսք, համապատասխանում էր ֆաշիստական Գերմանիայի շահերին: Տակավին 1942 թվականի հունվարին Ինոնյունի հետ ունեցած զրուցի ժամանակ Պապենը մատնանշել էր հետեւյալը «...Եթե մենք գարնանը հարձակում սկսենք Կովկասի վրա, ապա մեզ համար շափազանց արժեքավոր կլիներ թուրքական զորքերի կենտրոնացումը ուստական սահմանի վրա»<sup>22</sup>: Իսկ փետրվարի 16-ին Պապենը հաղորդելով Ռիբենտրոպին նուման Մենեմենցիութիւնուի հետ ունեցած իր զրուցի մասին, գրում էր. «Ինչ վերաբերում է զինված ուժերի դիսլոկացիային, նա (Մենեմեն-

<sup>21</sup> Mükemmət Kâmil Su ve Kâmil Su, s. 181.

<sup>22</sup> Документы министерства иностранных дел Германии, вып. II, Германская политика в Турции (1941—1943), стр. 51.

չիօղլուն—Ռ. Ա.) ինձ հավաստիացնում է, որ Թուրքիան լիովին հաշվի կառնի նոր իրադրությունը: Նկատի ունենալով կովկասյան արշավանքը, դա ևս մեզ համար աջակցություն կլինի»<sup>23</sup>:

1942 թվականի օգոստոսի 31-ին թուրքական թերթերը տպագրեցին Սըվասում Սարաջօղլուի արտասանած ճառը, որտեղ նա ասել էր Հետելալը. «Մենք մտադիր չենք բաց թողնել Հարմար առիթը՝ մի հարվածով վերադարձնելու այն, ինչ մենք կորցրել ենք պարտության տարիներին (ընդուումը մերն է—Ռ. Ա.)<sup>24</sup>: Անգլիական պատմաբան Վերե-Հոջը պրոթուրքական ողով գրված «Թուրքիայի արտաքին քաղաքականությունը 1918—1948 թվականներին» վերնագրով գրքում նշում է, որ 1942 թվականի ամռանը և աշնանը Սարաջօղլուն և Մենեմենջիօղլուն «ամեն կերպ ձգտում էին համոզել գերմանական դեսպանին, որ Թուրքիայի չեղոքությունը ժամանակու երկույթ է, և որ գեպքերի հետագա ընթացքը կախված է Գերմանիայի հաղթանակից»<sup>25</sup>: Հասկանալի է, որ Թուրքիայի թշնամական մտադրությունները, ՍՍՌՄ-ի նկատմամբ նրա հարձակողական պլանները հայտնի եին սովետական կառավարությանը, որը պատերազմի նույնիսկ ամենադժվարին պահին Կովկասում պահում էր համապատասխան քանակությամբ զորք, որը նա կարող էր հաջողությամբ օգտագործի քաշիստական բանակների առաջխաղացման դեմ:

Սակայն Թուրքիայի խարդախ «չեղոքությունը» սովետական զորքերին գամել էր հարավային ճակատում: Այժմ թուրք հեղինակները գրում են «Թուսաստանին օգնելու», նրա «թիկունքն ապահովելու», «հարձակումից պաշտպանելու» և նման շինծու «իրողությունների» մասին, անհրաժեշտ շհամարելով բացատրել, թե ինչո՞ւ, այնուամենայնիվ, Թուրքիան չհարձակեց Սովետական Միության վրա: Արդյոք այն պատճառով, որ Թուրքիայի հետադիմական դեկավարները համա-

<sup>23</sup> Документы министерства иностранных дел Германии, вып. II, Германская политика в Турции (1941—1943), стр. 51.

<sup>24</sup> Տես C. Устюнгель, В тюрьме и на „воле“, стр. 77.

<sup>25</sup> E. R. Vere-Hodge, Turkish Foreign Policy, p. 153.

Կրում էին ՍՍՌՄ-ի գլխավորությամբ ազատասեր ժողովուրդ-ների մղած ազնիվ պայքարին, թէ՝ նրանք որոշել էին հավատարիմ մնալ Հարձակման մասին 1925 թվականի սովետաթուրքական պայմանագրին: Իհարկե, ոչ այդ պատճառներով:

Գերմանիայի արտաքին գործերի մինիստրության գաղտնի փաստաթղթերից հայտնի գարձավլ, որ Սովետական Միության վրա թուրքական հարձակումը նախատեսվում էր իրականացնել իրանական սարահարթի վրայով՝ Բաքվի ուղղությամբ, ըստ որում թուրքիայի ղեկավար շրջանները համոզված էին, որ «անգլիացիները իրանում քիչ թե շատ նշանակալից դիմադրություն ցուց չեն տա»: Ինչպես պարզվեց «Պրավդա» թերթում՝ 1947 թվականի մարտի 27-ին զետեղված նյութերից, ՍՍՌՄ-ի վրա թուրքիայի հարձակումը նշանակված էր 1942 թ. նոյեմբերին, այն բանից հետո, երբ Բեռլինը կհայտարարեր Վոլգոգրադի անկման մասին:

1947 թվականի մարտին ամերիկյան «ՊՄ» թերթը տրպագրեց թուրքական կառավարության նախկին անդամներից մեկի երկու հոդվածները, որոնցում հեղինակը (որի անունը թերթը չէր հայտնում) մերկացնում էր թուրքիայի կառավարող շրջանների այսպես կոչված «չեղողությունը»: Թուրքական կառավարությունը, — գրում էր նա, — 1942 թվականին բանակի զորահավաք անցկացրեց և որոշում ընդունեց թիկունքից հարձակվել Սովետական Միության վրա: Պատերազմի հայտարարումը նշանակված էր 1942 թվականի նոյեմբերին:

«Ամեն ինչ պատրաստ էր, — շարունակում էր հոգվածի հեղինակը, — թուրքիան պատրաստվում էր պատերազմի մեջ մտնել Սովետական Միության դեմ, որի հետ նա կապված էր դաշնակցային պայմանագրով», բայց երբ պրեզիդենտը զանգահարեց Պապենին, հայտնելու նրան, որ Գերմանիան նոր դաշնակից է ձեռք բերում, այսինքն, որ թուրքիան պատերազմի մեջ է մտնում, վերջինս ասաց, որ Վոլգոգրադի տակ գերմանական զորքերը դժվարությունների են հանդիպել և սկսել են նահանջել իմանալով այդ մասին, նա այլևս չհայտ-

նեց՝ Պապենին Թուրքիայի իրական մտադրությունները և ան-  
հապաղ փոխեց մորիլիզացիայի մասին տրված իր կարգադր-  
ությունը: «Հետագա իրադարձությունները, — եղբակացնում  
էր հեղինակը, — ցուց տվեցին, որ Թուրքիան բոլոր հիմքերն  
ուներ Պապենին երախտապարտ լինելու նրա շատախոսու-  
թյան համար...»: Վերջում թուրքական կառավարության նախ-  
կին անդամը հավաստիացնում էր, որ այդ բոլորը իսկական  
ճշգրտություն է, և որ ինքը «այդ միջադեպին վկա է եղել»<sup>26</sup>,

Նույնիսկ մինչև վերջը հակասովետական ոգով գրված  
իր գրքում ամերիկյան պատմաբան Այվը Սփերթը խոս-  
տովանում է, որ պատերազմի տարիներին և հատկապես  
Մոսկվայի ու Վոլգոգրադի ուղղությամբ գերմանական բա-  
նակների առաջխաղացման ժամանակ «պաշտոնապես շեղոք  
թուրքերը գերմանացիների հետ սերտ մերձեցման մեջ մտան»,  
իսկ «1942 թվականի վերջին կովկասյան սահմանի վրա զգալի  
թվով զորք կենտրոնացրեցին և մամուլի սկսած հակասովե-  
տական կամպանիան Թուրքիայում հասավ մի նոր բարձ-  
րության»<sup>27</sup>:

Ճիշտ է Վոլգոգրադի տակ գերմանական զորքերի ջախ-  
չախումը մի փոքր թուլացրեց թուրք ուսակցիոներների շովի-  
նիստական մոլուցը, սակայն Թուրքիայի կառավարող շրջան-  
ները ամենակին էլ չհրաժարվեցին ֆաշիստական Գերմանիային  
առաջվա նման աշակցելուց: 1942 թվականի գեկտեմբերին  
արտաքին գործերի մինիստր Մենեմենջիօլլուն «կառավարու-  
թյան անոնից և նրա հանձնարարությամբ հաղորդեց Պապե-  
նին, որ Թուրքիան իր շեղոքությունից չի հրաժարվի նույնիսկ  
այն դեպքում, եթե «առանցքը» գտնվի իր կրախի նախօրյա-  
կին, այլ ընդհակառակը, նրան կառաջտպանի բոլոր հանգա-  
մանքներում...»<sup>28</sup>,

<sup>26</sup> „Правда“, 27. III. 1947.

<sup>27</sup> Ivar Spector, The Soviet Union and the Muslim World 1917—1958. University of Washington Press, 1959, p. 201—202.

<sup>28</sup> Документы министерства иностранных дел Германии, вып. II. Германская политика в Турции (1941—1943), стр. 133.

Վոլգոգրադի տակ գերմանացիների կրած պարտությունից հետո Թուրքիայի «Հեղոքությունը» ավելի մեծ նշանակություն էր ստանում Գերմանիայի համար և թուրքական կառավարությունը, ճիշտ է, ավելի զգուց և քողարկված ձեռվշարունակում էր օգնել Գերմանիային ինչով կարող էր՝ ստրատեգիական հումքով ու մթերքներով (բրոմի հանք, բամբակի բուրդ, ծխախոտ և այլն), առեւտուր անելով, գերմանական ավելը նեղուցներով բաց թողնելով և այն:

Այս հարցերը, հասկանալի պատճառներով, տեղ չեն գրտել թուրք պատմաբանների աշխատություններում: Դրանք գիտակցաբար շրջանցվում են: Դրա փոխարեն, կոպիտ կերպով խեղաթյուրելով պատմական իրականությունը, թուրք հեղինակները սովետական կառավարությանը մեղադրում են Թուրքիայի նկատմամբ ազրեսիվ նպատակներ հետապնդելու մեջ: Այսպիս, օրինակ, Յունալը գրում է, որ Վոլգոգրադի տակ տարած հազթանակից հետո հակահարձակման պատրաստվելով «Ռուսաստանը, ապագայում իր նպատակները հեշտությամբ իրագործելու համար, այժմ արդեն չէր ցանկանում, որ մենք պատերազմի մեջ մտնենք»<sup>29</sup>: Իսկ որո՞նք էին Ռուսաստանի ազրեսիվ նպատակները: Պարզվում է, որ Ռուսաստանը մտադրվել էր «կու տալ» Թուրքիային և այդպիսով «պատմական իր նպատակը» հաջողությամբ պսակել:

Հետաքրքիրն այստեղ այն է, որ Յունալը, ի տարբերություն թուրք մյուս հեղինակների, մի փոքր այլ ձեռվ է ներկայացնում Թուրքիայի «մասնակցությունը» Հ-րդ համաշխարհային պատերազմին: «Ռուսաստանի այդ քաղաքական նպատակն իմանալով,—գրում է Յունալը,—և մեր բարեկամներ Անգլիայի ու Ամերիկայի հիշեցումից հետո մենք 1945 թվականին Գերմանիային ու Ճապոնիային պատերազմ հայտարարեցինք և բնական ձեռվ պատերազմի մեջ մտաեմ»<sup>30</sup> (ընդգծումը մերն է—Ռ. Ա.):

<sup>29</sup> Tahsin Ünal, s. 291.

<sup>30</sup> Նայն տեղում

Թուրք պատմաբանները անհիմն պարծենկոտությամբ շեշտում են Թուրքիայի «զրական» ներմուծությունը Հայրենական պատերազմում ՍՍՌՄ-ի տարած պատմական հաղթանակի գործում՝ Թուրքիայի «չեղոքությունը» համարելով Թուսաստանի հաղթանակի գրեթե ամենակարևոր գործոնը:

«Երբ գերմանական բանակները անսպասելի մի հեղեղի նման առաջ էին շարժվում Ռուսաստանում և ոռուները սև օրեր էին ապրում, այդ մոմենտին բոլորովին նոր երկու միլիոն թուրքական սվինների՝ գերմանացիների կշեռքի նժարին դնելը Ռուսաստանը ընդմիշտ կարող էր ոչնչացնել»—գրում է Օկ-չուն<sup>31</sup>: Պետք է ասել, որ այս հեղինակը երկրորդ համաշխարհային պատերազմի պատմության նենդափոխման մեջ գերազանցում է Թուրք մյուս պատմաբաններին: «Ռուս-թուրքական պատերազմների պատմությունը» խորագրով իր գրքում նա փորձում է «հիմնավորել» Թուրքիայի գերը «Թուսաստանին կործանումից փրկելու» գործում:

«Գերմանական բանակների հարվածների ներքո դեպի մահ գնացող Ռուսաստանին,—ցինիկորեն գրում է նա, —անգլո-սաքսոնները և Թուրքիան օգնության շտապեցին... Մարդկության երջանկության գործի համար միավորված այս ազգերը շտապեցին աջակցելու Ռուսաստանին» (ընդգծումը մերն է—Ռ. Ս.): հեղաթյուրելով փաստերը, հեղինակը պնդում է, որ Ռուսաստանը, ինչպես առաջին համաշխարհային պատերազմում, դարձյալ առանց զինամթերքների ու սպառազինության մնաց: «Միայն հրաշքը կարող էր փրկել Ռուսաստանին»,—գրում է նա: Այդ հրաշքը, ըստ հեղինակի, անգլո-ամերիկյան ու բուրքական օգնությունն էր<sup>32</sup>:

Սակայն ինչո՞ւմն էր կայանում Թուրքիայի «օգնությունը» Սովետական Միությանը, ինչպես էր Թուրքիայի «համարձակ չեղոքությունը» (ըստ նրա արտահայտության) ուժեղ հենարան ծառացում Ռուսաստանի համար: «Թուրքիայի չե-

<sup>31</sup> Յահյա Օկչա, Տ. 190. (հեղինակը գլխավոր շտաբի սպա էր):

<sup>32</sup> Նույն աեղում, էջ 197:

զոքության շնորհիվ,—գրում է Օկտոն,—Քասրայի ու Պարսից ծոցի վրայով Ռուսաստան հոսող օգնության հեղեղը ուժեղացավ, նրա ձախ թևը պաշտպանվեց և Ռուսաստանը հանդիսատ անցկացնելով հակահարձակման գործողությունները, պատերազմը շահեց»: «Այսպիսով,—եզրակացնում է հեղինակը,—Թուրքիան Ռուսաստանը ազատագրողների շարքում գեր է խաղացել»<sup>33</sup> (ընդգծումը մերն է—Ռ. Ս.): Պատմության կեղծարարության, փաստերի կոպիտ աղավաղման մեջ «յուրահատուկ» տեղ ունի Ահմեդ Էմին Յալմանը, որը հայտնի է որպես ժուռնալիստ և քաղաքական գործիչ, երկար տարիներ մոտ է կանգնած եղել կառավարող շրջաններին: Զանալով վեր հանել Թուրքիայի «դրական» գերը Համաշխարհային պատերազմում, Յալմանը ԱՄՆ-ում հրատարակված «Իմ Ժամանակի Թուրքիան» վերնագիրը կրող մեմուարային բնույթի իր գրքում պնդում է, թե իբր Թուրքիան «անուղղակիորեն եղել է... Սովետական Ռուսաստանի դաշնակիցը»<sup>34</sup>:

«Թեպետ մենք պատերազմին չեինք մասնակցում,—գրում է Յալմանը,—մենք զենքի տակ էինք պահում մեկ միլիոն մարդ՝ դիմադրելու համար գերմանացիներին, եթե նրանք հարձակվեին Եվրոպայից դեպի Ասիա ու Միջերկրական ծովի շրջանը գնացող ստրատեգիական ուղղու վրա... Այսպիսով,—ավարտում է իր Կեղծիքը հեղինակը,—մենք պաշտպանել ենք ռուսական բանակների թևերը հարավային Ռուսաստանում»<sup>35</sup>:

Թուրք հեղինակների նման անհիմն պնդումները ուժն ընդհանուր չունեն պատմական իրականության հետ: Իսկ փաստերը մերկացնում են Թուրքիայի հետադիմական կառավարող շրջանների իսկական նպատակները մեկ միլիոնանոց բանակ պահելու գործում: Ճիշտ է, թուրք շովինիստներին չվիճակվեց այդ բանակը շարժման մեջ դնել Սովետական

<sup>33</sup> Yahya Okçu, s. 190.

<sup>34</sup> Ahmet Emin Yalman, Turkey in my Time. Norman, 1956, p. 158.

<sup>35</sup> Նույն տեղում:

Միության դեմ և թուրք պատմաբաններն այժմ, նենգափոխելով փաստերը, փորձում են «Հեղոք» Թուրքիայի կողմից այդպիսի մեծ զորքի «անհրաժեշտությունը» կապել անմիջականորեն Ռուսաստանին պաշտպանելու հորինված խնդրի հետ։ Հրապարակված փաստաթղթերը հիմնովին հերքում են թուրք պատմաբանների այդ կեղծիքը ևս։ Գերմանիայի արտաքին գործերի մինիստրության գաղտնի փաստաթղթերից հայտնի է, որ սովետա-թուրքական սահմանի մոտ 1942 թվականի աշնանը թուրքական զորքերի կենտրոնացումը պայմանավորված էր ֆաշիստական Գերմանիայի ձգտումներին ընդառաջ զնալու ցանկությամբ և, միաժամանակ, ՍՍՌՄ-ի տերիտորիաների նկատմամբ թուրքիայի կառավարող շրջանների փայփայած զավթողական պլաններով։ Տակավին 1942 թվականի հունվարին՝ Պապենը ինոնյուի հետ ունեցած զրուցի ժամանակ այն միտքն էր հայտնել, որ երբ գարնանը գերմանական բանակը սկսի Կովկասի վրա ծրագրած իր հարձակումը, գերմանացիների համար «շափաղանց մեծ արժեք կունենա թուրքական ուժերի կենտրոնացումը ոուսական սահմանի վրա»<sup>36</sup>։ Նույն փաստաթղթերից երևում է, թե ինչպիսի նպատակներ էին հետապնդում թուրքական կառավարության ամենապատսխանառու զեկավարները։ 1942 թվականի հունվարի 5-ին Պապենը հաղորդում էր Բեռլին թուրքիայի պրեզիդենտի հետ իր ունեցած «արտակարգ բովանդակալից» զրուցի մասին, որի ժամանակ պրեզիդենտը հավաստիացրել էր, որ «Թուրքիան մեծապես շահագրգուված է ոուսական հրսկայի ոչնչացման մեջ»<sup>37</sup>։ Իսկ Սարաջօղլուն պրեմիեր-մինիստրի պաշտոնին անցնելու օրը, 1942 թվականի օգոստոսի 27-ին, նույն Պապենի հետ զրուցելիս ավելի անգույշ էր արտահայտվում։ «Ռուսաստանի ոչնչացումը, — ասել էր նա, — հանդիսանում է ֆյուրերի սխրագործությունը, որին հավասարը կարող է կատարվել հարյուր տարին մեկ անգամ...»

<sup>36</sup> Документы министерства иностранных дел Германии, вып. II. Германская политика в Турции (1941—1943), стр. 58.

<sup>37</sup> Նույն տեղում։

Խուսական պրոբլեմը կարող է չուժվել, եթե սպանվի Խուսաստանում ապրող ռուսների առնվազն կեսը<sup>38</sup>:

Եվ պատահական չէ, որ թուրքական կառավարող շըրջանները պատերազմի տարիներին և հատկապես 1941—42 թթ. խրախուսում և աջակցություն էին ցույց տալիս պանթուրքիստների գործունեությանը՝ լայն հնարավորություններ ստեղծելով վերջիններիս մոլի շովինիստական, հակասովետական անդուսպ պրոպագանդայի համար: 1941 թվականի նոյեմբերին, ոչ առանց թուրքական կառավարող շրջանների աջակցության, Ստամբուլում կազմակերպվեց թուրքական հակասովետական կենտրոն, որի մեջ մտան սպիտակգվարդիականները և թուրքական ռեակցիայի ամենաշովինիստական մասի ներկայացուցիչները: Դրանցից էին թուրքական ֆաշիստ գեներալ էրքիլեթը, տիրահոչակ էնվերի եղբայր Նուրի փաշան, Մյուրսել փաշան և ուրիշներ: Պանթուրքիստները թուրքերն ու գերմանիերն լեզուներով մի շարք թերթեր ու ամսագրեր էին հրատարակում՝ «Թասֆիրի էֆքյար», «Զինարալլը», «Բողկուրթ», «Բյույուկ դողու» և այլն: Հիշյալ թերթերն ու ամսագրերը ամենալիտի կերպով պրոպագանդում էին պանթուրքիստական գաղափարներ՝ բացահայտորեն կոչ անելով անհապաղ պատերազմ սկսել Սովետական Միության դեմ: Հիշյալ հրատարակությունները հանդիս էին գալիս պրովոկացիոն հոգվածներով՝ «պատերազմը առաջադիմություն է», «պատերազմը կուլտուրայի տարածման ամենակարևոր միջոցն է» և նման այլ վերնագրերով: Պանթուրքիստները չէին թաքցնում իրենց զավթողական իղձերը և բացեիրաց գրում էին ՍՍՌՄ-ի հաշվին տերիտորիալ մեծ ձեռքբերումների մասին: Այսպես, «Բողկուրթ» ամսագիրը 1941 թվականի հուլիսի համարում որպես հավելված «Թուրքիզմը սպասում է» Հոգվածի տպագրել էր «Մեծ Թուրքիայի քարտեզը», որի մեջ մտցված էին նաև Անդրկովկասի ու Միջին Ասիայի սովետական հանրապետությունները: Նույն ամսագրում տպագրված

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 97—98:

«Բողկուրթշիների կրեդոն» վերնագիրը կրող հոգվածում պանթուրքիստները անսքող ձևով բացահայտում էին իրենց մոլի շովինիստական, ուսայական էությունը: Առաջ զառանցանքը, որը մեջ է բերվում ամերիկյան հեղինակ Հոստլերի՝ «Թուրքիզմը և Սովետները» վերնագրով գրքում:

«Ովքե՞ր ենք մենք: Մենք բողկուրթշիներ ենք: Ո՞րն է մեր զաղափարախոսությունը: Թրքականությունը: Ո՞րն է բողկուրթշիների հավատը: Նրանք հավատում են, որ թուրքական ուսան և թուրք ազգը մյուս բոլոր ուսաներից ու ազգերից բարձր է կանգնած: Ո՞րն է այդ գերազանցության աղբյուրը: Թրքականությունը: Թուրքը մյուսներից բարձր է ծնված օրինց: Այո, թուրքը բարձր է ի ծնե: Թուրքն իր խելքը, արիությունը, իր ուսամական հանճարը և ամեն տեսակի ընդունակությունները ստանում է արյունից... Բողկուրթշիները պանթուրքիստնե՞ր են: Այո: Բողկուրթ-թուրքիստների սրբազան նպատակն է թուրքական պետությունը տեսնել 65 միլիոնի հասած»<sup>39</sup>: Հիշյալ գրքում, արդարացնելով հանդերձ թուրքիայի կառավարող շրջանների դիրքը պանթուրքիստների գործունեության նկատմամբ, հեղինակն, այնուամենայնիվ, խոստովանում է, որ «այդ անպատասխանատու խմբերը» թույլատրված էին թուրքական կառավարության կողմից թուրք երիտասարդության զաղափարական նախապատրաստման նպատակով՝ Սովետական Խուսաստանի դեմ հնարավոր պատերազմի դեպքում<sup>40</sup>: «Կարելի է եղրակացնել,—գրում է Հոստլերը,—որ թուրքական պետության մեջ բարձր դիրք գրավող անձինք պատրաստի պլաններ ունեին՝ իրազործելու բոլոր հնարավորությունները, որը գերմանա-սովետական պատերազմում ՄՍՌՄ-ի կործանումը կարող էր ընձեռել պանթուրքական զաղափարաների իրականացման համար»<sup>41</sup>: Պետք է ասել, որ թուրք հեղինակները ևս ընդունում են, որ թուրքիայի կառա-

<sup>39</sup> Charles Warren Hostler, Turkism and the Soviets. London, 1957, p. 181.

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 180:

<sup>41</sup> Նույն տեղում, էջ 177:

պարող շրջանները հովանավորում էին պանթուրքիստների գործունեությունը և գաղարեցին նրանց պաշտպանել միայն այն ժամանակ, երբ ֆաշիստական Գերմանիայի պարությունն արդեն կանխորոշված էր: «Թուրքական կառավարությունը ի վերջո հրաժարվեց ակտիվ ազակցություն ցուց տար պանթուրքական շարժմանը», — գրում է Քարփաթը<sup>42</sup>, միաժամանակ բացահայտելով այդ քայլի բուն զրդապատճառները: «Կառավարությունը, — շարունակում է հեղինակը, — ուժիղ կերպով ձգտելով ցուց տալ իր չեղոքությունը, փորձեց սանձարել պանթուրքիստների գործողությունները, թեև դրանք անցյալում կատարվում էին ավելի բացահայտութեն»<sup>43</sup> (ընդգծումները մերն են—Ռ. Ս.): Քըլըջը, նույնպես ընդունելով կառավարության կապը պանթուրքիստների հետ, փորձում է «մեղմացնել» Թուրքիայի կառավարող շրջանների զավթողական մտադրությունները սովետական տերիտորիաների նկատմամբ: Կեղծելով իրականությունը, նա հայտարարում է, որ եթե հաշվի առնել Ռուսաստանի «Ճնշված թուրքերի» (?!) հանդեպ Թուրքիայում տածվող համակրանքը և Սովետական Միության վերահաս պարտությունը, որն այնքան մոտ էր թվում, թուրքական կառավարությանը չի կարելի մեղադրել այն բանում, որ նա որոշ պատրաստություններ էր տեսնում Ռուսաստանին սահմանամերձ թուրքական նահանգների «ապագայի խնդրում ձայն ունենալու համար»<sup>44</sup>:

Այսպիսով, երկրորդ համաշխարհային պատերազմում Թուրքիայի «չեղոքություն» արդարացնելու առիթով թուրքատմարաններն ակամաչից վեր են հանում ՍՍՌՄ-ի նկատմամբ Թուրքիայի կառավարող շրջանների ագրեսիվ պլանները, մի փաստ, որն ինքնին մերկացնում է Թուրքիայի այսպես կոչված «չեղոքությունը»:

Հրապարակված գաղտնի փաստաթղթերը վկայում են այն մասին, որ ֆաշիստական Գերմանիայի ուխտագրությունը

<sup>42</sup> Կեմալ Կարատ, թ. 265.

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 267.

<sup>44</sup> Altemur Kılıç, թ. 112.

Հարձակումից անմիջապես հետո թուրքական կառավարությունը քննարկում էր ՍՍՌՄ-ի տերիտորիաները հափշտակելու հարցը։ Արդեն 1941 թվականի օգոստոսի 5-ին Թեովինողարկված հատուկ հաղորդագրության մեջ Պապենը տեղեկաբնում էր, որ «թուրքական կառավարող շրջանները սկսել են ավելի շատ զբաղվել ուսու-թուրքական սահմանից այն կողմը գտնվող իրենց հայրենակիցների ճակատագրով։ Այս շրջաններում հակված են վերադառնալու 1918 թվականի գեպերին և ցանկանում են իրենց միացնել այդ մարզը և հատկապես մեծ արժեք ներկայացնող Բարվի նավթահանքերը»<sup>45</sup>։ Վերը հիշատակված Ալթեմուր Քըլըշը իր գրքում նոր հետաքրքիր փաստեր է բերում թուրքիայի կառավարող շրջանների պանթուրքական գործունեության մասին։ «Ըստ համաձայնվածության,—գրում է Քըլըշը,—նորից տեղի ունեցան Սարաջողություն ու Մենեմենջիօղություն գրուցները ֆոն Պապենի հետ Դրիմի և Կովկասի մարզերը կառավարելու պլանների մանրամասնությունների շուրջ»<sup>46</sup>։ Հեղինակը ակամայից բացահայտում է նաև թուրք-գերմանական հակասությունները վերջիշխալ սովետական տերիտորիաների «ապագա կառավարման» հարցում։ «1943 թվականի վերջից,—շարունակում է Քըլըշը,—պանթուրանիզմի կողմնակիցների մեջ հիասթափությունը մեծացավ. միանգամայն պարզ էր դառնում,—եղրակացնում է հեղինակը,—որ թուրք-գերմանական համագործակցությունը սովետա-թուրքական մարզերում, գերմանական օկուպացիայի պայմաններում բոլորովին անհնարին է։ Գերմանացիները, չնայած ֆոն Պապենի ակնարկումներին ու թուրքական զեկավարների հետ ունեցած գրուցներին, և չնայած ոչ-պաշտոնական պանթուրանիստական խմբերի գործունեությանը, որոշել էին գրաված մարզերը կառավարել անձամբ, առանց որևէ կողմնակի միջամտության»<sup>47</sup>։

<sup>45</sup> Документы министерства иностранных дел Германии, вып. II. Германская политика в Турции (1941—1943), стр. 34.

<sup>46</sup> Altemur Kilic, p. 95.

<sup>47</sup> Նույն տեղում, էջ 96։

Կոպիտ կերպով խախտելով իր հայտարարած չեղոքությունը, Թուրքիան ոչ միայն բազմակողմանի օգնություն է ցույց տվել ֆաշիստական «առանցքի» երկրներին, այսինքն պատերազմող կողմերից մեկին, այն մոմենտին, երբ նրանք ժամանակավոր հաղթանակներ էին տանում, այլև զանքեր է դորժադրել Գերմանիայի վերջնական ջախջախումն ու անվերապահ կապիտուլյացիան կանխելու համար։ Այսպես, 1943 թվականի հունվարի 30—31-ին կայացած Աղանայի կոնֆերանսի ժամանակ, որտեղ Անգլիայի պրեմիեր-մինիստր Չերչիլը հանդիպում ունեցավ Թուրքիայի պրեզիդենտի հետ, վերջինս առաջարկել էր անհապաղ համաձայնության հասնել Գերմանիայի հետ և, այդպիսով, թույլ շտալ, որ նա լիակատար պարտություն կրի։

«Ինոնյուն փորձեց Զերչիլին ներշնչել պատերազմն անմիջապես վախճանի բերելու անհրաժեշտությունը», — գրում է Քըլըջը։

Զանալով քողարկել Թուրքիայի կառավարող շրջանների անհանգստությունն ու դժգոհությունը Վոլգոգրադի տակ գերմանացիների կրած ծանր պարտությունից, հեղինակը Թուրքիայի նման դիրքորոշումը փորձում է կապել ՍՍՌՄ-ի ուժեղացման հետևանքով իբր ապագայում նրան սպառնացող վտանգի հետ։

«Գերմանիայի լրիվ, անվերապահ պարտությունը, — բացատրում է իր միտքը Քըլըջը, — Ծովասատանին հնարավորություն կտար լուրջ վտանգ դառնալու Թուրքիայի ու Եվրոպայի համար... Սակայն որպես միջնորդ հանդես գալու նրա (Ինոնյուի — Ռ. Ս.) առաջարկությունը մերժվեց։ Զերչիլը պընդում էր, որ ինքը հոռեակա չէ Ծովասատանի մտադրությունների նկատմամբ»<sup>48</sup>։

Թուրք հեղինակի մեջ բերած այս ուշագրավ փաստը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի կառավարող շրջանների վարած հետադիմական քաղա-

<sup>48</sup> Altıemir Kılıç, p. 101.

քականության մի նոր ապացուց է: Այն ժամանակ, երբ ամ-  
բողջ աշխարհի առաջավոր մարդկությունը կենաց ու մահվան  
պայքար էր մղում ֆաշիստական բարբարոսների գեմ, Թուր-  
քիան իր խայտառակ քաղաքականությամբ փորձում էր օգնել  
ֆաշիզմի պահպանմանը, կանխել նրա լիակատար պարտու-  
թյունը:

Այսպիսով, երկրորդ համաշխարհային պատերազմի տա-  
րիներին Թուրքիայի գրաված գիրքին, նրա վարած քաղաքա-  
կանությանը վերաբերող փաստաթղթերը, այդ թվում և իրենց  
թուրք հեղինակների աշխատություններում բերված փաստերը,  
համոզիչ կերպով մերկացնում են ժամանակակից թուրք  
պատմագրության մեջ տիրապետող այն կեղծիքը, թե իբր  
Թուրքիան երկրորդ համաշխարհային պատերազմի ամբողջ  
ժամանակաշրջանում վարել է շեղոքության քաղաքականու-  
թյուն և այդ քաղաքականությամբ անգամ աշակցել հակա-  
ֆաշիստական ուժերի և, առաջին հերթին, Սովետական Միու-  
թյան շնորհիվ ձեռք բերված համաշխարհային-պատմական  
հաղթանակին:

ՀԵՏՓԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՍՈՎԵՏԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔ ՀԵՂԻՆԱԿԱՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄՔ

Ինչպես նախորդ գլխում ցույց տրվեց, երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին վարած իրենց արտաքին քաղաքականությամբ թուրքական կառավարող շրջանները մեծ ծառայություն մատուցեցին ամենահետադիմական իմպերիալիստական խմբավորմանը՝ «առանցքի» երկրներին և, այդպիսով, ֆաշիստական ստրկացման վտանգի դեմ մարդկության առաջավոր ուժերի մղած պայքարում ամոթալի դեր խաղացին:

Ազրեսիվ իմպերիալիստական տերություններին աջակցելու թուրքական քաղաքականությունը մի այլ ձևով դրսեռուվեց պատերազմից հետո, երբ Թուրքիայի ղեկավար շրջանները, վճռականորեն կողմնորոշվելով դեպի մի նոր ազրեսիվ մեծ տերությունը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները, շատ կարճ ժամանակում երկիրը ծառայեցրին նրա հետապնդած հակասովնեական ազրեսիվ նպատակներին ու գաղութատիրական ձգտումներին՝ Մերձավոր ու Միջին արևելքի շրջանում:

Ինչո՞ւ Թուրքիայի կառավարող շրջանները շրջվեցին հատկապես դեպի ԱՄՆ-ը և ոչ թե դեպի մի որևէ այլ իմպերիալիստական տերություն:

Մեր կարծիքով, դա պետք է բացատրել հետևյալ պատճառներով.

ԱՄՆ-ը ամենաուժեղ կապիտալիստական երկիրն էր, որը պատերազմից դուրս էր եկել ավելի հզորացած և անշափահարստացած.

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ԱՄՆ-ի հետադիմական շրջանները սկսել էին նոր համաշխարհային պատերազմի նախալաւրաստվել՝ Սովետական Միության դեմ և թուրքական կառավարողները հույս ունեին նրանց օգնությամբ հասնել երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ձախողված իրենց սեփական հակասովհատական պլանների՝ տերիտորիալ հափշտակումների և պահպատրքական ծրագրերի իրականացմանը.

Միայն ԱՄՆ-ի օգնությամբ էր հնարավոր ճնշել դեմոկրատական շարժումը երկրի ներսում և իշխանությունը պահել իրենց ձեռքում։

Այսպիսով, չհրաժարվելով իրենց հակասովետական դիրքորոշումից, թուրքիայի կառավարող շրջանները սկսեցին հանդես գալ ԱՄՆ-ի իմպերիալիստների հակասովետական պլանների օղակում։ Թուրքիայի արտաքին քաղաքականությունը հետպատերազմյան ժամանակաշրջանում ընթացել է ամերիկյան իմպերիալիզմի հետ համագործակցելու ուղղությամբ, որի հետևանքով Թուրքիան ակտիվ մասնակցությունը է ունեցել ԱՄՆ-ի կառավարության կողմից նախաձեռնվող բոլոր ազգային խմբավորումներում, որոնք ուղղված են ինչպես Սովետական Միության ու սոցիալիստական ողջ լագերի, այնպես էլ Մերձավոր արևելքի ժողովուրդների ազգային-պատագրական, հակամաքերիալիստական շարժումների դեմ։

Թուրքական կառավարող շրջանների վարած երկրի ռազմականացման քաղաքականությունը ամենենին էլ չը բխում թուրք ժողովրդի շահերից, ընդհակառակը, այն մինչև վերջը վնասաբեր, թուրքիայի ազգային շահերին հակասող քաղաքականություն էր, որը նրանք փորձում էին ներկայացնել, որպես միակ հնարավոր ելքը ստեղծված «վտանգավոր» իրադրությունից՝ երեսակայական սովետական սպառնալիքի պայմաններում։ Տրումենի գոկտրինան ընդունելուց հետո Թուրքիայի արտաքին գործերի մինիստր նեչմեդին Սաղըքը շհապաղեց հանդես գալու նրա գովարանությամբ, այն գնահատելով, որպես «մեծ միիթարություն Թուրքիայի ժողովրդի հա-

մար, որովհետև վերջինիս զգացնել էր տալիս, որ նա այլիում միայնակ չէ»<sup>1</sup>: Սովետական Միության կողմից Թուրքիային իբր սպառնացող մշտական վտանգի շինծու այս թեզը ընկած է ժամանակակից թուրք պատմաբանների, քաղաքական գործիչների, մամուլի հայտնի տեսաբանների բազմաթիվ գրքերի ու հոդվածների հիմքում: Ահա, օրինակ, ինչպիս է բացատրրում դեպի ԱՄՆ կատարած Թուրքիայի շրջադարձը սովետա-թուրքական հարաբերությունների «մասնագետ» Հալյուկ Յուլմանը:

«Սկսած 1945 թվականի կեսերից, —գրում է նա, — Սովետական Միությունը սկսեց Թուրքիայի վրա ուժեղ ձնշում գործադրել... Թուրքիան մի մեծ վտանգ զգաց և տնտեսական ու ռազմական տեսակետից ՍՍՌՄ-ի գեմ հանդիման միայնակ շմնալու համար 1939 թվականից սկսեց աշխատել իր գաշնակից Անգլիայի և երկրորդ համաշխարհային պատերազմի վերջին ամենաուժեղ պետություն դարձած ԱՄՆ-ի աջակցությունը ստանալու ուղղությամբ»<sup>2</sup>: Վերը հիշատակված Ալթեմուր Քըլըջը ևս ամերիկյան «օգնությանը» դիմելը բացատրում է երևակայական սովետական սպառնալիքով, որի պատճառով, ըստ հեղինակի, «թուրք ժողովուրդը և թուրքական կառավարությունը այդ օգնությունը խանդավառությամբ ընդունեցին»<sup>3</sup>: Նույն բանն է կրկնում պրոֆ. Էսմերը՝ միաժամանակ ընդգծելով Տրումենի գոկտրինայի «բարոյական մեծ արժեքը» այն է, որ «աշխարհի ամենահզոր պետությունը... հետաքրքրվում էր Թուրքիայի ճակատագրով»<sup>4</sup>:

Սակայն ո՞րն էր ՍՍՌՄ-ից եկող այդ սպառնալիքը: Որպես զրա «ապացույց» թուրք հեղինակները վկայակոշում են նեղուցների ոհմիմի վերաբերյալ 1946 թվականի օգոստոսի 7-ի և սեպտեմբերի 24-ի սովետական նոտաները: Այսպես, Թահմին Յունալն այդ նոտաները համարում է «վերադարձ

<sup>1</sup> *SEH Altemur Kılıç*, p. 143.

<sup>2</sup> „Forum“. I Ocak 1961, sayı 162, s. 6.

<sup>3</sup> *Altemur Kılıç*, p. 142.

<sup>4</sup> Prof. Dr. Ahmet Şükür Esmert, *Türk Diplomasisi*, ss. 98.

դեպի ցարիզմի քաղաքականությունը նեղուցների հարցում և  
դրանց երևան գալով բացատրում Թուրքիայի արտաքին քա-  
ղաքականության մեջ կատարված փոփոխությունները:

«Այդ էր պատճառը, — գրում է Յունալը, — որ մենք մեր  
Հարաբերությունները Ռուսաստանի հետ խզելով, թեքվեցինք  
դեպի դեմոկրատական աշխարհը»<sup>5</sup>: Իսկ Քըլըջը, խոսելով  
օգոստոսի 7-ի նոտայում առաջ քաշված սովետական առա-  
ջարկների մասին, որոնք համապատասխանում էին առանց  
բացառության բոլոր սկզբանյան պետությունների շահերին,  
գրում է, որ այդ սկզբունքները իսկական սպառնալիք էին  
թուրքական սուվերենությանը, ինչպես նաև «Թուրքիայի և  
մերձափնյա ու ոչ-մերձափնյա տերությունների միջև ստրա-  
տեգիական ծայրահեղ անհրաժեշտություն ներկայացնող նըր-  
քին հավասարակշռությանը»<sup>6</sup>: Նման ձևով են «Հիմնավորում»  
իրենց պնդումները նաև այլ հեղինակներ՝<sup>7</sup>:

Արդյո՞ք 1946 թվականի սովետական նոտաները սպառ-  
նալիք էին ներկայացնում Թուրքիայի անվտանգությանը և  
ոտնահարում վերջինիս սուվերեն իրավունքները, ինչպես  
փորձում են ներկայացնել թուրք հեղինակները: Ամենափառ ոչ:  
Նման անհիմն մեղադրանքները ոչ մի առնչություն չունեն  
փաստերի, պատմական իրականության հետ:

Սովետական կառավարության հիշյալ նոտաները սովե-  
տական դիվանագիտության միակողմանի և կամայական ե-  
լույթները չեին, այլ գրանք անմիջականորեն բխում էին երեք  
մեծ տերությունների՝ ՍՍՌՄ-ի, Ամերիկայի Միացյալ Նա-  
հանգների ու Մեծ Բրիտանիայի կառավարությունների ղեկա-  
վարների կողմից 1945 թվականի հուլիսին Պոտսդամում ըն-  
դունված որոշումներից:

Ինչպես հայտնի է, երկրորդ համաշխարհային պատե-  
րազմից հետո համաշխարհային հասարակական կարծիքին  
ակնհայտ դարձավ, որ Թուրքիայի կառավարող շրջանները,

<sup>5</sup> Tahsin Ünal, s. 291.

<sup>6</sup> Altemur Kılıç, p. 129.

<sup>7</sup> See „Forum“, I Ocak 1961, sayı 162, s. 7.

միանձնյա տնօրինություն անելով նեղուցներում և յուրովի մեկնաբանելով Մոնտրեի կոնվենցիան, պատերազմի տարիներին բազմիցս կոպիտ կերպով խախտել են Հիշյալ կոնվենցիան, մասնավորապես նրա 19-րդ հոդվածը, որն օտարերկրյա բոլոր ռազմանավերին արգելում էր անցնել սկզբովյան նեղուցներով<sup>8</sup>: Այս հանդամանքը հաշվի առնելով, նույնիսկ ԱՄՆ-ի ու Անդիայի կառավարությունները Պոտսդամի կոնֆերանսում ստիպված էին ընդունել, որ Մոնտրեի կոնվենցիան, այլևս անհամապատասխան լինելով ներկա ժամանակներին, պետք է վերանայվի, և որ այդ ուղղությամբ կատարված հետեւյալ քայլը կլինի հարցի քննարկումը հիշյալ երեք տերություններից յուրաքանչյուրի և Թուրքիայի միջև՝ անմիջական բանակցությունների միջոցով<sup>9</sup>:

Հիմնվելով Պոտսդամի կոնֆերանսի որոշումների վրա, սովետական կառավարությունը 1946 թվականի օգոստոսի 7-ի նոտայով դիմեց թուրքական կառավարությանը, առաջարկելով վերանայել Մոնտրեի կոնվենցիան և մշակել նեղուցների այնպիսի նոր ռեժիմ, որը գործնականորեն կարողանար ապահովել սկզբովյան բոլոր տերությունների անվտանգությունը: Թվարկելով պատերազմի տարիներին Թուրքիայի կողմից 1936 թվականի Մոնտրեի կոնվենցիայի խախտման բազմաթիվ գեպքերը (որոնց մասին Հիշյատակվեց նախորդ գլխում), նոտայում ասվում էր.

«...Եերված փաստերից երևում է, որ Գերմանիայի ու նրա դաշնակիցների գեմ մղված անցած պատերազմի ընթացքում նեղուցների վերաբերյալ կոնվենցիան շխանգարեց թշնամական տերություններին նեղուցներն օգտագործելու ռազմական նպատակներով՝ ընդգեմ Սովետական Միության և դաշնակից այլ պետությունների, ըստ որում թուրքական կա-

<sup>8</sup> № 84' «Дипломатический словарь в трех томах», т. 2, стр. 313—314.

<sup>9</sup> „Правда“, 14. VIII. 1946.

ռավարությունը շի կարող պատասխանատվություն չկրել նըման վիճակի համար...»<sup>10</sup>:

Իր կողմից սովետական կառավարությունն առաջարկում էր նեղուցներում հաստատել նոր ռեժիմ, որի հիմքում լինեն ներքոհիշյալ հինգ կետերը.

1 Նեղուցները միշտ պետք է բաց լինեն բոլոր երկրների առևտրական նավերի համար.

2 Նեղուցները միշտ պետք է բաց լինեն սեծովյան տերությունների ռազմանավերի համար.

3 Ոչ-սեծովյան տերությունների ռազմանավերի անցումը նեղուցներով, բացառությամբ հատուկ նախատեսված դեպքերի, պետք է արգելվի.

4 Նեղուցների ռեժիմի սահմանումը պետք է մտնի թուրքիայի և սեծովյան մյուս երկրների իրավասության մեջ.

5 Թուրքիան և Սովետական Միությունը, որպես նեղուցներում առևտրական նավագնացությունն ու նրանց անվտանգությունն ապահովելու մեջ ամենից ավելի շահագրգույշ տերություններ, համատեղ միշոցներով պետք է կազմակերպեն նեղուցների պաշտպանությունը՝ ուրիշ տերությունների կողմից սեծովյան տերություններին թշնամական նպատակներով նրանց օգտագործումը կանխելու համար<sup>11</sup>:

1946 թվականի օգոստոսի 22-ի իր պատասխան՝ նոտայում թուրքական կառավարությունը ընդունելու «բացատրություններ» էր տալիս նեղուցներով առանցքի երկրների ռազմական և ռազմա-օժանդակ նավերի անցման կոնկրետ դեպքերի առթիվ, որոնք տեղի էին ունեցել երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Ըստ էության չհերքելով սովետական նոտայում բերված Մոնտրեի կոնվենցիայի խախտման փաստերը, թուրքական կառավարությունը պնդում էր, որ թշնամական ռազմանավերի անցումը նեղուցներով երր սպառնալիքի տակ շի դրել ՍՍՌՄ անվտանգությունը: Օգոստոսի 22-ի թուրքական նոտայի պատասխանը հանդիսացր սեպտեմբերի 24-ի նոտայում սովետական կառավարու-

<sup>10</sup> „Правда“, 14. VIII. 1946.

<sup>11</sup> Նույն տեղում:

թյունը, անդրադառնալով վերոհիշյալ փաստարկներին, նշում  
էր, որ դրանք միանգամայն անհիմն են:

«Ինչ վերաբերում է նշված սպառնալիքի իրական շափե-  
րին,—ասվում էր սովետական նոտայում,—բավական է բե-  
րել այն փաստը, որ Հաշվի առնելով նեղուցներով հակառա-  
կորդի ռազմական և օժանդակ ռազմական նավերի անարգելք  
անցման բազմաթիվ դեպքերը, սովետական գերագույն հրա-  
մանատարությունը ստիպված էր պատերազմական գործողու-  
թյունների թատերաբեմի գլխավոր ուղղություններից էական  
թվով զինված ուժեր տեղափոխել՝ սեծովյան շրջանը պաշտ-  
պանելու համար»<sup>12</sup>: Հիշյալ նոտայում սովետական կառավա-  
րությունը ընդգծում էր նաև այն փաստը, որ թուրքական կա-  
ռավարությունը պատերազմի տարիներին «զադարեցրել էր  
նեղուցներով նավերի շարժման մասին զեկուցներ ներկայաց-  
նել պատերազմի մասնակից պետություններին, որը նա պար-  
տավոր էր անել կոնվենցիայի 24-րդ հոդվածի համաձայն»<sup>13</sup>:

Մերժելով նեղուցների համատեղ պաշտպանությունը  
կազմակերպելու սովետական առաջարկները, թուրքական կա-  
ռավարությունը սեծովյան տերություններին զրկում էր այդ  
շրջանում իրենց անվտանգությունը երաշխավորելու հնարա-  
վորությունից: Թուրք կառավարող շրջանների նման դիրքո-  
րոշումն ամենաին էլ չէր բխում թուրքիայի ազգային պա-  
հանջներից: Նեղուցների հարցում թուրքիայի բռնած դիրքը  
լիովին ձևնտու էր իմպերիալիստական խոշոր տերություն-  
ներին և, առաջին հերթին, այդ ժամանակաշրջանում արդեն  
բացահայտ հակասովետական քաղաքականության ոգեշնչող  
Ամերիկայի Միացյալ Նահանգներին, որոնք ոչ երկրորդական  
դեր խաղացին սովետական առաջարկները մերժելու գործում:

Այդ մասին ներկայումս խոստովանում են նույնիսկ  
թուրք հեղինակները: Այսպես, օրինակ, նույն Յուլիսի 1946  
թվականի օգոստոսի 7-ի նոտայում առաջ քաշված հարցերին

<sup>12</sup> „Правда“, 28, IX. 1946.

<sup>13</sup> Նույն տեղում:

անդրադառնալով, գրում է. «Թուրքական կառավարությունը, անդիմական և ամերիկյան կառավարությունների հետ խոր- ճըրդակցելուց հետո, սովետական պահանջները մերժեց»<sup>14</sup>:

Ինչպես երևում է վերը բերված սովետական նոտաների բովանդակությունից, դրանք ոչ մի սպառնալիք չէին կարող ներկայացնել Թուրքիայի համար և, առավել ևս, Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ արմատական փոփոխու- թյուն առաջ բերել: Թուրք հեղինակների անհիմն, վերին աս- տիճանի միտումնավոր գնահատականներն այս հարցում ըն- դունելի չեն նույնիսկ Թուրքիայում:

Վերջերս, Անկարայում լույս տեսնող «Ֆորում» արտաքին քաղաքական հանդեսում տպագրվեց թուրք ժուռնալիստ Ալի Քենանի «Թուրքիայի արտաքին քաղաքականությունը» վեր- նագրով հոդվածը, որտեղ հեղինակը, վերլուծելով հետպա- տերազմյան տարիներին թուրքական ղեկավար շրջանների վարած արտաքին քաղաքականությունը, հանգում է այն եղ- րակացության, որ միանգամայն սխալ է Թուրքիայի նոր կուր- սը անմիջականորեն կապել Սովետական Միության քաղաքա- կանության, նրա գիվանագիտական ելույթների հետ: Հեղի- նակը որոշակիորեն մատնանշում է, որ այն պետք է բացատ- րել Թուրքիայում տիրապետող ուժերի պայքարով, իշխանու- թյան գլուխ անցած դասակարգի կենսական շահերով: Մաս- նավորապես, խոսելով երկրորդ համաշխարհային պատերազ- մից հետո Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ տե- ղի ունեցած փոփոխությունների մասին, հեղինակը նշում է, որ զրանց խորը պատճառները պետք է փնտրել այն բանում, որ իշխանությունն իր ձեռքը վերցրեց հողային բուրժուազիան: «Հակառակ գեպքում,—գրում է Քենանը,—կարելի է սխալի մեջ ընկնել, այդ շրջանում կատարված արտաքին քաղաքական փոփոխությունները բացատրելով 1946 թվականի սովետական նոտաներով, ինչպես այդ անում են մեր մտավորականները, որոնք հաշվի չեն առնում դասակարգային ուժերի հարաբե-

<sup>14</sup> „Forum“, I Ocak 1961, sayı 162, s. 7.

բության մեջ կատարված կարևոր փոփոխությունները» (ընդգծումը մերն է — Ռ. Ս.)<sup>15</sup>:

Թուրքիայի կառավարող շրջանների կողմից տարվող երկրի ռազմականացման քաղաքականությունը, ամերիկան իմաստական կողմից գլխավորվող ազգեսիլ բնութիւնոր ռազմական խմբավորումներին Թուրքիայի ակտիվ մասնակցությունը ևս, ինչպես վերևում նշվեց, թուրք հեղինակները առանց որևէ փաստական հիմքի, վերագրում են «Հյուսիսից սպառնացող վտանգին», դրանով իսկ արդարացնելով Թուրքիայի ազգային շահերին հակասող այդ քաղաքականությունը:

«Չնայած երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին, — գրում է Յուլմանը, — սովետական ճնշումը հնարավորություն չէր տալիս իրազործելու պատերազմի ժամանակ խիստ մեծացած բանակների մի մասը կրծատելու և ազգային էկոնոմիկան նորից կարգավորելու ու զարգացնելու մեր ցանկությունը և Թուրքիան տնտեսական դժվարությունների գնով ստիպված էր իր բանակը պատերազմական ժամանակների մակարդակին թողնել»<sup>16</sup>: Նույնպիսի շինծու փաստարկներով են խեղաթյուրում իրականությունը Քըլըջը-Յալմանը և այլ հեղինակներ: Այսպես, խուսափելով բացահայտել երկրի ռազմականացման իսկական պատճառները, Քըլըջը պնդում է, որ «Թուրքիան իր բյուջեի կեսը ծախսում է ազգային պաշտպանության վրա, որովհետեւ նա ռուսական վտանգին դեմ հանդիման է կանգնած»<sup>17</sup>:

Պրոֆեսոր Էսմերը ևս, առանց լուրջ փաստական հիմնավորման, փորձում է «Համոզել» ընթերցողին, թե իր թուրքիան ստիպված էր ՆԱՏՕ-ի մեջ մտնել՝ «բացառապես Ռուսաստանի դեմ պաշտպանվելու համար»: Հեղինակի կարծիքով, առանց ՆԱՏՕ-ի մեջ ներգրավվելու ռհնարավոր չէր լինի պահովել երկրի անվտանգությունը»<sup>18</sup>:

<sup>15</sup> Տե՛ս „За рубежом“, № 30, 29. VII. 1961, стр. 26.

<sup>16</sup> „Forum“, 15 Şubat 1961, sayı 165, s. 12.

<sup>17</sup> Altıemir Kılıç, p. 142.

<sup>18</sup> Prof. Dr. Ahmet Şükrü Esmer, Türk Diplomasisi, s. 99.

ՍՍՌՄ-ի կողմից թուրքիային իբր սպառնացող վտանգի մասին նման անհիմն պնդումները վկայում են, որ թուրք պատմաբաններն ու ժուռնալիստները չեն խորշում գործածության մեջ վերցնելու իմպերիալիստական ղեկավար շրջանների և, հատկապես, ԱՄՆ-ի գաղափարախոսների կողմից համառորեն պրոպագանդվող «կոմունիստական սպառնալիքի» ու «սովետական ազրեսիայի» մասին զառամյալ կեղծիքը: Սկսած այն ժամանակներից, երբ թուրքական կառավարող շրջանները սկսեցին ակտիվ աջակցություն ցույց տալ ամերիկյան իմպերիալիզմի հակասովետական ազրեսիվ ձգտումներին, կարելի է խոսել ոչ թե Սովետական Միության կողմից, այլ, Հնդկակառակը, թուրքիայի տերիտորիայից ՍՍՌՄ-ին սպառնացող վտանգի մասին: Այդ վտանգն իրական դարձավ 1952 թվականից, երբ թուրքիան հօժարակամ կերպով մտավ Հյուսիսատլանտյան ազրեսիվ բլոկի՝ ՆԱՏՕ-ի մեջ, թեպետ նա իր աշխարհագրական դիրքով ոչ մի առնչություն չունի Ատլանտիկայի հետ: Անցած ավելի քան տասը տարիների ընթացքում թուրքիայի տերիտորիան վեր է ածվում ՆԱՏՕ-ի ռազմա-ստրատեգիական կարևորագույն հենակետի, երկիրը դարձել է այդ ազրեսիվ խմբավորման խոշորագույն հրթիռային բաղաներից մեկը: Ազգակործան այն քաղաքականությունը, որը շուրջ 10 տարի վարում էին իշխանության գլուխ կանգության կուսակցության ներկայացուցիչները՝ Բայար-Մենդեսի կառավարությունը, մեծ աղետներ պատճառեց ամբողջ թուրք ժողովրդին: Այժմ, Մենդեսի կառավարության տապալումից հետո, առանձին թուրք ժուռնալիստներ համարձակվում են բացերաց գրել այն մասին, որ թուրք նախկին կառավարողների քաղաքական հետադիմական գիծը «Հակասել է թուրքիայի ազգային շահերին», մեծ վնաս է հասցրել ազգային արդյունաբերությանը, «ազգային արժանապատվությանը» և այլն: Վերը հիշված Ալի Քենանն իր հոդվածում եզրակացնում է, որ դեմոկրատական կուսակցությունը վարում էր պատերազմի ու ազրեսիայի քաղաքականություն:

«Դեմոկրատական կուսակցությունը, — գրում է Հեղինակը, — մտավ կորեական պատերազմի մեջ, որը Ամերիկան սկսել էր տնտեսական ճգնաժամից դուրս գալու համար»:

Զնանաչելով ազգերի ինքնորոշման իրավունքը, դեմոկրատական կուսակցությունն անցավ գաղութաբարների կողմը՝ ընդգեմ իրենց ազատագրության համար մարտնչող ճընշված ժողովուրդների: Միավորված ազգերի կազմակերպությունում նա մեծագույն եռանդով հետևում էր գաղութաբարների ցուցումներին: Բանդունգի կոնֆերանսում նա գաղութաբարների ներկայացուցիչն էր: Նա իր վրա վերցրեց գաղութաբարների շահերի պաշտպանությունը Միջին արևելքի արաբական ժողովուրդների դեմ մղվող նրանց պայքարում...

Դեմոկրատական կուսակցությունը բլոկներից մեկի հետ զաշինք կնքեց: Նա ենթարկվում էր այդ բլոկի բոլոր պահանջներին, որոնք բխում էին ՆԱՏՕ-ի, Բաղդադի պակտի և ՍԵՆՏՕ-ի նկատմամբ նրա պարտավորություններից: Զբաղարպարվելով այդ պակտերով՝ գաղութաբարների հետ համատեղ շահերն ապահովելու գործում, նա երկկողմանի համաձայնագիր կնքեց Ամերիկայի հետո:

Այնուհետև հեղինակն իր հոդվածում նշում էր, որ դեմոկրատական կուսակցությունը, հատկապես Թուրքիային հարեան երկրների նկատմամբ, սկսեց վարել «իսկական ագրեսիայի և թշնամանքի քաղաքականություն... Նա երկիրը վերածեց մեր... հարեանների դեմ ուղղված Արևմուտքի ուղղմական բազայի»<sup>19</sup> (ընդգծումը մերն է — Խ. Ս.):

Մի այլ թուրք ժուռնալիստ՝ Թուրքան Արփաթը 1962 թվականի մայիսի 18-ին «Վաթան» թերթում տպագրված «Խաղաղություն, թե՛ պատերազմ» վերնագիրը կրող հոդվածում մատնանշելով այն փաստը, որ «արևմտյան բլոկին բազաներ ու 500-հազարանոց բանակ տրամադրելով Թուրքիան խալիսլում էր իր տնտեսությունը», գալիս է այն եղբակացության, որ «ՆԱՏՕ-ի անդամ հանդիսանալով, Թուրքիան

<sup>19</sup> Տե՛ս „За рубежом“, № 30, 29. VII. 1961, стр. 26.

ավելի շատ օգուտ է բերում արևմտյան բլոկին, քան սեփական անվտանգությանը»: Սակայն հիշյալ հոդվածում առավել հետաքրքիր է այն, որ հեղինակը կասկածի տակ է վերցնում թուրքական պաշտոնական պրոպագանդայի կողմից տարածվող լուրերը՝ երկրին «մշտապես սպառնացող» վտանգի վերաբերյալ:

«...Այն հարցը,—գրում է հեղինակը,—թե արդյո՞ք որևէ մեկը սպառնում է Թուրքիային ներկայումս, երբ աշխարհը բաժանված է այսպես կոչված արևմուտքի և արևելքի, վիճելի է թվում»<sup>20</sup>:

Հասկանալի է, որ արևմտյան իմպերիալիստների հակառակետական քաղաքականությունն անվերապահորեն պաշտպանելու և Թուրքիայի տերիտորիան միջուկային պատերազմի թատերաբեմ դարձնելու անհեռատես կուրսը, որը հետևողականորեն անց են կացնում թուրքական կառավարողները, ոչ մի կերպ չի կարող նպաստել սովետա-թուրքական հարաբերությունների բարելավմանը, ընդհակառակը, մեծապես խանգարում է այդ նպատակի իրականացմանը: Թուրք պատմաբանները, սակայն, այս հարցում էլ կանգնած են սխալ տեսակետի վրա: Պրոֆ. Էսմերն, օրինակ, պնդում է, որ ՆԱՏՕ-ին և ազգեստիվ այլ խմբավորումներին Թուրքիայի մասնակցությունը «լուրջ վնաս չի հասցրել սովետա-թուրքական հարաբերություններին»<sup>21</sup>:

Եվ այդ այն ժամանակ, երբ նույնիսկ թուրքական մամուլը աներկիմաստ ձևով խոստովանում է Արևմուտքի հետ Թուրքիայի համագործակցության բուն նպատակները: Այդ տեսակետից ուշագրավ է թուրքական պաղեցիկ «Աքշամ» թերթում 1959 թվականի հունվարին տպագրված հոդվածը, որի հեղինակը պարծենկուտ կերպով գրում է հետեւյալը. «Արևմտյան մասնագետները, սովետական սահմանները զննելուց

<sup>20</sup> „Vatan“, 18. V. 1962.

<sup>21</sup> Prof. Dr. Ahmet Şükrü Esmer, Türk Diplomasisi, s. 102.

Հետո, եկան այն հետևության, որ հրթիռների արձակման ամենահարմար շրջանը թուրքիան է. շրածնային ոռումքերը, որ կնետվեն մեր տերիտորիայից, կարող են ոչնչացնել ողջ Ուկրաինան և Կովկասը։ Հենց դա է պատճառը, որ ամերիկացիներն այդքան ուժեղ հետաքրքրվում են մեզնով» (ընդգծումը մերն է—Ռ. Ս.):

Եվ իրոք, թուրքիան ԱՄՆ-ին հետաքրքրում է, առաջին հերթին, որպես հակասովետական ստրատեգիական կարեղորագույն հենակետ, որպես գաշնակից՝ ամերիկյան իմպերիալիզմի պատերազմական ծրագրերի իրականացման գործում։

Ամերիկյան պատմաբան Զոն Քեմփրելը ուղղակի խոստովանում է. «ԱՄՆ-ը թուրքիային օգնում է ոչ թե այն պատճառով, որ վերջինիս գյուղատնտեսությունը տրակտորների կարիք ունի, այլ որովհետև քուրքերը կայուն դաշնակիցներ են...»<sup>22</sup> (ընդգծումը մերն է—Ռ. Ս.):

Սովետական կառավարությունը թուրքիայի ղեկավար շրջանների ուշադրությունը բազմիցս հրավիրել է իմպերիալիստական ազրեսիվ խմբավորումներին մասնակցելու նրանց քաղաքականության լուրջ հետեանքների վրա։ Դեռևս նախքան թուրքիայի՝ ՆԱՏՕ-ի անդամ դառնալը, 1951 թվականի նոյեմբերի 3-ի իր հայտարարության մեջ սովետական կառավարությունը, մերկացնելով այդ ազրեսիվ ուազմական խմբավորման հակասովետական բնույթը, ընդգծում էր, որ «Ատլանտյան բլոկի կազմում թուրքիայի ներդրավումը, որն ի դեպ, Ատլանտիկայի հետ ոչ մի առնշություն չունի, չի կարող նըշանակել այլ բան, քան իմպերիալիստական պետությունների ձգտումը՝ թուրքական տերիտորիան օգտագործել Սովետական Միության սահմանների մոտ ազրեսիվ նպատակներով ուղարմական բազաներ ստեղծելու համար»<sup>23</sup>:

<sup>22</sup> John Campbell, Defense of the Middle East, New York, 1958, p. 266.

<sup>23</sup> „Правда“, 4. XI. 1951.

ՆԱՏՕ-ի մեջ մտնելուց հետո, շատ կարճ ժամանակում, Թուրքիան դարձավ նրա գրեթե ամենաազբեսիվ տրամադրված պետությունը, որն առանց տատանումների ոչ միայն մինչև վերջը պաշտպանում է այդ ռազմական բլոկի բոլոր պատերազմական միջոցառումները, այլև ինքն է հանդես գալիս սպառազինություններն արագացնելու առաջարկներով։ Այդ առթիվ Թուրքիայի պրեմիեր-մինիստր Մենդերեսին ուղղված սովետական կառավարության 1958 թվականի հունվարի 12-ի ուղերձում նշվում էր, որ ՆԱՏՕ-ի 1957 թվականի դեկտեմբերյան սեսիայում «թուրքական կառավարությունն ամենաազբեսիվ դիրքն էր գրավել ինչպես իր հարեանների նկատմամբ, այնպես էլ միջազգային ընդհանուր հարցերում՝ ամբողջությամբ վերցրած։ Հենց թուրքական պատվիրակության կողմից էին լսվում կոչեր ուժեղացնելու սպառազինությունների հետագա մրցավագքը և ՆԱՏՕ-ի բոլոր երկրներին, այդ թվում և Թուրքիային մատակարարելու օտարերկրյա միջուկային և հրթիռային գենքով»<sup>24</sup>:

Սովետական կառավարությունը տակավին Մենդերեսի օրոք կոնկրետ քայլեր է ձեռնարկել սովետա-թուրքական հարաբերությունները նորմալացնելու և բարելավելու ուղղությամբ։

Այսպես, 1957 թվականի ապրիլի 22-ին ՍՍՌՄ Գերագույն սովետի անունից Միության սովետի նախագահ Պ. Պ. Լոբանովը և Ազգությունների սովետի նախագահ Վ. Տ. Լացիսը դիմեցին Ազգային մեծ ժողովի նախագահ Ռեֆիկ Քորալթանին հետեւալ նամակով. «Նկատի ունենալով սովետա-թուրքական պառամենտական կապերի հաստատման ցանկալիությունը, որը կարող է նախատել ՍՍՌՄ-ի և Թուրքական Ռեսպուբլիկայի ժողովուրդների հարաբերությունների զարգացմանն ու ամրապնդմանը, Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության Գերագույն սովետը պատիվ ունի Թուրքիայի Ազգային մեծ ժողովի գեպուտատաների մի պատ-

<sup>24</sup> „Правда“, 14. I. 1959.

վիրակության և անձամբ Զեզ, պարոն նախագահ, Հրավիրել 1957 թվականին այցելել Սովետական Միություն՝ Զեզ և պատվիրակության համար հարմար ժամանակ:

ՍՍՌՄ Գերագույն սովետը հույս է հայտնում, որ Թուրքական մեջլիսի ղեպուտատների այդպիսի ուղևորությունը կօգնի Սովետական Միության և Թուրքական Ռեսպուբլիկայի միջև բարիդրացիական հարաբերություններ զարգացնելու վսեմ նպատակներին»<sup>25</sup>:

Թուրքական կառավարությունն ընդունեց այդ Հրավիրը, սակայն հետագայում այն անպատճախան թողեց:

Նույն 1957 թվականի հուլիսին Անկարայում սովետական դեսպան Ռիժովը սովետական կառավարությանը պաշտոնական առաջարկություն արեց ՍՍՌՄ-ի և Թուրքիայի պետական գործիչների միջև անձնական կոնտակտ հաստատելու վերաբերյալ՝ սովետա-թուրքական հարաբերությունների վիճակի մասին մտքերի փոխանակություն կատարելու և փոխադարձ առաջարկները, այդ թվում տնտեսական համագործակցության հարցը, քննարկելու համար: Սովետական Միության այս նախաձեռնությունը ևս Մենդերեսի կառավարության կողմից պատշաճ ուշադրության շարժանացավ:

1957 թվականի սեպտեմբերի 11-ին Մենդերեսին հանձնվեց ՍՍՌՄ Մինիստրների խորհրդի նախագահի ուղերձը՝ Սիրիայի դեմ ԱՄՆ-ի և Թուրքիայի կողմից նախապատրաստվող ներխուժման հետևանքով Մերձավոր և Միջին արևելքում ստեղծված լարված գրության մասին:

Սեպտեմբերի 30-ի իր պատասխան ուղերձում անդրադառնալով սովետա-թուրքական հարաբերություններին, թուրքական կառավարությունը դրանց բարելավման համար յուրահատուկ մի պայման էր առաջ քաշում, այն է, որ սովետական կառավարությունը հրաժարվի իր մերձավորարկելյան քաղաքականությունից, այսինքն այդ շրջանում խաղաղությունն ու

<sup>25</sup> «Սովետական Հայաստան», 26 ապրիլի, 1957:

անվտանգությունն ապահովելու համար մղած իր հետևողական պայքարից, իրենց անկախության համար գաղութատիրության դեմ արաբական երկրների պայքարին ամէն կերպ աջակցելու ջանքերից:

«Թուրքական կառավարությունը ցանկանում է,—նշվում էր սովետական կառավարության 1957 թվականի նոյեմբերի 22-ի ուղերձում,—որպեսզի Սովետական Միությունը հրաժարվի Մերձավոր և Միջին արևելքում վարած իր քաղաքականությունից: Սակայն ի՞նչ նա ի նկատի ունի տվյալ դեպքում: Ցանկանո՞ւմ է արդյոք թուրքական կառավարությունը, որ Սովետական Միությունը դադարի աջակցել իրենց անկախությունն ու սովերենությունը արտաքին ոտնձգություններից պաշտպանող արաբական ժողովուրդների արդարացի ազգային իդարին: Ցանկանո՞ւմ է արդյոք նա, որ ՍՍՌՄ-ը դադարի նպաստել նրանց պետական ինքնուրույնությունն ամրապնդելուն: Զգտո՞ւմ է արդյոք նա, որ Սովետական Միությունը հետեւի մի քանի գաղութային երկրների քաղաքականությունը և, օրինակ, խզի առևտուրը Սիրիայի և Եգիպտոսի հետ... թե՝ թուրքիայի կառավարությունն ուղում է, որ Սովետական Միությունն օգնություն ցուց տա արևմտյան երկրներին՝ գաղութարարների նպատակներին ծառայող Բաղդադի ռազմական խմբական խմբավորման մեջ Մերձավոր և Միջին արևելքի երկրներին ներքաշելու նրանց փորձերում...»: «Եթե այդ է նկատի առնվում,—ասվում էր այնուհետև սովետական նոտայում,—արդյո՞ք շահագանց շատ բան չեն ցանկանում Սովետական Միությունից՝ որպես պայման սովետա-թուրքական բարեկամությունը վերականգնելու համար...»<sup>26</sup>:

Այսպիսով, սովետական կառավարության նախաձեռնությունը՝ սովետա-թուրքական հարաբերությունները բարիդրացիական ու բարեկամական դարձնելու ուղղությամբ, անպատճիւան մնաց և արձագանք շգտավ թուրքական կառավարող շրջաններում: Անդրադառնալով այս հարցին, թուրք

<sup>26</sup> „Правда“, 27. XI. 1957.

Հեղինակները որպես «դրական» երեսով են ներկայացնում այն փաստը, որ Թուրքիայի կառավարությունը ոչ մի քայլ չի կատարում ՍՍՌՄ-ի հետ հարաբերությունները նորմալացնելու համար:

«Թուրքական ղեկավարները՝ Բայարը և Մենդերեսը,— գրում է Քըլըջը,—իրենց բազմաթիվ հրապարակային ելույթներում հասկանալի դարձրին, որ իրենք չեն գայթակղվի տրնտեսական ու ֆինանսական օգնության սովետական առաջարկներով։ Թուրքիան նույնիսկ շպատասխանեց սովետաթուրքական առևտրական հարաբերություններն ընդլայնելու առաջարկներին»<sup>27</sup>:

1960 թվականի մայիսյան հեղաշրջման հետևանքով իշխանության եկած թուրքական նոր կառավարության արտաքին քաղաքականությունը, ինչպես ցույց են տալիս փաստերը, էապես ոչնչով չի տարբերվում Թուրքիայի նախկին ղեկավարների հակագային, երկրի համար կործանարար քաղաքականությունից։ Թուրքիան շարունակում է ամենաակտիվ մասնակցությունն ունենալ ազրեսիվ ուղղմական խմբավորումներում՝ ԱԱՏՕ-ի և ՍԵՆՏՕ-ի մեջ։ Թուրքիայի նոր ղեկավարները բազմիցս աներկիմաստ հայտարարություններ են արել այն մասին, որ իրենք ամենակին էլ մտադիր չեն շեղոք քաղաքականություն վարելու՝ հրաժարվելով երկիրը ծառացնել ուղղմական ազրեսիվ նպատակներին։ Այսպես, 1961 թվականի հունիսին թուրքական պետության ղեկավար գեներալ Գյուլսելը հունական «Դեյլի պոստ» թերթին տված ինտերվյուի մեջ, անդրադառնալով Թուրքիայի արտաքին քաղաքականությանը, ընդգծել է. «Զի կարող խոսք անգամ լինել այն մասին, որ երկիրը շեղոք քաղաքականություն վարի։ ՆԱՏՕ-ի շրջանակներում Ամերիկայի և Արևմուտքի այլ տերությունների հետ Թուրքիայի համագործակցությունը կազմում է նրա արտաքին քաղաքականության հիմքը»<sup>28</sup>:

<sup>27</sup> Alteratur Kiliç, p. 204.

<sup>28</sup> Տե՛ս «Սովետական հայաստան», 22 հունիսի, 1961:

1961 թ. նոյեմբերի ընտրություններից հետո իշխանության գլուխ անցած Խամեթ Խնոնյովի կառավարությունը շարունակում է հետևել Թուրքիայի նախկին կառավարողների կողմից անցկացվող արտաքին քաղաքական կուրսին։ Հատկանշական է պրեմիեր-մինիստր Խնոնյովի այն հայտարարությունը, որ նա արել էր նախքան կառավարության գլուխ անցնելը։ Իր ելույթներից մեկում անդրադառնալով իր գլխավորած ժողովրդա-հանրապետական կուսակցության քաղաքական պլատֆորմին, Խնոնյուն ընդգծել էր. «Ես լսել եմ, որ օտարերկրացիներին ասում են այն մասին, որ եթե ժողովրդա-հանրապետական կուսակցությունը իշխանության հասնի, նա չեղոքության քաղաքականություն կվարի։ Այդ խոսակցությունները բացարձակ կեղծիք են։ Այդ մենք սկսեցինք համագործակցության քաղաքականություն վարել. 1939 թվականին Անգլիայի ու Ֆրանսիայի, իսկ 1947 թվականին՝ Ամերիկայի հետ։ Մենք իշխանությունը թողեցինք նախքան այն մոմենտը, երբ սկսվեց ՆԱՏՕ-ի էվոլյուցիան 1952 թվականին, այն ստադիայում, երբ կենսագործվում էր Տրումենի գոկտրինան։ Այդ ժամանակից ի վեր մենք հավանություն ենք տալիս ու պաշտպանում Թուրքիայի դիրքը, որպես ՆԱՏՕ-ի հավատարիմ դաշնակցի և Ամերիկայի նվիրված բարեկամի»<sup>29</sup>։

Եվ իրոք, իշխանության գլուխ անցնելուց հետո, Խնոնյովի կառավարությունը, արտաքին քաղաքականության ասպարեզում ամբողջությամբ հետևելով Թուրքիայի նախկին ղեկավարների անցկացրած գծին, վարում է ազրեսիվ տերությունների հետ այնպիսի «համագործակցության» քաղաքականություն, որը Բայար-Մենդերեսի կառավարությանը հասցըք քաղաքական ամոթալի կրախի։

<sup>29</sup> „За рубежом“, № 30, 29. VII. 1962, стр. 26.

## Ե Զ Ր Ա Փ Ա Կ Ո Ւ Մ

Այսպիսով, ժամանակակից թուրք պատմագրության մեջ սովետա-թուրքական հարաբերությունների պատմության հիմնական հարցերը լուսաբանվում են հակագիտական դիրքերից, խեղաթյուրվում է Թուրքիայի նկատմամբ Սովետական Միության վարած քաղաքականությունը:

Միաժամանակ, թուրք պատմաբանների աշխատություններում բերված փաստերը, քաղաքական ղեկավար գործիչների հուշերում տեղ զտած խոստովանությունները, արխիվային և այլ նյութերը վկայում են այն մասին, որ Թուրքիայի կառավարող շրջանների արտաքին քաղաքական գիծը Սովետական Միության նկատմամբ գրեթե չի փոփոխվել. այն որոշ շրջանում եղել է բարիդրացիական, սակայն միշտ անհետելվողական ու տատանվող, և ընդհանուր առմամբ արտահայտել է Թուրքիայի բուրժուա-կալվածատիրական ազգայնական շրջանների դասակարգային ատելությունը դեպի սոցիալիզմի առաջին երկիրը և հակասովետական բովանդակությամբ բնորոշ պանթուրքական գաղափարները:

Սովետա-թուրքական հարաբերությունների հաստատման ժամանակաշրջանի պատմության հարցերը լուսաբանելիս թուրք հեղինակները ոչ միայն անտեսում են սովետական պետության կողմից Թուրքիային ցույց տրված դրամական, ուազմական ու բարոյական անշահախնդիր օգնությունը, որը մեծապես նպաստեց թուրք ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հաղթանակին, այլև սկզբունքային տարրերություն շեն տեսնում ցարական և Սովետական Ռուսաստանի արտաքին քաղաքականության միջև Մինչդեռ, փաստերը վր-

կայում են, որ սկզբունքային, արմատական տարբերություն չի եղել Սովետական Միության հանդեպ հենց թուրքիայի ղեկավար շրջանների վարած քաղաքականության միջև: Եթե օսմանյան կայսրության կառավարողները Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո դրսկորեցին իրենց հակասովետական էությունը, գիշատիչ արշավանք ձեռնարկեցին Անդրկովկասում Բաքվի հերոսական կոմունան ճընշելու և իրենց պանթուրքական նվաճողական ծրագրերն իրականացնելու համար, ապա նույն դիմու տարան նաև թուրքիայի նոր ղեկավարները՝ քեմալականները, որոնք արտահայտում էին մի կողմից բուրժուազիայի ազգային անկախության ձրգտումները, պատերազմ մղում ինչպես Անտանտի, այնպես էլ թուրքական սովորականի դեմ, իսկ մյուս կողմից՝ նրա մոլի շուրջինիստական էությունը: Դրանով պետք է բացատրել Արևելքում վարած նրանց հակասովետական քաղաքականությունը, որը փաստորեն երիտթուրքերի վաղաքականության շարունակությունն էր: Վ. Ի. Լենինը 1920 թվականի դեկտեմբերին նշում էր, որ նույն տարվա աշնանը Անդրկովկասում ձեռնարկած թուրքական արշավանքը որոշակիորեն ընդգծված հակասովետական բնույթ ուներ. «Թուրքական հարձակումն ուղղված էր մեր դեմ... Թուրքիայում իշխանության գլուխ են կանգնած կադետները, օկտյաբրիստները, նացիոնալիստները, որոնք պատրաստ են մեզ ծախել Անտանտին»<sup>1</sup>:

Թուրք պատմաբանների աշխատություններում աղավաղված ձեռվ է ներկայացվում նաև կողանի կոնֆերանսից մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբն ընկած ժամանակաշրջանի սովետա-թուրքական հարաբերությունների պատմությունը: Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերություններ պահպանելը, միջազգային ասպարեզում, տընտեսական ու մշակութային բնագավառներում համագործակցելը նրանք դիտում են որպես Սովետական Միության թուրու-

<sup>1</sup> В. И. Ленин, Заключительное слово по докладу о концессиях на фракции РКП(б) VIII съезда Советов 21 декабря 1920 г. Полное собр. соч., изд. пятое, т. 42, стр. 125.

թյան նշան։ Այնինչ, փաստերը հաստատում են, որ ինքը Թուրքիան այդ տարիներին տակավին թույլ էր, ուստի և հոգ էր տանում ՍՍՌՄ-ի հետ նորմալ հարաբերություններ պահպանելու մասին։ Սակայն նույնիսկ այդ շրջանում, մասնավորապես 30-ական թվականներից, Թուրքական բուրժուազիայի դասակարգային ատելությունը սոցիալիզմի երկրի հանդեպ իր արտահայտությունն էր գտնում բազմաթիվ ոչ-բարեկամական գործողություններում։ Հենց նույն տարիներին Թուրքիան գործուն մասնակցություն ունեցավ Սովետական Միության դեմ ուղղված խմբավորումներին՝ Բալկանյան Անտանտի (1934 թ.) ու Սաադարադի պակտի մեջ (1937 թ.), բացահայտ հակասովետական դիրք գրավեց 1936 թվականի Մոնտերեի կոնֆերանսում, մերձեցավ ֆաշիստական Գերմանիայի հետ և այլն։

Ժամանակակից թուրք պատմագրությունը կոպիտ կերպով նենդափոխում է Սովետական Միության քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին։ Թուրքական զեկավար շրջանների հակասովետական, թշնամական գործողությունները, նրանց գրաված բացահայտ պրոֆաշխստական դիրքը ներկայացվում է նույնիսկ, որպես «ներզրում» Հայրենական մեծ պատերազմում ՍՍՌՄ-ի ձեռք բերած հաղթանակի գործում։ Հրապարակված դիվանագիտական փաստաթղթերը, արխիվային նյութերը, թուրք քաղաքական առանձին գործիչների ու հեղինակների մեջբերած մերկացուցիչ փաստերը, սակայն, համոզում են այն բանում, որ պրոֆաշխստական քաղաքականություն վարելով, Թուրքիայի կառավարող շրջանները հույս ունեին Գերմանիայի օգնությամբ իրականացնել իրենց պանթուրքական նվաճողական ձգտումները։

Հետպատերազմյան ժամանակաշրջանի սովետա-թուրքական հարաբերությունները ևս թուրք պատմաբանները լուսաբանում են միտումնավոր ձևով։ Թուրքիայի հետ հարաբերությունների վատթարացման ու սրման մեղքը նրանք անհիմն կերպով բարդում են Սովետական Միության վրա, պնդում, որ

վերջինս «մշտական սպառնալիք» է հանդիսանում Թուրքիայի անվտանգությանը և այլն: Մինչեռ, փաստերը վկայում են, որ հենց Թուրքիայի գործողություններն են պատերազմական վտանգ ներկայացնում, որ Թուրքիան քաղաքական ու ռազմական սերտ կապերի մեջ մտավ իմաստերիալիստական ամենազորեղ տերության՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ դարձյալ ի նկատի ունենալով, որ միայն վերջինիս օգնությամբ հնարավոր կլինի ապագայում իրագործել հակասովետական այն ծրագրերը, որոնք ձախողվեցին ֆաշիստական Գերմանիայի պարտությամբ:

Թուրքիայի ներկայիս կառավարության արտաքին քաղաքականությունը, ինչպես վկայում են փաստերը, էակնառնչով չի տարբերվում Բայար-Մենդերեսի խմբի քաղաքականությունից:

1961 թվականի նոյեմբերից իշխանության գլուխ է կանգնած ժողովրդա-հանրապետական կուսակցության պարագլուխ իսմեթ ինոնյուի կառավարությունը, որը, սակայն, շարունակում է դեմոկրատական կուսակցության գլխավորած կառավարության քաղաքականությունը: Թուրքիայի նոր ղեկավարները չեն թաքցնում, որ իրենց քաղաքական գիծը սոսկ նախորդների վարած արտաքին քաղաքականության շարունակությունն է: Այդ բանը հաճախ ընդգծվում է նաև թուրքական մամուլի էջերում: Ահա, օրինակ, ինչ էր գրում կիսապաշտոնական «ԶումՀուրիեթ» թերթը 1963 թվականի փետրվարի 12-ին՝ թուրքական պառլամենտական պատվիրակության՝ Սովետական Միություն այցելելու նախօրյակին.

«Մենք անհրաժեշտ չենք գտնում կրկնել այստեղ նԱՏՕ-ի և կոլեկտիվ անվտանգության սիստեմի հետ Թուրքիայի ունեցած կապերի մասին: Թուրքիայի արտաքին քաղաքականությունը՝ Աթաթյուրքի ժամանակներից մինչև մեր օրերը, միշտ էլ վերկուսակցական կատեգորիա է եղել, և իշխանության եկած ամեն մի կառավարություն, ինչպես և ընդդիմագիր կողմը, արտաքին քաղաքականության մեջ հետևողականորեն պաշտպանել է միանույն գիծը»<sup>2</sup>:

<sup>2</sup> „Cumhuriyet“, 12. II. 1963.

Վերջին շրջանում թուրքական մամուլի էջերում վերստին ծայր առած հակասովետական կամպանիան ևս գալիս է հաստատելու, որ թուրքական ղեկավարները ներկայումս մտադիր չեն հրաժարվել Սովետական Միության նկատմամբ վարած իրենց քաղաքականությունից, որը շի համապատասխանում թուրք ժողովրդի ազգային շահերին և դժգոհություն է առաջ բերում Թուրքիայի ղեմոկրատական շրջաններում:



Բ Ա Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Յ Ց Ո Ւ Ն

եջ

Ն ե ր ա ծ ու թ յ ո ւ ն . . . . .	5
Սովետական հարաբերությունների սկզբնավորման ժամանակաշրջանի պատմության հակագիտական լուսաբանումը . . . . .	11
Սովետական Միության արտաքին քաղաքականության պատմության խեղաթյուրումը (1924—1939 թթ.) . . . . .	44
Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիների սովետա-թուրքական հարաբերությունների պատմության նենդափոխումը . . . . .	82
Հետպատերազմյան տարիների սովետա-թուրքական հարաբերությունները թուրք հեղինակների գնահատմամբ . . . . .	108
Ե գ ր ա փ ա կ ու մ . . . . .	126

ՌՈՒԲԵՆ ԳԱՐԵԳԻՆԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆ  
ՐՈՒԲԵՆ ԳԱՐԵԳԻՆՈՎԻՉ ՍԱԱԿՅԱՆ

Սովետա-բուրքական հարաբերությունների պատմության  
հակագիտական լուսաբանումը ժամանակակից  
բուրք պատմագրության մեջ

Տպագրվում է Հայկական ՍՍՌ ԳԱ  
արևելագիտուրյան սեկտորի գիտական խորհրդի  
հանձնարարությամբ

Պատ. Խմբագիր՝ Հ. Գ. Ի՞ն ճ ի կ յ ա ն  
Հըսա. Խմբագիր՝ Ռ. Խ. Մ ա ն ո յ ա ն  
Նկարչական ձեռավորումը՝ Կ. Կ. Ղ ա փ մ զ ա ր յ շ ն ի  
Տիբ. Խմբագիր՝ Հ. Լ. Գ ո ր ո յ ա ն  
Վերսուղող սրբագրիչ՝ Զ. Խ. Օ ր մ տ ն յ ա ն

գ.թ 00599, հրամ. № 2394, եւել № 896, պատվիր 110, տպաքանակ 10000>

Հանձնված է արտադրության 4/X 1963 թ., ստորագրված է տպագրության 27/V 1964 թ., Տպագրական Տ.25 մամուլ, հրատ. 5.36 մամուլ  
Քաղթ 84×106<sup>1/22</sup> Գինը 32 կուգ.

ՀՍՍՌ ԳԱ հրատարակչության տպարան, երևան, Բարեկամության, 262

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220034816

9 1 6 6 3 2 4.

II  
34816